



CRRC
Armenia



Հրանտ Մաթևոսյան
HRANT MATEVOSSIAN FOUNDATION

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ. ՇԻՐԱԿ, ԼՈՌԻ, ՏԱՎՈՒՇ

Աղքատության նվազեցում համայնքներում.
Կիրառական մոտեցումներ



ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿ, ԼՈՌԻ, ՏԱՎՈՒՇ



Community Poverty Reduction “Know How” NEAR-TS/2020/421-104

Աղքատության նվազեցում համայնքներում. կիրառական մոտեցումներ
Երևան 2022

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ (EDRC)



ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ.
ՇԻՐԱԿ, ԼՈՌԻ, ՏԱՎՈՒՇ

Սույն փաստաթուղթը մշակվել է Տնտեսական զարգացման և հեղափոխությունների կենտրոնի (EDRC) կողմից «Աղքատության նվազեցում համայնքներում. կիրառական մոտեցումներ» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է Եվրոպական միության ֆինանսավորմամբ՝ Հեղափոխական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան հիմնադրամ (CRRC), Եվրասիա համագործակցություն հիմնադրամ (EPF) և Հրանտ Մաթևոսյան հիմնադրամ կազմակերպությունների հետ համագործակցությամբ:

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԽՈՒՄԲ՝
Կարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Լիլիթ ՀԱԿՈԲՅԱՆ

Ծրագրային թիմը շնորհակալություն է հայտնում Մուշեղ Թումասյանին մասնագիտական աջակցության համար, ինչպես նաև Մանե Արշալույսյանին՝ զեկույցի դիզայնի աշխատանքների իրականացման համար:

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ:

Բովանդակության համար պարասխանաբանություն է կրում Տնտեսական զարգացման և հեղափոխությունների կենտրոնը և պարտադիր չէ, որ արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Հրապարակումից օգտվելիս պատշաճ հղումը պարտադիր է:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել՝ ՏՀՀԿ գրասենյակ՝ +374 (0) 55 540 289, info@edrc.am, www.edrc.am:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱՍՀՆ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ԲՅ	«Բյուջեներ և բնակչության բերեկեցություն» հետազոտություն
ԵՄ	Եվրոպական միություն
ԶԼՄ	Զանգվածային լրատվության միջոցներ
ԾԲ	Ծրագրային բյուջետավորում
ԿԳՄՍՆ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ՀԱ	Հաշմադամություն ունեցող անձ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
մլն	միլիոն
մլրդ	միլիարդ
ՈՎՀ	Ոչ վարակիչ հիվանդություններ
ՎԿ	Վիճակագրական կոմիտե
ՏՁՀԿ	Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն
ՏԿԵՆ	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՏՏ	Տնային տնտեսություն
ՓՄՁ	Փոքր և միջին ձեռնարկատիրություն
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն
ՖՆ	Ֆինանսների նախարարություն




Բովանդակություն



ԱՄՓՈՓԱԳԻՐ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՅԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ	5
1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	14
2. ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿ	16
3. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿ	19
3.1. Ռազմավարական քաղաքականությունների շրջանակը.....	20
3.2. Բյուջետային շրջանակը	28
3.3. Համայնքային բյուջեները և աղքատության հաղթահարման պոտենցիալը	37
4. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	42
4.1. Ժողովրդագրություն	43
4.2. Կրթամակարդակ.....	45
4.3. Գործազրկություն և զբաղվածություն	45
4.4. Միգրացիա	49
4.5. Եկամուտներ և բարեկեցություն	50
5. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ, ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԵՎ ԿԱՐԻՔ	56
5.1. Հանրային ծառայությունների օգտագործումը	57
5.2. Հանրային ծառայությունների կարևորության, հասանելիության և կարիքի գնահատում	69
5.3. Ծառայությունների բարելավման ուղղություններ	75
ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ	79
ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՑԱՆԿ	81
ՀԱՎԵԼՎԱԾ 1.	82
Հետազոտության ընտրանքն ըստ քաղաքային և գյուղական բնակավայրերի	82
ՀԱՎԵԼՎԱԾ 2.	83
Ռազմավարական քաղաքականություններն ամփոփող հիմնական ռազմավարական փաստաթղթերը	83
ՀԱՎԵԼՎԱԾ 3.	84
ՀՀ ԱՍՀՆ Զբաղվածության ծրագրի կառուցվածքը և ֆինանսավորման ծավալները 2020-2022թթ.	84





ԱՄՓՈՓԱԳԻՐ
ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ
ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ



Եվրոպական միության աջակցությամբ իրականացվող «Աղքատության նվազեցում համայնքներում. կիրառական մոտեցումներ» ծրագրի շրջանակներում S2ՀԿ-ն 2021-2022 թվականների ընթացքում իրականացրել է Հայաստանի Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերում բազմաչափ աղքատության կրճատմանն ուղղված պետական բյուջետային ծրագրերի և դրանց ազդեցությունների ուսումնասիրություն: Մասնավորապես, քննության են ենթարկվել բազմաչափ աղքատության վրա հնարավոր ուղղակի ազդեցություն ունեցող ռազմավարական և բյուջետային քաղաքականությունների շրջանակները և դրանց ազդեցությունները, ուսումնասիրվել են շահառու մարզերի բնակչության հիմնական կարիքները և դրանց բավարարմանն ուղղված հանրային ծառայությունները, դրանց հասանելիության և օգտագործման մակարդակները: Արդյունքերը ներկայացվում են սույն հաշվետվության առանձին բաժիններում, իսկ ստորև դրանք ամփոփ խմբավորված են ըստ հիմնական ուղղությունների:

Ռազմավարական և բյուջետային քաղաքականությունների շրջանակի նկարագիրը

- Բազմաչափ աղքատության կրճատմանն ուղղված քաղաքականությունները ձևակերպված են մի շարք սոցիալական, տնտեսական և ենթակառուցվածքային զարգացման պետական ռազմավարական փաստաթղթերում՝ ռազմավարություններ, հայեցակարգեր և ծրագրեր: Դրանք արտահայտված են նաև համապատասխան ոլորտները կարգավորող պետական մարմինների կողմից իրականացվող բյուջետային ծրագրերում:
- Բազմաչափ աղքատության վրա ուղղակիորեն ազդեցություն ունեցող բյուջետային ծրագրերի/միջոցառումների ֆինանսավորումը 2022 թվականին կազմում է ՀՀ պետական բյուջեի 17.2 տոկոսը կամ 382.0 մլրդ դրամ: Այս ծրագրերի կառուցվածքում գերակշռում են կրթության և բնակչության հիմնական կարիքներին ուղղվող ռեսուրսները:
- Կրթության մատչելիության նպատակ հետապնդող բյուջետային հիմնական ծրագ-

րերին ուղղվող ֆինանսական միջոցներն էապես աճել են՝ մոտ 25.9 մլրդ դրամով: Արդյունքում նախատեսվում է, որ կաճեն դպրոցական կրթության համակարգում ընդգրկվածության, կրթական հաստատությունների ֆիզիկական հասանելիության ցուցանիշները: Արդեն 2024 թվականի համար թիրախավորվում են կրթական ծառայությունների որակի և հասանելիության էական աճ՝ պարտադիր կրթության համակարգում 99 տոկոս ընդգրկվածություն, նախադպրոցական հաստատություններում՝ 70 տոկոս ընդգրկվածություն, մարզերում բոլոր նախակրթարանների և տարրական դասարանների սովորողներին կայուն դպրոցական սննդով ապահովում:

- Բնակչության հիմնական կարիքների բավարարմանն ուղղված պետական միջամտություններին ուղղվող միջոցները ևս աճում են 8.3 մլրդ դրամով՝ հանգեցնելով այս ծրագրերի շրջանակներում աջակցություն ստացող ընտանիքների և անձանց թվաքանակի կտրուկ աճի:
- Բնակչության բնակարանային պայմանների բարելավման ծրագրերի արդյունքում բնակարանի ապահովման աջակցություն կստանան ավելի քան 16,000 ընտանիքներ, որը նախորդ տարվա մակարդակը գերազանցում է ավելի քան 2 անգամ: Շահառուների թվաքանակի կտրուկ աճը պայմանավորված է երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովման աջակցության շահառուների թվաքանակի աճով:
- Աշխատանքի և զբաղվածության կարիքին է ուղղված Զբաղվածության ծրագիրը: Ծրագրի նպատակը բնակչության կայուն և ժամանակավոր զբաղվածության ապահովմանը միտված պայմանների ստեղծումն է: Այս ուղղությամբ ծախսվող պետական ռեսուրսները բավականին համեստ են և կազմում են ընդամենը 1.9 մլրդ դրամ: Ծրագրին ուղղված ռեսուրսների ավելի քան 45.5 տոկոսը նախատեսված է ուղղել աշխատաշուկայում անմրցունակ անձանց անասնապահությամբ զբաղվելու համար աջակցության տրամադրմանը և երեխայի խնամքն աշխատ-

տանքին զուգահեռ կազմակերպելու համար դայակի ծառայությունների տրամադրմանը:

- Առողջապահական կարիքին ուղղվող պետական բյուջետային ռեսուրսները նախորդ տարվա համեմատությամբ աճել են: Աճը գերազանցապես պայմանավորված է սոցիալապես անապահով և առանձին խմբերի անձանց բժշկական օգնությանը և մոր ու մանկան առողջության պահպանմանն ուղղվող ռեսուրսների ավելացմամբ: Էապես աճել են մանկաբարձական բժշկական օգնությունից օգտվողների քանակը: Աճել է նաև մարզեր ուղեգրվող բժիշկների թվաքանակը՝ նախորդ տարվա 9 բժշկի փոխարեն մարզեր են ուղեգրվել 50 բժիշկ:
- Շահառու մարզերի համայնքային բյուջետային եկամուտների մակարդակը, դրանց դինամիկան և կառուցվածքը վկայում են, որ համայնքներին բնորոշ է եկամուտների գեներացման ցածր տնտեսական ներուժ: Ընդհանուր առմամբ, Տավուշի և Շիրակի մարզերը մեկ շնչի հաշվով ամենացածր եկամուտներ գեներացնող մարզերի թվում են: Շահառու բոլոր երեք մարզերում սեփական եկամուտների կշիռը նախորդ տարվա համեմատությամբ դրսևորել է աճի վարքագիծ, սակայն այս մարզերն աչքի են ընկնում սեփական եկամուտների ցածր մակարդակով, մասնավորապես՝ Լոռի և Տավուշը:
- Համայնքներում խիստ ցածր է ֆոնդահայթայթման և տարբեր զարգացման ռեսուրսներից օգտվելու կարողությունները: Դրամաշնորհների կազմում գերակշիռ մասը՝ ավելի քան 97.6 տոկոսը կազմում են ներքին դրամաշնորհները, այսինքն՝ պետական բյուջեից համայնքների բյուջեներին տրամադրվող դոտացիաները և սուբվենցիաները: Արտաքին դրամաշնորհների մակարդակը շատ փոքր է:
- Կառավարության կողմից հաստատված սուբվենցիոն ծրագրերի համաձայն 2022 թվականին շահառու մարզերում սուբվենցիաների ծավալները զիջում են 2019-2021 թվականների միջին տարեկան մակարդակները:
- Իրականացվող սուբվենցիոն ծրագրերն

իրենց բնույթով գերազանցապես բազմաչափ աղքատության կրճատման պոտենցիալ ունեն: Նկատենք, որ բոլոր երեք մարզերում մեծ է համայնքային ճանապարհների կառուցմանը և վերանորոգմանը միտված ծրագրերի կշիռը: Հետևում են փողոցային լուսավորության համակարգերի, խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցման և նորոգման ծրագրերը:

- Համայնքների ընդամենը ծախսերի կառուցվածքում շարունակում են մեծ կշիռ կազմել համայնքապետարանի պահպանմանը և համայնքային ծառայողների աշխատավարձերին ուղղվող ծախսերը, չնայած այս ցուցանիշը վերջին տարիներին հիմնականում նվազման վարքագիծ է դրսևորում: Հաջորդում են «Կրթություն», «Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ» և «Տնտեսական հարաբերություններ» գործառական ոլորտները:
- Համայնքային կրթական ծախսերի գերակշիռ մասը՝ մոտ 70.4 տոկոսն ուղղվում է նախադպրոցական կրթությանը: Սոցիալական պաշտպանության ծրագրերի իրականացմանն ուղղվող բյուջետային ռեսուրսները կազմում են մոտ 1 տոկոս: Առողջապահական ծրագրեր համայնքների կողմից գրեթե չեն իրականացվում:
- Ռազմավարական քաղաքականությունների շրջանակը չնայած քննարկվող ոլորտներում սահմանում է քաղաքականությունների տարբեր մակարդակների նպատակներ, սակայն հաճախ է թերանում սահմանել նպատակների չափման և ձեռք բերման համար համապատասխան չափորոշիչներ, թիրախային մակարդակներ և ժամկետներ: Նման իրավիճակը հնարավորություն է ստեղծում խուսափել կամ հետևողական չլինել սահանված արդյունքների ձեռք բերման նկատմամբ:
- Իրականացվող բյուջետային ծրագրերը միշտ չէ, որ ընդգրկում են համապատասխան քաղաքականություններով սահմանված նպատակները և արդյունքները, և նպաստում դրանց իրականացմանը:

- Բյուջետային ծրագրերի՝ քաղաքականություններին համապատասխանության պարբերական գնահատումը, սահմանված քաղաքականությունների կատարման նկատմամբ վերահսկողությունը և պատասխանատվությունը՝ ռազմավարական քաղաքականությունների կենսունակության և ժառանգականության ապահովման կարևոր խնդիրներից են, որոնք չնայած անտեսված չեն և որոշակի պահանջ կա կառավարության կողմից ձևակերպված, այնուամենայնիվ մնում են չիրագործված:
- Ռազմավարական և բյուջետային քաղաքականությունների բովանդակության շուրջ հանրային երկխոսությունը կրում է ոչ բավարար որակ: Աստիճանաբար աճում է ՔՀԿ-ների դերը և ակտիվ մասնակցության կարևորությունը թե՛ բյուջետային ծրագրերի, թե՛ քաղաքականությունների իրականացման մոնիտորինգի և գնահատման գործընթացներում:

Հանրային ծառայությունների օգտագործումը, հասանելիությունը և կարիքը

- Շահառու մարզերի կազմում կրթության բարձր մակարդակով աչքի է ընկնում Շիրակի մարզը: Ընդ որում, բոլոր երեք մարզերում կանանց կրթամակարդակն ավելի բարձր է տղամարդկանց համեմատ:
- Գործազրկության մակարդակն ամենացածրը Շիրակի գյուղական բնակավայրերում է՝ 16.7 տոկոս, իսկ ամենաբարձրը՝ Լոռու քաղաքային բնակավայրերում՝ 37.7 տոկոս: Կանանց և տղամարդկանց գործազրկության մակարդակը համապատասխանաբար կազմում է 35.7 և 14.4 տոկոս: Կանանց գործազրկության ամենաբարձր մակարդակն արձանագրվել է Տավուշում, իսկ տղամարդկանց գործազրկության ամենացածր մակարդակը՝ Շիրակում:
- Մեծ է սեփական գյուղացիական տնտեսություններում և պետական/համայնքային հիմնարկներում զբաղվածների կշիռը՝ համապատասխանաբար 35.2 և 30.5 տոկոս: Ընդ որում, սեփական գյուղացիական

տնտեսությունում զբաղվածությունը բարձր է մասնավորապես Լոռու մարզում, ինքնազբաղվածությունը համեմատաբար բարձր է Շիրակում, իսկ պետական/համայնքային հիմնարկներում և այլ մասնավոր հատվածում զբաղվածությունը՝ Տավուշում:

- Տնային տնտեսությունների (այսուհետ նաև՝ ՏՏ) գնահատականներով, աղքատությունը 2021 թվականին բոլոր երեք մարզերում խորացել է: Իրենց աղքատ կամ ծայրահեղ աղքատ գնահատած ՏՏ-ների կշիռը Լոռիում աճել է 5.8, Շիրակում՝ 1.0, իսկ Տավուշում՝ 4.5 տոկոսային կետով: Զուգահեռ նվազել են իրենց «ապահովված» համարող ՏՏ-ները՝ Լոռիում՝ 1.3, Շիրակում՝ 0.6, իսկ Տավուշում՝ 2.5 տոկոսային կետով:
- Ընդհանուր առմամբ, Լոռու, Տավուշի և Շիրակի բնակչությունը ծանրաբեռնված է պարտքային պարտավորություններով: ՏՏ-ների 65.6 տոկոսն ունեն վարկային կամ պարտքային տարբեր պարտավորություններ: Ընդ որում, մեկ ՏՏ հաշվով պարտքային պարտավորությունների միջին մեծությունը կազմում է մոտ 1.9 միլիոն դրամ: Առկա պարտքի սպասարկման բեռը ավելի ծանր են գնահատում Լոռու մարզում:
- Շահառու մարզերի ՏՏ-ների մոտ 29 տոկոսը թերսնվում է: Իրավիճակը համեմատաբար ավելի սուր է Լոռու մարզում, որի գյուղական համայնքներում սննդի ծախսերը «ընդհանրապես» կամ «գրեթե» չեն կարողանում բավարարել ՏՏ-ների 37.6 տոկոսը, իսկ քաղաքային բնակավայրերում՝ 35.9 տոկոսը:
- Առողջապահական ծախսերը չեն կարողանում բավարարել շահառու մարզերի ՏՏ-ների 51 տոկոսը:
- Երեխաների խնամքի և սոցիալական աջակցության ծառայություններից ամենահասանելին մանկապարտեզների ծառայություններն են: Դրանցից օգտվում են շահառու մարզերի 2-6 տարեկան երեխաների 43.5 տոկոսը: Նախադպրոցական և դպրոցական կրթության որևէ ծառայություններից չի օգտվում 2-6 տարեկան երեխաների 37.7

տոկոսը, կամ համապատասխան տարիքային խմբի երեխաներ ունեցող SS-ների՝ 43.6 տոկոսը:

- Հետազոտությունում ընդգրկված բնակավայրերից 72 տոկոսում, առկա է դպրոց չհաճախող հաշմանդամություն ունեցող առնվազն մեկ երեխա, իսկ 48 տոկոսում՝ ոչ հաշմանդամություն ունեցող դպրոցական տարիքի առնվազն մեկ երեխա, որը դպրոց չի հաճախում:
- Երեխաների խնամքի և երկրում ժողովրդագրական իրավիճակի բարելավմանն ուղղված քաղաքականությունների մասին շահառուների տեղեկացվածության մակարդակը բավականին բարձր է: Առավել հայտնի է «երեխայի ծննդյան միանվագ նպաստի տրամադրման» քաղաքականությունը՝ տեղեկացված է SS-ների մոտ 85 տոկոսը, և «երրորդ և ավելի երեխայի համար մինչև 6 տարեկան լրանալը ամսական 50,000 դրամ նպաստի տրամադրման քաղաքականությունը»՝ տեղեկացված է՝ 75.5 տոկոսը: Իրականացվող քաղաքականությունների ազդեցությունը SS-ներում երեխա ունենալու վերաբերյալ որոշում կայացնելու վրա ցածր է:
- Ցածր է տեղեկացվածությունը «չաշխատող մայրերին տրամադրվող մայրության նպաստների» և «երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովման հիպոթեքային աջակցության» ծրագրերի մասին: Ընդհանրապես, շահառու մարզերում պետական աջակցությամբ բնակարանների ձեռքբերման ծրագրերից օգվողների քանակը փոքր է:
- Ցածր է նաև ԱՍՀՆ կողմից իրականացվող զբաղվածության տարբեր ծրագրերի մասին բնակչության թե՛ տեղեկացվածության և թե՛ դրանցից օգտվելու մակարդակը, այդ թվում հաշմանդամություն ունեցող անձանց կողմից. հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող աշխատանքի տեղավորման ծառայություններից երբևիցե օգտվել են շահառու մարզերում հաշմանդամություն ունեցող անձանց ընդամենը 3.5 տոկոսը:

- Պետական պատվերի շրջանակներում տրամադրվող բժշկական ծառայությունների մասին շահառու բնակչության տեղեկացվածության մակարդակը բարձր չէ: Սոցիալապես անապահովներին և հատուկ խմբերում ընդգրկվածների տրամադրվող հիվանդանոցային ծառայությունների անվճար լինելու մասին տեղեկատվությանը տիրապետում է SS-ների 68.2, իսկ նպաստառու SS-ների 75.9 տոկոսը:
- Ընդհանուր առմամբ, շահառու մարզերում իրականացվող պետական բյուջետային ծրագրերի մասին տեղեկացվածության մակարդակը ցածր է: Այն համեմատաբար բարձր է Տավուշի մարզում:
- Հետազոտությանը նախորդած 12 ամիսների ընթացքում շահառու մարզերի բոլոր SS-ների 10 տոկոսում և նպաստառու SS-ների 29.7 տոկոսում SS անդամներից առնվազն մեկն ունեցել է բժշկական միջամտության և բժշկական ծառայությունների ստացման կարիք, սակայն չի դիմել բժշկի: Բժշկի չդիմելու գլխավոր պատճառը SS-ների 70 տոկոս դեպքերում ֆինանսական է, 8 տոկոս դեպքերում՝ բժիշկներին անվստահությունն է, 4 տոկոս դեպքերում՝ բժշկական հաստատությունը բնակավայրից հեռու գտնվելը:
- Հաշմանդամություն ունեցող անձանց կողմից բժշկական օգնության և վերականգնման պետական ծրագրերից օգտվելու մակարդակը բարձր չէ: Երբևիցե պետական բյուջետային ծրագրերից օգտվել են շահառու մարզերի հաշմանդամություն ունեցող բնակչության ընդամենը 32.1 տոկոսը: Դեղորայքի կարիք ունեցող հաշմանդամություն ունեցող անձանց 47.8 տոկոսն օգտվել է անվճար և արտոնյալ պայմաններով տրամադրվող դեղերից:
- Շահառուների գնահատմամբ աշխատատեղերի բացակայությունը, առողջապահական ծառայությունների ոչ բավարար մակարդակը և ներհամայնքային ճանապարհների վատ վիճակը շարունակում են մնալ համայնքներում բնակչության առջև ծառայած ամենակարևոր երեք խնդիրները:

- Առանձնացված սոցիալական ծառայություններից շահառու մարզերի բնակչության կարիքը բարձր է գնահատվում հատկապես որակյալ բժշկական ծառայությունների, մատչելի դեղերի, երիտասարդների և տարեցների զբաղվածության, ինչպես նաև տարեցներին մատուցվող սոցիալական ծառայությունների մասով:
- Մատուցվող առողջապահական ծառայությունների բարելավման տեսանկյունից ՏՏ-ները մի կողմից կարևորում են բժշկական ծառայությունների մատչելիությունը, մյուս կողմից՝ ավելի որակյալ բժշկական սպասարկող անձնակազմի առկայությունը մարզերում:
- Զբաղվածության բարելավման հնարավորությունները բնակչությունը գերազանցապես կապում է լրացուցիչ աշխատատեղերի ստեղծման հետ՝ մոտ 86 տոկոս: Ուշագրավ է, որ բնակչության ավելի քան 20 տոկոսը իր համայնքի բնակչության զբաղվածության բարելավման հնարավորությունները կապում է աշխատատեղերի պահանջներին համապատասխան պրակտիկ հմտությունների ձևավորմանը և լրացուցիչ վերապատրաստման դասընթացների մասնակցության հետ: Եթե քաղաքային բնակչությունը զբաղվածության մեծացման համար կարեվորում է աշխատող ծնողների երեխաների համար խնամքի լրացուցիչ ծառայությունների ստեղծումը, ապա գյուղական բնակչության համար էական է լրացուցիչ փոխադրման/տրանսպորտային ծառայությունների առկայությունը դեպի աշխատանքի վայրեր:
- Երեխաներին աջակցության և դաստիարակության բարելավման տեսանկյունից բոլոր երեք մարզերում առավելապես կարևորվում են այգիների, պուրակների և խաղահրապարակների առկայությունը, ինչպես նաև՝ ամառային հանգստի ծրագրերը և ճամբարները:
- Տարեցների համար զբաղվածության հնարավորությունները և տարեցներին սոցիալական ծառայությունների մատուցումը հատկապես կարևորվել է Լոռու գյուղական բնակավայրերի ՏՏ-ների կողմից: Ընդ

որում, տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց աջակցության բարելավման տեսանկյունից բոլոր երեք մարզերում էական են համարվել տնային պայմաններում առողջապահական, ինչպես նաև՝ տնային օգնության/խնամքի ծառայությունների մատուցումը: Լոռիում և Տավուշում կարևորվել են նաև սննդի առաքման ծառայությունները:

- Համայնքային ծառայություններից բոլոր երեք մարզերում համեմատաբար ավելի մեծ կարևորություն ունեն ներհամայնքային ճանապարհների վիճակը, փողոցային լուսավորության և աղբի ժամանակին հավաքման ծառայությունները:
- Համայնքներում իրականացվելիք ծրագրերի մասին տեղեկացվածության մակարդակը ցածր է, միջինում տեղեկացված են ՏՏ-ների 4.1 տոկոսը: Համանքապետարանի կողմից համայնքային ծրագրերի քննարկումների կազմակերպման վերաբերյալ հարցին դժվարացել է պատասխանել բնակչության մոտ 47 տոկոսը, իսկ 25 տոկոսը նշել է, որ նման միջոցառումներ չեն կազմակերպվում:
- ՏՏ-ների 41 տոկոսը գտնում է, որ բյուջետային ծախսերի մասին որոշումներ կայացնելիս բնակիչների կարծիքը և ցանկությունները «հաշվի չեն առնվում»:
- Ուսումնասիրված ՏՏ-ների մոտ 40 տոկոսը գտնում է, որ իրենց համայնքային խնդիրները կարող են լուծվել միայն կառավարության միջնորդությամբ:
- Առանձնացված համայնքային միջավայրը բնութագրող ծառայություններից Տավուշի մարզում համեմատաբար բարձր է բանկերի/բանկոմատների առկայության կարիքը՝ 26 տոկոս, համայնքում փոքր բիզնես բացելու հնարավորությունների կարիքը՝ 23 տոկոս, և համայնքներում արագաչափերի օգտագործման կարիքը՝ 23 տոկոս:
- Շիրակի մարզում՝ մեծամասամբ գյուղական բնակավայրերում, ՏՏ-ները հատկապես ժամանցային վայրերի (սրճարան/բար/ռեստորան/ակումբ) կարիքի մասին են նշում՝ 20 տոկոս: Լոռու մարզի ՏՏ-ների կարիքը

համեմատաբար բարձր է համայնքներում բանկերի/բանկոմատների առկայության և հանրային տրանսպորտի բարելավման մասով՝ համապատասխանաբար 22 և 19 տոկոս: Այգիների և հանգստի վայրերի առկայության կարիքը բարձր է բոլոր երեք մարզերում:

Հիմնական եզրակացություններ

- Ստացված հիմնական արդյունքները և բացահայտումներն անսպասելի չեն: Թեև հիմնական միտումները պահպանվում են, սակայն սկսվել են նկատվել որակական նոր զարգացումներ:
- Բնակչության եկամուտների մակարդակը ցածր է, պարտքային պարտավորությունները և ծանրաբեռնվածությունը՝ շատ բարձր: Ընդ որում, ըստ հետազոտված բնակչության, իրավիճակը վերջին տարիներին վատթարացել է: Հատկապես անհանգստացնող է թերսնուցման բարձր մակարդակը:
- Կրթության որակի և հասանելիության նկատմամբ բնակչության գոհունակության մակարդակը ցածր չէ: Սակայն, շահառու բնակավայրերի գերակշիռ մասում կան կրթական համակարգից դուրս մնացած երեխաներ: Նախադպրոցական կրթությունը և արտադպրոցական կրթությունը մեծ պահանջարկ է սկսել ստանալ, որը SS-ների մեծ մասի համար մնում է անհասանելի: Կարևորվում է երեխաների ամառային հանգստի կազմակերպումը և ճամբարների հասանելիությունը:
- Դժգոհություններն առավել մեծ են առողջապահական ծառայությունների որակի նկատմամբ: Որակյալ առողջապահության մատչելիությունը, փորձառու և որակյալ մասնագետների պակասը մնում է գերխնդիր:
- Թեև, ընդհանուր առմամբ աշխատատեղերի հասանելիությունը և զբաղվածության ապահովումը կարևորվում է, սակայն բնակչությունը սկսել է շեշտադրել վերապատրաստման և նոր գիտելիքների ձեռքբերման, ֆինանսական գրագիտության բարձրացման անհրաժեշտությունը:
- Ուշագրավ է, որ աճում են նաև համայնքային կյանքի որակի և միջավայրի բարելավմանն ուղղված պահանջները: Մասնավորապես, շատերը շեշտադրում և կարևորում են ճանապարհների որակը, փողոցների բարեկարգումը և լուսավորությունը, պուրակների, զբոսայգիների և խաղահրապարակների առկայությունը, ժամանցի վայրերը և հանրային սպասարկման օբյեկտների (ռեստորաններ, սրճարաններ և ակումբներ) առկայությունը գյուղական և փոքր քաղաքային համայնքներում: Նմանատիպ պահանջներն առավել մեծ գերակայություն են սկսել ստանալ, որը հուշում է կյանքի որակի առավել բարձր պահանջների մասին:
- Համայնքային ռեսուրսները և ներուժը մնում են ցածր՝ բնակչության պահանջները և սահմանվող նշաճողերը հասցեագրելու համար: Բնակչությունը փոփոխություններ ակնկալում է ոչ թե համայնքային կառավարման մարմիններից, այլ, ավելի շուտ՝ կառավարությունից: Սակայն, համայնքային մակարդակում բյուջետային և այլ ծրագրային որոշումներին և դրանց կայացման մասնակցությանը կարևորություն է տալիս:
- Սուբվենցիոն ծրագրերի ակտիվացման արդյունքում բյուջեների կառուցվածքում առավել մեծ կշիռ են ստացել համայնքներում կյանքի որակի բարելավմանն ուղղված միջոցառումները:
- Թեև մարդիկ շարունակում են մնալ քիչ տեղեկացված և պակաս գրագետ, սակայն տեղեկացվածությունը, գրագիտությունը և քաղաքացիական ակտիվությունը առավել մեծ կարևորություն են ստանում վերջին տարիներին:
- Զբաղվածության ծրագրերից և պետական պատվերի շրջանակներում առողջապահական ծրագրերից տեղեկացվածության մակարդակը բավականին ցածր է: Առավել լավ տեղեկացված են առկա ժողովրդագրական ծրագրերից, թեև համարվում է, որ դրանք չեն ազդում կամ շատ քիչ են ազդում ընտանիքում նոր երեխաներ ունենալու որոշումների և ծնելիության աճի վրա:

- Կարևորություն են ստանում ծերերի զբաղվածության խնդիրները, ինչպես նաև տարեցների սպասարկման և սննդի մատակարարման պահանջները:
- Ընտանիքներում բռնությունների կանխարգելման միջոցառումները քիչ են արձագանք ստանում: Փոխարենը երիտասարդության զբաղվածության, ինքնաիրացման և զարգացման, ֆիզիկական և հոգեկան առողջության ապահովման միջոցառումները դառնում են պահանջված անհրաժեշտություն:
- Այսպիսով, բազմաչափ աղքատություն երեվոյթը, բազմաթիվ ասպեկտներ է ներառում: Հետազոտությունը փաստում է, որ պարզ եկամտային աղքատության չափորոշիչներն այսօր ամբողջական չեն կարող նկարագրել բնակչության առկա պահանջները և կենսամակարդակը: Համայնքային կյանքը որոշակի զարգացում է ապրում՝ առաջ բերելով նոր կարիքներ և կյանքի նոր որակի պահանջներ:
- Բազմաչափ աղքատության կրճատմանն ուղղված պետական և համայնքային բյուջետային ռեսուրսները սահմանափակ են և ոչ մեծ՝ չնայած դրանց նկատմամբ աճող պահանջներին: Սահմանված ռազմավարական և բյուջետային քաղաքականությունների կապը բավարար հստակ չէ՝ թույլ է, որը կարող է պայմանավորված լինել թե՛ ռեսուրսների պակասով, թե՛ քաղաքականություն մշակողների և իրականացնողների հետևողականության պակասով: Մյուս կողմից, չնայած աճող պահանջմունքներին, դեռևս հանրությունը և քաղաքացիական հասարակության ինստիտուցիոնալ զարգացումը չեն ապահովում հանրային պահանջի ձևավորման, երկխոսության, մասնակցության և քաղաքականությունների վերահսկողության պատշաճ և ազդեցիկ մակարդակ:

Հիմնական առաջարկություններ

Քաղաքացիական հասարակությանը.

- Զանքեր գործադրել ապահովելու հանրային պահանջի ձևավորման, պետական

մարմինների հետ երկխոսության, մասնակցության և քաղաքականությունների վերահսկողության պատշաճ և ազդեցիկ մակարդակ: Կենտրոնացնել ուշադրությունը իրականացվող պետական ծրագրերի մասին հասարակության տեղեկացվածության բարելավման, պետական և համայնքային բյուջետային ծրագրերի մշակման գործընթացներում մասնակցության վրա՝ սկզբնական շրջանում առնվազն ապահովելով համապատասխան բյուջետային ծրագրերի հանրային քննարկումներին ներկայություն:

- Ռեսուրսները հնարավորինս ուղղել հանրային ծրագրերի մասնակցային մոնիտորինգին և գնահատմանն ուղղված ծրագրերի մշակմանը և իրականացմանը:

Պետական կառավարման մարմիններին.

- Բարելավել իրականացվող բյուջետային ծրագրերի բովանդակությունը՝ առավելագույնս արտահայտելով և նպաստելով ռազմավարական փաստաթղթերով սահմանված նպատակադրումների ձեռք բերմանը:
- Խթանել Համայնքային նաև պետական բյուջետային գործընթացներում հասարակության մասնակցությունը՝ ներդնելով մասնակցային բյուջետավորման նոր և հասանելի գործիքներ: Իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում առավել կարևորել համայնքային կյանքի որակի բարելավմանն ուղղված և բնակչության մասնակցությամբ ընտրված ծրագրերը:
- Բյուջետային ծրագրերի գնահատման ներդրվող գործընթացներում կարևորել քաղաքացիական հասարակության, անկախ փորձագիտական հանրույթի դերակատարումը:

Դոնոր հանրույթին.

- Ռեսուրսներն ուղղել բյուջետային գործընթացներում քաղաքացիական հասարակության մասնակցային կարողությունների ընդլայնման, քաղաքացուն հասանելի և կիրառական գործիքների մշակման աջակցությանը:

- Նպաստել համայնքային կյանքը որակի զարգացմանը, ձևավորվող նոր կարիքների և պահանջների բավարարմանը: Կարևորել և առավել ընդգրկուն դարձնել բացահայտված մի շարք ուղղություններով իրականացվող աջակցությունը, ինչպիսիք են՝
 - կրթական համակարգից դուրս մնացած երեխաների, նրանց թերսնուցման, երեխաների ամառային հանգստի և ժամանցի կազմակերպման հարցերը,
 - տարեցների զբաղվածության, տնային պայմաններում նրանց առողջապահական ծառայությունների մատուցման, սննդի մատակարարման ծառայությունները,
 - մարզերում փորձառու և որակյալ բժիշկների առնվազն ժամանակավոր ուղեգրման միջոցառումները:



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ



Սույն հետազոտության նպատակը Հայաստանում, մասնավորապես՝ Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերում բազմաչափ աղքատության կրճատմանն ուղղված պետական բյուջետային ծրագրերի և դրանց ազդեցությունների ուսումնասիրումը և քննարկումն է:

Հետազոտության հիմնական ուղղություններն են՝

- Ծրագրի շահառու խմբերին ուղղված ռազմավարական քաղաքականությունների շրջանակի ուսումնասիրումը և քննարկումը,
- Ծրագրի շահառու խմբերին ուղղված պետական բյուջետային և համայնքային ծրագրերի վերլուծությունը, դրանց սոցիալական ազդեցությունների գնահատումը,
- Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերում շահառու խմբերի կարիքների ուսումնասիրումը,
- Իրականացվող բյուջետային քաղաքականությունների և շահառու խմբերի կարիքների համապատասխանության քննարկման հիմքերի ստեղծումը, լուծում պահանջող խնդիրների բացահայտումը:

Հետազոտության արդյունքներն ամփոփված են սույն հաշվետվությունում, որը բաղկացած է հինգ բաժիններից: Ներածությանը հետևում է հետազոտության մեթոդաբանական շրջանակը, որում ներկայացված են հետազոտության մեթոդները և գործիքները, օգտագործված տեղեկատվության աղբյուրները, ուսումնասիրության շրջանակում իրականացված «Բյուջեներ և բնակչության բերեկեցություն» ՏՏ վիճակագրական հետազոտության (այսուհետ՝ ԲՅ հետազոտություն) ընտրանքը, ընտրանքի գնահատականները և իրականացման այլ մանրամասներ:

Երրորդ «Քաղաքականությունների շրջանակը» բաժինը նվիրված է պետական ռազմավարական քաղաքականությունների շրջանակի ներկայացմանը, քաղաքականությունների նպատակների, վերջնական արդյունքների և թիրախների քննարկմանը: Առանձին ենթաբաժնում ներկայացվում և վերլուծվում են նաև համապատասխան պետական և համայնքային բյուջետային ծրագրերը, բյուջետային ֆինանսավորման ծավալներն՝ առանձնացված ըստ բազմաչափ

աղքատության առանձին բնութագրերի և ռազմավարական նպատակադրումների: Իրականացվել է բյուջետային ծրագրերի արդյունքային չափորոշիչների վերլուծություն և դրանց համապատասխանության քննարկում: Այս բաժնում քննարկվում են նաև շահառու մարզերի ամփոփ համայնքային բյուջեները, ներկայացվում են համայնքային եկամուտների և ծախսերի վերջին 2020-2022 թվականների դինամիկան և կառուցվածքը: Քննարկվում են բազմաչափ աղքատության տեսանկյունից զգայուն համայնքային ծախսերը, համայնքներում աղքատության հաղթահարման և եկամուտների գեներացման ներուժը:

Չորրորդ և հինգերորդ բաժինները նվիրված են «Բյուջեներ և բնակչության բերեկեցություն» վիճակագրական հետազոտության արդյունքների ներկայացմանը: Մասնավորապես, բաժին 4-ը նվիրված է շահառու մարզերի սոցիալ տնտեսական բնութագրերի ներկայացմանը, իսկ բաժին 5-ում փորձ է արվում գնահատել առանձին խումբ ծառայությունների օգտագործումը, հասանելիությունը և կարիքը շահառու մարզերում: Այստեղ ներկայացվում է նաև հանրային առանձին ծառայությունների բարելավման ուղղություններն ըստ շահառու բնակչության գնահատականների:



ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿ



Հետազոտությունը ներառում է զանազան հետազոտական **մեթոդներ և գործիքներ**: Մասնավորապես, դրանք ներառում են քանակական, որակական և խառը հետազոտության հետևյալ մեթոդները.

- բյուջետային տվյալների հավաքագրում և վերլուծություն,
- քաղաքականության փաստաթղթերի ուսումնասիրություն և քննություն,
- հարակից ուսումնասիրությունների և փաստաթղթերի ուսումնասիրություն,
- հիմնական տեղեկացված անձանց հետ հարցազրույցներ,
- վիճակագրական ընտրանքային հետազոտություն:

Ծրագրի շահառու խմբեր են հանդիսանում Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերի բնակչությունը, մասնավորապես, բազմաչափ աղքատության տարբեր բնութագրերի տեսանկյունից խոցելի և ռիսկային խմբերում գտնվող բնակչությունը:

Հետազոտությունն ուղղված է շահառու խմբերի վրա պետական և համայնքային բյուջետային քաղաքականությունների և ծրագրերի ազդեցությունների գնահատմանը, շահառու խմբերի կարիքների բացահայտմանը և բյուջետային ծրագրերի համապատասխանության քննարկմանը:

Գնահատելու համար բազմաչափ աղքատության կրճատման տեսանկյունից իրականացվող պետական և համայնքային քաղաքականությունները, իրականացվել է ռազմավարական քաղաքականությունների շրջանակի քարտեզագրում, ուսումնասիրություն, բազմաչափ աղքատության տարբեր բնութագրերի վրա պոտենցիալ ազդեցություն ունեցող քաղաքականությունների ներկայացում: Հստակեցնելու համար ռազմավարական փաստաթղթերի և բյուջետային ծրագրերի հնրավոր ցանկը՝ մեկնարկային փուլում համապատասխան ոլորտի պատասխանատուների հետ իրականացվել են հարցազրույցներ և առաջնային տվյալների հավաքագրում:

Քաղաքականությունները ներկայացվել են նպա-

տակների, վերջնական արդյունքների և դրանց գնահատման համար փաստաթղթերում առաջարկվող վերջնական արդյունքների չափորոշիչների թիրախների մակարդակում: Առանձնացվել և ներկայացվել են նաև պետական բյուջետային բոլոր այն ծրագրերը, որոնք կրկին բազմաչափ աղքատության վրա միջամտություններ և ազդեցություններ են ենթադրում: Ներկայացվել և վերուծվել են համապատասխան բյուջետային ծրագրերի ուղղակի և վերջնական արդյունքները և ֆինանսավորման ծավալները:

Համայնքային մակարդակում բյուջետային քաղաքականությունները գնահատելու համար իրականացվել է համայնքային բյուջետային ծախսերի գործառական բաշխման և սուբվենցիոն ծրագրերի ուղղությունների վերլուծություն:

Շահառու մարզերում իրականացվող պետական և համայնքային բյուջետային ծրագրերի շրջանակներում մատուցվող հանրային ծառայություններին՝ ՏՏ-ների հասանելիության, գործող ծրագրերի մասին մարզերի բնակչության իրազեկվածության, ծրագրերի ազդեցությունների, ինչպես նաև հանրային ծառայությունների նկատմամբ կարիքի գնահատման նպատակով ուսումնասիրության շրջանակներում իրականացվել է շահառու մարզերի ՏՏ-ների վիճակագրական ընտրանքային հետազոտություն՝ «Բյուջեներ և բնակչության բերեկեցություն»: Հետազոտության դաշտային աշխատանքներն իրականացվել են 2021 թվականի հոկտեմբեր ամսվա ընթացքում:

Բ3 հետազոտությունը չի թիրախավորում որևէ առանձին բյուջետային ծրագիր, այլ դիտարկում է դրանց համախումբը և դրանց ընդհանրական ազդեցությունը շահառու մարզերի բնակչության կարիքների վրա: Հետևաբար հետազոտության ընտրանքի պլանը կառուցվել է ապահովելու ներկայացուցչական ընտրանք ոչ թե ըստ առանձին բյուջետային ծրագրերի շահառուների, այլև ըստ մարզերի (Շիրակ, Լոռի, Տավուշ) և ըստ բնակավայրերի տեսակների (քաղաք/գյուղ): Ի լրումն, ընտրանքի պլանը ձևավորվել է այնպես, որ առավելագույնս ապահովվի տվյալների դիսագրեգացիա, բավարարի գնահատման չափորոշիչների և փոփոխականների մշակմանը,

1. Պետական մակարդակում բյուջետային տեղեկատվության համար աղբյուր է հանդիսացել ՀՀ ֆինանսների նախարարությունը, իսկ համայնքային մակարդակում՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը:

տվյալներն ունենան ներկայացուցչականության և սխալի ընդունելի մակարդակ: Կիրառվել է ստրատիֆիկացված, պատահական, բազմափուլ ընտրանքի մոդել: Նախ առանձնացվել են 3 կլաստերներ՝ Շիրակ, Լոռի և Տավուշ: Այնուհետև յուրաքանչյուր կլաստերում տարանջատվել են քաղաքներ և գյուղեր ստրատաները:

Ուսումնասիրության օբյեկտը SS-ներն են: Յուրաքանչյուր կլաստերում ստրատաները տարանջատվել են համամասնորեն: Յուրաքանչյուր ստրատայում գյուղերը ընտրվել են պահպանելով առանձին կլաստերում մեծ, միջին և փոքր² գյուղերի, ինչպես նաև դրանցում SS-ների բաշխման համամասնությունները:

Աղյուսակ 1. Հետազոտության ընտրանքի պլանը³

Կլաստերներ	Ստրատաներ		Քանակ	SS բաշխումը, տոկոս
Լոռի	1. Քաղաքներ		4	50.1
	2. Գյուղեր	մեծ	5	19.7
		միջին	4	16.6
		փոքր	4	13.5
Շիրակ	1. Քաղաքներ		3	48.5
	2. Գյուղեր	մեծ	5	19.6
		միջին	5	14.3
		փոքր	8	17.6
Տավուշ	1. Քաղաքներ		3	48.0
	2. Գյուղեր	մեծ	6	25.3
		միջին	4	16.6
		փոքր	3	10.1

Ընտրանքն ընդգրկում է Ծրագրի շահառու երեք մարզերը՝ մարզերում բնակվող SS-ների քանակին համապատասխան: Ընտրանքի ընդհանուր ծավալը կազմում է 2,364 SS: Յուրաքանչյուր կլաստերում իրականացվել է մոտ 790 հարցում:

Յուրաքանչյուր ստրատայի մակարդակում ապահովվել է ընտրանքի սխալի առավելագույնը +/-5.0 տոկոս մակարդակ: Յուրաքանչյուր

կլաստերի մակարդակում ընտրանքի սխալը չի գերազանցում +/-3.5 տոկոս մակարդակը, իսկ ընդամենը Ծրագրի շահառու մարզերի SS-ների մակարդակում ընտրանքի սխալը չի գերազանցում +/-2.0 տոկոս մակարդակը:

Ստորև աղյուսակում ներկայացված են գլխավոր և ընտրանքային համախմբության բաշխումը և սխալի գնահատականները:

Աղյուսակ 2. Հետազոտության ընտրանքը և ընտրանքի սխալի գնահատականները

	Շիրակ			Լոռի			Տավուշ			Ընդամենը ընտրված մարզեր		
	Գյուղ	Քաղաք	Ընդամենը	Գյուղ	Քաղաք	Ընդամենը	Գյուղ	Քաղաք	Ընդամենը	Գյուղ	Քաղաք	Ընդամենը
Գլխավոր համախմբություն, SS-ներ	23,949	39,874	63,822	21,811	37,080	58,891	17,520	15,116	32,636	63,280	92,070	155,349
Ընտրանքի ծավալ, SS-ներ	407	384	791	394	396	790	407	376	783	1,180	1,184	2,364
Վստահելիության մակարդակ, տոկոս	95	95	95	95	95	95	95	95	95	95	95	95
Ընտրանքի սխալ, (+/-) տոկոս	4.82	4.98	3.46	4.89	4.90	3.46	4.80	4.99	3.46	2.83	2.83	2.0

2. Փոքր են համարվել մինչև 250 SS-ից բաղկացած գյուղական բնակավայրերը, միջին՝ 250-500 SS-ից բաղկացած գյուղական բնակավայրերը, մեծ՝ 500 և ավել SS ունեցող գյուղական բնակավայրերը:
 3. Բնակավայրերը տե՛ս Հավելված 1-ում:



ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿ



3.1. Ռազմավարական քաղաքականությունների շրջանակը



ՀՀ-ում բազմաչափ աղքատության նվազեցմանն ուղղված քաղաքականությունների քննարկումը պահանջում է բազմաչափ աղքատության տարբեր չափումների վրա ազդեցության պոտենցիալ ունեցող ռազմավարական քաղաքականությունների շրջանակի հստակեցում, կառավարության կողմից սահմանված նպատակադրումների և միջնաժամկետ թիրախների ներկայացում:

Նկատենք, որ քննարկման ենթակա քաղաքականությունները ձևակերպված են հիմնականում սոցիալական, տնտեսական և ենթակառուցվածքների զարգացման ոլորտների մի շարք ռազմավարական փաստաթղթերում, հայեցակարգերում և ծրագրերում, նաև՝ ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրում (տես Հավելված 2):

Ստորև ներկայացնում ենք առանձնացված քաղաքականությունների հիմնական բովանդակությունը՝ ըստ բազմաչափ աղքատության առանձին չափումներին ուղղվածության:

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐ: Հիմնական կարիքները ներառում են մարդու արժանապատիվ կյանքով ապրելու համար անհրաժեշտ նվազագույն կարիքները, որոնց թվում են սնունդի և հագուստի ձեռքբերման հնարավորությունները, մարդասիրական և դրամական փոխանցումներից ցածր կախվածությունը:

Բնակչության հիմնական կարիքների բավարարմանն ուղղված պետական քաղաքականությունների թիրախում է աղքատության մակարդակի կրճատումը, 2026 թվականին՝ ծայրահեղ աղքատության լիովին վերացումը, նաև բազմաչափ աղքատության մեջ ապրողների կշռի կրճատումը, մասնավորապես՝ բազմաչափ աղքատության մեջ ապրող երեխաների կշռի նվազումը (տես Աղյուսակ 3): Նկատենք, որ քաղաքականությունները թիրախավորում են ինչպես սպառման ազդեցատի հիմքով, այնպես էլ՝ ըստ եկամուտների, աղքատության և ծայրահեղ աղքատության մակարդակների կրճատումը:

Շեշտադրվում է սոցիալական ծառայությունների

հասանելիության բարձրացումը, սոցիալական պաշտպանության տարբեր սխեմաներից օգտուրվող բնակչության կշռի աճը: Թիրախավորվում է ինքնաբավ, արժանապատիվ և սեփական վաստակն ունեցող ընտանիքների թվի ավելացումը: Այս իմաստով շեշտադրվում են նպաստների համակարգի առաջացրած շահադրժման փոփոխությունը, նպաստների հասցեականության բարելավումը և նպաստառու ընտանիքների զբաղվածության մակարդակի աճը:

Պարենային անվտանգության և սնուցման բարելավումը ևս շեշտադրվում է ռազմավարական նպատակադրումներում՝ մասնավորապես կարելի է սննդի մատչելիության նվազագույն մակարդակի ապահովումը և դիվերսիֆիկացված սննդի հասանելիությունը:

Երեխաների սոցիալական հիմնահարցերի շրջանակում առանցքային է համարվում ընտանիքում ապրելու երեխայի իրավունքի իրացումը, մանկալքության կանխումը:

Առողջ և կարողունակ երեխաների զարգացումը քաղաքականության կարևոր նպատակադրումներից է, կառավարությունը սահմանում է տարիքային ստանդարտներին համապատասխան զարգացման, առողջության, ուսման և հոգեւոցիալական մակարդակ ունեցող երեխաների համամասնության աճ, կարևոր չափորոշիչ է ընդունելի նվազագույն սննդակարգ ստացող երեխաների համամասնության աճը:

Տարեցների պաշտպանության մասով ՀՀ կառավարությունը թիրախավորում է տարեցներին մատուցվող խնամքի ծառայությունների բարելավումը և համայնքապետական ծառայությունների ներդրումն ու զարգացումը՝ ապահովելու համար տարեց մարդկանց ընտանիքում և համայնքում ապրելու բարենպաստ միջավայր, կարիքներին համապատասխան ծառայությունների մատուցում, որակյալ խնամքի ծառայություններ:

Տարեցների սոցիալ-տնտեսական, մտավոր, ֆիզիկական ակտիվության համար նպաստավոր պայմանների ապահովումը ևս կարևորվում է

կառավարության կողմից: Ըստ այդմ թիրախավորվում են ակտիվ ծերության գործակցի և կենսաթոշակային տարիքի զբաղվածների մասնաբաժնի աճերը:

Հաշմանդամություն ունեցող անձանց ուղղված քաղաքականությունները սահմանված են հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2022 թվականի տարեկան ծրագրում,

ինչպես նաև ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրում: Նախատեսվում է մատուցվող խնամքի ծառայությունների փոխակերպում, նոր ծառայությունների ստեղծում, հաշմանդամությամբ պայմանավորված ծախսերի փոխհատուցում, այդ թվում՝ աջակցող միջոցների տրամադրում և այլն:

Աղյուսակ 3. Բնակչության հիմնական կարիքներին ուղղված քաղաքականությունների շրջանակը

Նպատակներ	Արդյունքներ
<ul style="list-style-type: none"> Մարդու ստեղծարար հմտությունների զարգացման և իրացման միջոցով միջին խավի բարեկեցության աճ և աղքատության կրճատում⁴: Բարձրացնել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կամ հայտնվելու ռիսկի տակ գտնվող ընտանիքների դիմակայումն ու ինքնաբավությունը⁵: 	<ul style="list-style-type: none"> Մինչև 2026թ. վերացնել ծայրահեղ աղքատությունը Բազմաչափ աղքատության մեջ ապրողների մասնաբաժինը նվազեցնել տարեկան առնվազն 2%-ով, Վերացնել ծայրահեղ աղքատությունը, Վերացնել սպառման ագրեգատի հիմքով ծայրահեղ աղքատությունը հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում՝ շարունակաբար նվազեցնելով դրամական եկամուտների հիմքով ծայրահեղ աղքատությունը (տարեկան առնվազն 1%-ով), Սոցիալական պաշտպանության առնվազն 1 տեսակի սխեմայում ընդգրկված բնակչության մասնաբաժինը 54.4%-ից հասցնել 70%-ի, Ընտանեկան նպաստի համակարգում խնամառության մինչև 20% համաթիվ ունեցող ընտանիքների ընդգրկվածության միջին տևողությունը կրճատել 50%-ով, Աշխատունակ տարիքի գործուսակ և դրամական եկամուտների հիմքով ծայրահեղ աղքատ անձանց ցուցանիշը հասցնել առավելագույնը 7%-ի, իսկ աշխատող աղքատների ցուցանիշը նվազեցնել առնվազն 7%-ով,
<ul style="list-style-type: none"> Նպաստների համակարգի առաջացրած շահադրդման փոփոխություն⁶: 	<ul style="list-style-type: none"> Նպաստառու ընտանիքներում զբաղվածության մակարդակի տարեկան աճ առնվազն 5%-ով, Նպաստների համակարգի հասցեականության մակարդակի տարեկան աճ առնվազն 5%-ով, Աշխատանքի անցնելով պայմանավորված համակարգից դուրս մնացած ընտանիքների տեսակարար կշռի աճ տարեկան առնվազն 2%-ով,
<ul style="list-style-type: none"> Բարելավել պարենային անվտանգությունը և սնուցումը⁷ 	<ul style="list-style-type: none"> Գլոբալ պարենային անվտանգության ինդեքսի բարելավում՝ 2024թ. մինչև 65.3 մակարդակ՝ 2019-ի 52.3-ի դիմաց,
<ul style="list-style-type: none"> Երեխայի իրավունքների լիարժեք իրացման համար նպաստավոր պայմանների և միջավայրի ապահովումը, որի արդյունքում նպաստելու է առողջ և կարողունակ երեխաների զարգացմանը⁵: 	<ul style="list-style-type: none"> Մարդկային կապիտալի ինդեքսի բարձրացմանն աջակցում՝ համաթիվը 2020թ. 58%-ից հասցնելով 66-ի, Վերացնել սպառման ագրեգատի հիմքով ծայրահեղ աղքատությունը երեխաների շրջանում՝ նվազեցնելով դրամական եկամուտների հիմքով ծայրահեղ աղքատությունը (2020-2023թթ. տարեկան հմպտ. 1, 2, 3, 3%-ով), Բազմաչափ աղքատության մեջ ապրող երեխաների մասնաբաժինը նվազեցնել 2020թ. 20%-ից մինչև 12%, Ավելացնել 4-59 ամսական երեխաների մասնաբաժինը, ովքեր ունեն տարիքային ստանդարտներին հմպտ. զարգացման, առողջության, ուսման և հոգեբուժական մակարդակ,

4. ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագիր, ՀՀ կառավարության 18.08.2021թ. N 1363-Ա որոշում:
 5. ՀՀ աշխատանքի և սոցիալական պաշտպանության 2022-2026թթ. ռազմավարություն, նախագիծ, առ՝ 01.09.2022թ.
 6. «Աշխատի՛ր, Հայաստան» ռազմավարություն, դրա գործողությունների շրջանակ (2019-2023թթ.), ՀՀ կառավարության 05.12.2019թ. N 1753-Լ որոշում:
 7. ՀՀ գյուղատնտեսական ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030թթ. ռազմավարություն և ռազմավարության կատարմանն ուղղված 2020-2022թթ. միջոցառումների ծրագիր, ՀՀ կառավարություն 19.12.2019թ. N1886-Լ որոշում:

- 6-23 ամսական երեխաների շրջանում ընդունելի նվազագույն սննդակարգ ստացող երեխաների համամասնությունը 2021թ. 45%-ից հասցնել առնվազն 65%-ի,
- Ծնողների (խնամողների) կողմից ֆիզիկական կամ հոգեբանական բռնության ենթարկված 1-17 տարեկան երեխաների համամասնությունը կրճատել առնվազն 20%-ով,
- Երեխայի նկատմամբ բռնության որևէ դրսևորում որևէ պարագայում չհանդուրժող բնակչության մասնաբաժինը բարձրացնել առնվազն 30%ով,

• Ապահովել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների ընտանիքում ապրելու իրավունքի իրացումը և նրանց ներառումը հասարակություն⁸:

- Առկա է այլընտրանքային խնամք տրամադրող համաչափ և ըստ կարիքի ծառայությունների ցանց,
- Հաստատություններում խնամվող երեխաները ընտանիքներում են, բարելավվել է նրանց ընտանիքների կյանքի որակը,
- Աջակցության ծրագրերում ընդգրկված ընտանիքների առնվազն 60%-ը ձևավորել է կայուն եկամտի աղբյուր,
- Ճգնաժամային աջակցության կենտրոններում խնամվող երեխաների առնվազն 50%-ը վերադարձել է ընտանիք,
- Շուրջօրյա խնամքի հաստատություններում խնամվող երեխաների առնվազն 30%-ը խնամվում է ընտանիքում,

• Տարեցներին մատուցվող խնամքի ծառայությունների բարելավում և համայնքահենք ծառայությունների ներդրում ու զարգացում⁹:

- Մինչև 2023 թ. հանրապետության բոլոր մարզում ներդրվելու է տնային խնամքի ծառայությունը, ստեղծվելու են ցերեկային կենտրոններ՝ յուրաքանչյուրն առնվազն 50 այցելուի հաշվարկով, ճգնաժամային 3 կենտրոններ՝ 60 տարեցի համար:
- Մինչև 2026թ. նվազագույն կենսաթոշակի և կենսաթոշակի միջին չափերը հավասարեցնել հմպտ. պարենային և սպառողական զամբյուղների արժեքներին,

• Տարեցների համար ընտանիքում և համայնքում ապրելու բարենպաստ միջավայրի ստեղծում ու պահպանում, ինչպես նաև կարիքներին համապատասխան ծառայությունների մատուցում¹⁰:

- Առավել խոցելի իրավիճակում հայտնված տարեցների համար շուրջօրյա խնամքի հաստատությունների հասանելիության ապահովում, ճգնաժամային կենտրոնների ստեղծում,
- Խնամքի ծառայությունների կարիք ունեցող՝ բնակարանով ապահովված տարեցների առնվազն 80 տոկոսն ընդգրկված է տնային խնամքի ծառայություններում,
- Տնային խնամքի ծառայությունները ներդրված են հանրապետության բոլոր մարզերում,
- Ծառայությունների նոր մոդելների փորձարկում և ներդրում, այդ թվում՝ տնային պայմաններում շուրջօրյա խնամք,

• Ապահովել տարեցների սոցիալ-տնտեսական, մտավոր, ֆիզիկական ակտիվության համար նպաստավոր պայմաններ և տրամադրել սոցիալական երաշխիքներ¹¹:

- Ակտիվ ծերության գործակիցը բարձրացնել առնվազն 10%-ով,
- Կենսաթոշակային տարիքի զբաղվածների մասնաբաժինը կենսաթոշակային տարիքի բոլոր անձանց շրջանում 2020թ. 17%-ից բարձրացնել մինչև 20%:

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ: Բնակարանային պայմանների կարիքը սովորաբար վերաբերվում է պատշաճ բնակարանի առկայությանը, գեր բնակեցվածության, ջեռուցման առաջնային աղբյուրի օգտագործման, կենտրոնացված ջրամատակարարման, ջրահեռացման և աղբահանության համակարգերի և հոսող տաք ջրի առկայության, տրանսպորտից օգտվելու հնարավորության, ինչպես նաև վճարովի հանրային ծառայությունների որակի խնդիրներին:

Բնակարանային պայմանների բարելավմանն ուղղված հիմնական քաղաքականությունը ներկայացված է «Երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության պետական աջակցության 2020-2023թթ. ծրագրում», որը նպատակադրում է ընտանիքների կայուն զարգացումը՝ երեխա ունեցող ընտանիքների բնակարանային պայմանների բարելավմանն աջակցելու միջոցով: Նկատենք, որ բնակչության բնակարանային պայմանների բարելավմանն է ուղղված դեռևս 2014 թվականից իրականացվող հիպոթեքային վարկի տոկոսավճարների չափով

8. Երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացմանն ու ներդաշնակ զարգացմանն ուղղված 2020-2023թթ. համալիր ծրագիր և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույց, ՀՀ կառավարության 02.04.2020թ. N432-Լ որոշում:
 9. ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագիր, ՀՀ կառավարության 18.08.2021թ. N1363-Ա որոշում:
 10. Տարեցներին մատուցվող խնամքի ծառայությունների բարելավման և համայնքահենք ծառայությունների ներդրմանն ու զարգացման ծրագիր և դրա իրականացումն ապահովող 2021-2023թթ պլան-ժամանակացույց, ՀՀ կառավարության 08.04.2021թ. N 498-Լ որոշում:
 11. ՀՀ աշխատանքի և սոցիալական պաշտպանության 2022-2026թթ. ռազմավարություն, նախագիծ, առ՝ 01.09.2022թ.:

վճարված եկամտային հարկի վերադարձի քաղաքականությունը:

Աղքատ և սոցիալական բնակարանների/կացարանի կարիք ունեցող ընտանիքների բնակարանային խնդիրների լուծումը թիրախավորվում է ինչպես ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրում, այնպես էլ՝ սոցիալական բնակարանային ֆոնդի ձևավորման ռազմավարական ծրագրում:

2022 թվականին պետական աջակցություն է ցուցաբերվում նաև բնակարանի (բնակելի տան) էներգաարդյունավետ վերանորոգման նպատակով՝ համապատասխան նպատակով ձեռք բերված վարկերի տարեկան տոկոսադրույքի ամբողջական կամ մասնակի սուբսիդավորման միջոցով¹²:

Կառավարության գործունեության ծրագիրը նպատակադրում է նաև բնակչությանը խմելու

ջրի մատակարարման (ջրամատակարարման) և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ու ոռոգման ջրի մատակարարման հուսալի, կայուն, անվտանգ և մատչելի ծառայությունների ապահովումը՝ մինչև 2023 թվականի տարեվերջ թիրախավորելով 6 մարզերի 11 քաղաքների և 41 գյուղական բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հրատապ վերականգնումը:

Համայնքների ապահովումը տրանսպորտային սպասարկմամբ և ուղևորափոխադրումների մատչելիության բարձրացումը ևս ռազմավարական թիրախներում է: Պլանավորվում է, որ մինչև 2026 թվականը հանրապետության բոլոր բնակավայրերը կանոնավոր երթուղիներով կկապվեն մարզկենտրոնների կամ մարզի այլ խոշոր բնակավայրերի հետ:

Աղյուսակ 4. Բնակչության բնակարանային պայմանների բարելավմանն ուղղված քաղաքականությունների շրջանակը

Նպատակներ	Արդյունքներ
<ul style="list-style-type: none"> Աջակցել երեխա ունեցող ընտանիքների բնակարանային պայմանների բարելավմանը՝ պայմաններ ապահովելով ընտանիքների կայուն զարգացման համար: Խթանել երեխա ունեցող ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման գործընթացը մարզային բնակավայրերում: Երեխայի ծննդյան դեպքում վարկային բեռը թեթևացնելու միջոցով հնարավորություն ընձեռել շահառուներին համատեղել հիփոթեքային վարկի մարումը և երեխայի խնամքը¹³: 	<ul style="list-style-type: none"> Միանվագ դրամական աջակցություն ստացած շահառուների աճ, Կանխավճարի ապահովագրության համար դրամական աջակցություն ստացած շահառուների աճ, Երեխայի ծննդյան դեպքում վարկային բեռի նվազեցման աջակցություն ստացած շահառուների աճ,
<ul style="list-style-type: none"> Կացարանի կարիք ունեցող ընտանիքների բնակարանային խնդիրների լուծում¹⁴: 	<ul style="list-style-type: none"> Թիրախային ցուցանիշներ սահմանված չեն
<ul style="list-style-type: none"> Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված անձանց բնակարանային պայմանների բարելավման խնդրի առաջնահերթ լուծում¹⁵: 	<ul style="list-style-type: none"> Սոցիալական բնակարանային ֆոնդի ձևավորում
<ul style="list-style-type: none"> Հանրապետության տարածքում միասնական երթուղային ցանցի ներդրում, որի շնորհիվ բոլոր համայնքները կապահովվեն տրանսպորտային սպասարկմամբ: Կբարձրանա ուղևորափոխադրումների արդյունավետությունն ու մատչելիությունը¹⁶: 	<ul style="list-style-type: none"> Մինչև 2026թ. հանրապետության բոլոր բնակավայրերը կանոնավոր երթուղիներով կապվելու են մարզկենտրոնների կամ մարզի այլ խոշոր բնակավայրերի հետ, Տարեկան շուրջ 500 կմ միջպետական, հանրապետական և տեղական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների նորոգում և հիմնանորոգում,

12. Բնակարանների և անհատական բնակելի տների էներգաարդյունավետ վերանորոգման աշխատանքների պետական աջակցության ծրագիր, ՀՀ կառավարության 15.04.2022թ. N 520-Լ որոշում:

13. Երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության պետական աջակցության 2020-2023թթ. ծրագրեր, ՀՀ կառավարության 14.05.2020թ. N968-Լ որոշում:

14. ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագիր, ՀՀ կառավարության 18.08.2021թ. N 1363-Ա որոշում:

15. Սոցիալական բնակարանային ֆոնդի ձևավորման ռազմավարական ծրագիր, ՀՀ կառավարության 22.08.2013թ. N33 որոշում:

- Բնակչությանը խմելու ջրի մատակարարման (ջրամատակարարման) և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ու ոռոգման ջրի մատակարարման հուսալի, կայուն, անվտանգ և մատչելի ծառայությունների ապահովում¹⁶:

- Մինչև 2023 թվականի տարեվերջ 6 մարզերի 11 քաղաքների և 41 գյուղական բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հատվածների հրատապ վերականգնման աշխատանքներ, բաշխիչ ցանցերի վերականգնում:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ: Կրթության կարիքը նկարագրվում է միջնակարգ կրթության բացակայության, դպրոցական կրթության համակարգում ընդգրկվածության, կրթական հաստատությունների¹⁷ ֆիզիկական հասանելիության, ինչպես նաև կրթական ծառայությունների որակի չափանիշներով:

Կրթության մատչելիության և որակի բարելավման խնդիրները շեշտադրվում են և՛ ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրում, և՛ ՀՀ կրթության զարգացման պետական ծրագրում: Քաղաքականություններն առաջնահերթ են համարում գյուղական համայնքներում նախադպրոցական ծառայությունների ցանցի ընդլայնումը, նաև՝ ընդհանուր առմամբ նախադպրոցական ծառայությունների շարքում վաղ տարիքի ծառայությունների զարգացումը: Մինչև 2026 թվականը թիրախավորվում է բոլոր բնակավայրերում հասանելի դարձնել մատչելի նախադպրոցական ծառայությունները, 3-5 տարեկանների նախադպրոցական ծառայություններում ընդգրկվածությունը հասցնել առնվազն 95 տոկոսի, կառուցել, հիմնանորոգել կամ վերանորոգել առնվազն 500 մանկապարտեզ և նախակրթարան (տե՛ս Աղյուսակ 5):

Հանրակրթության ոլորտում ևս կարևորվում է համախառն ընդգրկվածության ցուցանիշի բարելավումը, ինչը վերջին տարիներին միջինում կազմում է շուրջ 90 տոկոս¹⁸: Անհետաձգելի խնդիր է համարվում նաև միջազգային չափանիշներին համապատասխան դպրոցների շենքային պայմանների բարելավումն ու նյութատեխնիկական բազայի հարստացումը: Խոսքը վերաբերում է ինչպես դպրոցում առկա ենթակառուցվածքներին՝ կոմունալ հարմարություններ, կապի առկայություն, այնպես էլ գույքային հագեցվածությանը, անհրաժեշտ պիտույքների և միջոցների հասանելիությանը: Մինչև 2026 թվականը թիրախավորվում է, որ ոչ մի երեխա դուրս չի մնա պարտադիր կրթության համակարգից, հանրապետության բոլոր դպրոցները կունենան պատշաճ կահավորված և արդիական սարքավորումներով հագեցված, սանիտարահիգիենիկ, անվտանգային ստանդարտներին բավարարող և համընդհանուր մատչելի շենքեր, համալրված կլիմեն որակավորված և սահմանված ստանդարտներին համապատասխան ատեստավորված մանկավարժներով: Նախատեսվում է կառուցել, հիմնանորոգել կամ վերանորոգել առնվազն 300 դպրոց:

Աղյուսակ 5. Կրթության մատչելիության և որակի բարելավմանն ուղղված քաղաքականությունների շրջանակը

Նպատակներ	Արդյունքներ
<ul style="list-style-type: none"> • Վաղ մանկության զարգացման պատշաճ համակարգի առկայություն և նախադպրոցական ծառայությունների ցանցի ամբողջական հասանելիություն: • Դպրոցական արդիական ու հագեցված ենթակառուցվածքի, ներառական ու զարգացնող միջավայրի, կրթական որակյալ բովանդակության, բարձրորակ ուսուցչական համակազմի և դպրոցների թափանցիկ ու արդյունավետ կառավարման ապահովում¹⁹: 	<ul style="list-style-type: none"> • Մինչև 2026թ. կառուցել, հիմնանորոգել կամ վերանորոգել առնվազն 300 դպրոց՝ ապահովելով դրանց ամբողջական հագեցումը անհրաժեշտ գույքով և սարքավորումներով, • Մինչև 2026թ. կառուցել, հիմնանորոգել կամ վերանորոգել առնվազն 500 մանկապարտեզ և նախակրթարան՝ ապահովելով դրանց ամբողջական հագեցումը անհրաժեշտ գույքով և սարքավորումներով, • Մինչև 2026թ. նախադպրոցական հաստատություններում ընդգրկված 3-5 տարեկան երեխաների կշիռը հասցնել առնվազն 85 տոկոսի,

16. Երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության պետական աջակցության 2020-2023թթ. ծրագրեր, ՀՀ կառավարության 14.05.2020թ. N968-Լ որոշում:
 17. Մանկապարտեզ և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության դպրոց:
 18. «ՀՀ կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին ՀՀ օրենք, 17.12.2022թ.:
 19. ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագիր, ՀՀ կառավարության 18.08.2021թ. N 1363-Ա որոշում:

- Համընդհանուր ներառական սովորողակենտրոն կրթական միջավայրի ստեղծում, որը յուրաքանչյուր քաղաքացու համար կյանքի բոլոր փուլերում հասանելի կդարձնի իր զարգացման և անձնային առանձնահատկություններից բխող որակյալ և արդյունավետ կրթական ծառայությունները ՀՀ ողջ տարածքում:

- Բոլոր բնակավայրերում հասանելի կլինեն մատչելի նախադպրոցական ծառայություններ, և յուրաքանչյուր ընտանիք ի վիճակի կլինի օգտվել այդ ծառայություններից,
- Դպրոց ընդունվող բոլոր երեխաները առնվազն մեկ տարի ընդգրկված կլինեն նախադպրոցական ծրագրերում,
- 3-5 տարեկանների առնվազն 95 տոկոսը ընդգրկված կլինի նախադպրոցական ծառայություններում,
- Բոլոր խոշորացված համայնքներում կգործեն մտորի ծառայություններ,
- Բոլոր դպրոցները կունենան պատշաճ կահավորված և արդիական սարքավորումներով հագեցված, սանիտարահիգիենիկ, անվտանգային ստանդարտներին բավարարող և համընդհանուր մատչելի շենքեր,
- Բոլոր դպրոցները համալրված կլինեն որակավորված և սահմանված ստանդարտներին համապատասխան ատեստավորված մանկավարժներով, որոնք կստանան արժանապատիվ վարձատրություն,
- Ոչ մի երեխա դուրս չի մնա պարտադիր կրթության համակարգից:

ԱՇԽՏԱՆՔ. Աշխատանքի կարիքը ներկայացվում է բնակչության աշխատաշուկային մասնակցության, երկարաժամկետ (կառուցվածքային) գործազրկության մեջ գտնվելու, արժանավայել աշխատատեղերի ոչ հասանելիության, ինչպես նաև աշխատաշուկային լիարժեք մասնակցության հնարավորություն չունենալու բնութագրերով:

Աշխատաշուկայի և աշխատանքային հարաբերությունների բարելավման նպատակով կառավարությունը շեշտադրվում են աշխատանքային հարաբերությունների կարգավորման մեխանիզմների բարելավումը, զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի հասցեականության և արդյունավետության բարձրացումը, երիտասարդների, հաշմանդամություն ունեցող անձանց, կանանց մրցունակության բարձրացմանն ուղղված ծրագրերի ներդրումը, «կրթություն-աշխատաշուկա» կապերի խթանումը, աշխատանքը և երեխայի խնամքը համատեղելուն աջակցող միջոցառումները:

ՀՀ աշխատանքի և սոցիալական պաշտպանության 2022-2026թթ. ռազմավարության նա-

խագծով սահմանվում են աշխատուժի մրցունակության և զբաղունակության բարձրացումը, աշխատուժից դուրս բնակչության ակտիվացումը, աշխատանքային իրավունքների իրացման ապահովումը: Թիրախավորվել են երիտասարդների, կանանց, հաշմանդամություն ունեցող անձանց, կենսաթոշակառուների զբաղվածության հարցերը:

«Աշխատիր, Հայաստան» ռազմավարությունը շեշտադրում է աշխատաշուկայի ծածկույթի մեծացումը՝ թիրախավորելով մարզերում տնտեսական ակտիվության աճին ուղղված ներդրումների աճը, երիտասարդների, կանանց, ժամկետային զինծառայությունից վերադարձածների տնտեսական ակտիվության աճը և գործազրկության մակարդակի կրճատումը՝ տարեկան առնվազն 5 տոկոսով:

Զբաղվածության կարգավորման պետական ծրագիրը կարևորում է բնակչության կայուն և արդյունավետ զբաղվածության համար պայմանների ստեղծումը, զբաղվածության ոլորտի ծառայությունների բարելավումը:

Աղյուսակ 6. Աշխատանքի և աշխատանքային հարաբերությունների կարգավորմանն ուղղված քաղաքականությունների շրջանակը

Նպատակներ	Արդյունքներ
<ul style="list-style-type: none"> Աշխատանքի և սոցիալական պաշտպանության ապահովում²⁰: Բարձրացնել աշխատուժի մրցունակությունն ու զբաղունակությունը, ակտիվացնել աշխատուժից դուրս բնակչությունը: Ապահովել աշխատանքային իրավունքների իրացման հնարավորություններ և արժանապատիվ աշխատանքի պայմաններ²¹: 	<ul style="list-style-type: none"> Մինչև 2026թ. նվազագույն աշխատավարձը սահմանել 85,000 դրամ, Աշխատուժի մասնակցության մակարդակը 2020 թվականի 58.5-ի համեմատ հասցնել 65%-ի, Չսովորող ու չաշխատող երիտասարդների մասնաբաժինը 2020 թվականի 31.1%-ի նկատմամբ իջեցնել՝ հասցնելով 18%-ի, Գործազրկության մակարդակը հասցնել 10%-ի, իսկ երկարատև գործազրկության մակարդակը՝ 35%-ի, Տնտեսական մասնակցության և հնարավորությունների ցուցանիշը 0.66-ից (2021 թվական) դարձնել 0.8, Աշխատանքի արտադրողականությունը բարձրացնել տարեկան առնվազն 5%-ով, Չվաճառվող աշխատանք ունեցող տղամարդկանց և կանանց աշխատանքային ծանրաբեռնվածության հարաբերակցությունը 0.4-ից բարձրացնել (2020 թվական) 0.8-ի, Աշխատանքային տարիքի և հաշմանդամություն ունեցող աշխատունակ անձանց շրջանում զբաղվածների տեսակարար կշիռն ավելացնել առնվազն 3%-ով, Աշխատանքային պայմաններից աշխատողների գոհունակության մակարդակի աճ առնվազն 30%-ով, Կենսաթոշակային տարիքի զբաղվածների մասնաբաժինը կենսաթոշակային տարիքի բոլոր անձանց շրջանում 2020թ. 17%-ից բարձրացնել մինչև 20%,
<ul style="list-style-type: none"> Աշխատաշուկայի ծածկույթի մեծացում²² Զբաղվածության խթանում ՀՀ բոլոր տարածաշրջաններում, Թիրախային խմբերի (երիտասարդներ, կանայք, ժամկետային զինծառայողներ) ներառում զբաղվածության ծրագրերում: 	<ul style="list-style-type: none"> ՀՀ բոլոր մարզերում ներդրումների ծավալի ավելացում տարեկան առնվազն 5%-ով՝ նպաստելու տնտեսական ակտիվության աճին, Թիրախային խմբերում գործազրկության մակարդակի նվազեցում տարեկան առնվազն 3%-ով, Թիրախային խմբերում տնտեսական ակտիվության մակարդակի ավելացում տարեկան առնվազն 5%-ով,
<ul style="list-style-type: none"> Բնակչության կայուն և արդյունավետ զբաղվածության համար պայմանների ստեղծում²³: 	<ul style="list-style-type: none"> Զբաղվածության պետական ծրագրերում ընդգրկված անձանց շուրջ 50%-ի կայուն զբաղվածության ապահովում,
<ul style="list-style-type: none"> Զբաղվածության ոլորտի ծառայությունների որակի բարձրացում²⁴: 	<ul style="list-style-type: none"> Աշխատանքի տեղավորվածների կշիռը ծրագրերում ընդգրկվածների մեջ, տարեկան աճ առնվազն 5%-ով, Ծրագրերում ընդգրկվածների կշիռը ընդգրկվելու համար հաշվառվածների մեջ, տարեկան աճ առնվազն 5%-ով, Զբաղվածության ծառայություններից քաղաքացիների գոհունակության մակարդակը՝ 60%,
<ul style="list-style-type: none"> Աշխատանքային պայմանների և հարաբերությունների շարունակական բարելավում²⁵: 	<ul style="list-style-type: none"> Արհմիությունների ներգրավվածության և դերի բարձրացում. հարցվածների 60%-ը դրական է գնահատում արհմիությունների գործունեությունը, Հարցվածների առնվազն 60-ը լավատեղյակ է իր աշխատանքային իրավունքներից և պարտականություններից,
<ul style="list-style-type: none"> Կանանց և տղամարդկանց սոցիալ-տնտեսական անհավասարության նվազեցում, Աշխատանքի շուկայում կանանց մրցունակության բարձրացում, տնտեսական հնարավորությունների ընդլայնում²⁴: 	<ul style="list-style-type: none"> Կանանց զբաղվածության մակարդակի բարձրացում և հանրապետության աղքատ բնակչության կազմում կանանց տեսակարար կշռի կրճատում, ՓՄՁ աջակցության պետական ծրագրի շրջանակներում աջակցություն ստացած կին գործարարների թվաքանակի տարեկան աճ,

20. ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագիր, ՀՀ կառավարության 18.08.2021թ. N1363-Ա որոշում:
 21. ՀՀ աշխատանքի և սոցիալական պաշտպանության 2022-2026թթ. ռազմավարություն, նախագիծ, առ՝ 01.09.2022թ.:
 22. «Աշխատիր, Հայաստան» ռազմավարություն, դրա գործողությունների շրջանակ, ՀՀ կառավարության 05.12.2019թ. N1753-Լ որոշում:
 23. Զբաղվածության կարգավորման 2022թ. պետական ծրագիր և միջոցառումների ցանկ, ՀՀ կառավարության 30.09.2021թ. N1589-Լ որոշում:
 24. ՀՀ-ում զեղեդրային քաղաքականության իրականացման 2019-2023թթ. ռազմավարություն, ՀՀ կառավարության 19.09.2019թ. N1334-Լ որոշում:

- Արդյունաբերական ոլորտներում կանանց համար ստեղծված նոր աշխատատեղերի տարեկան աճ,
- Կանանց արտադրական գործունեությունից ստացվող եկամուտների տարեկան աճ առնվազն հինգ տոկոսով,
- Կանանց տրամադրվող վարկերի տեսակարար կշիռը գյուղատնտեսությունում տնտեսավարողներին տրամադրված վարկերի մեջ՝ 18-20%:

Աշխատանքի շուկայում կանանց մրցունակության բարձրացումը և տնտեսական հնարավորությունների ընդլայնումը շեշտադրվում է նաև ՀՀ-ում գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023թթ. ռազմավարությամբ և ՀՀ կառավարության ծրագրով: Մասնավորապես, կարևորվում է խոցելի խմբերի կանանց սոցիալ-տնտեսական ներուժի ընդլայնված օգտագործման հնարավորությունների ապահովումը, ընտանիքում և կանանց համար աշխատանքային և ընտանեկան պարտականությունները համատեղելու համար նպաստավոր պայմանների ձևավորումը, հասարակության մեջ կնոջ տնտեսական դերի արժևորումը: Թիրախավորում են արդյունաբերական ոլորտներում կանանց համար ստեղծված նոր աշխատատեղերի, նաև կանանց արտադրական գործունեությունից ստացվող եկամուտները աճի ցուցանիշները (տես Աղյուսակ 6):

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ: Առողջապահության կարիքի հիմնական բնութագրերն են ՏՏ անդամի հիվանդության, վնասվածքի կամ վատառողջության պատճառով բնականոն գործունեության դադարեցումը, ֆինանսական միջոցների բացակայությունը՝ օգտվելու առողջապահական ծառայություններից, բուժհաստատությունների, շտապօգնության ծառայության նաև դեղատների ֆիզիկական հասանելիությունը, ինչպես նաև հասանելի առողջապահական ծառայությունների որակը:

Առողջապահության ոլորտում դեռևս բացակա-

յում է ոլորտի զարգացման հիմնական ռազմավարական փաստաթուղթը, որը կարող էր ամփոփել առանձին ուղղություններով և առանձին շահառու խմբերի համար պետության առողջապահական քաղաքականության զարգացման տեսլականը, նպատակադրումները և քաղաքականության երկարաժամկետ արդյունքները:

Ոլորտի քաղաքականությունը հիմնականում ներկայացած է ըստ հիվանդությունների առանձին ուղղությունների քաղաքականություններն ամփոփող ռազմավարական փաստաթղթերում, որոնք սույն հետազոտության տեսանկյունից չեն կարևորվում:

Սոցիալապես անապահով խմբերին ուղղված առողջապահական ծառայությունները, նաև բնակչության դեղապահովմանն ուղղված քաղաքականությունները ձևակերպված են օրենքներով²⁵, որոնք էլ հենց համապատասխան բյուջետային ծրագրերի և միջոցառումների հիմք են հանդիսանում:

Անհատի և հանրային առողջության պահպանումը և բարելավումը, հասանելի, արդիական, բարձր որակի առողջապահական ծառայությունների մատուցումը նպատակադրվում է ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրով: Որպես վերջնական արդյունքներ թիրախավորվում են առողջապահական ծախսերում մասնավոր ծախսերի կրճատումը, առողջապահական հաստատությունների արդիականացումը, ՈՎՀ-ի հետևանքով վաղաժամ մահացության կրճատումը, նաև մանկական և մայրական մահացության կրճատումը:

25. «Բժշկական օգնության և սպասարկման» մասին ՀՀ օրենք և «Դեղերի մասին» ՀՀ օրենք:

Աղյուսակ 7. Առողջապահական կարիքի բավարարմանն ուղղված քաղաքականությունների շրջանակը

Նպատակներ	Արդյունքներ
<ul style="list-style-type: none"> Անհատի և հանրային առողջության պահպանում ու բարելավում՝ ապահովելով հասանելի, արդիական, բարձր որակի առողջապահական ծառայությունների մատուցում²⁶: 	<ul style="list-style-type: none"> Մինչև 2026թ. մասնավոր ծախսերի տեսակարար կշիռը ընդհանուր առողջապահական ծախսերում նվազեցնել 40%-ով, Տարեկան առնվազն 1,5%-ով նվազեցնել առավել տարածված թվով չորս ՈՎՀ-ի հետևանքով առաջացող վաղաժամ մահացությունը, Մինչև 2026թ. մինչև 1 տարեկան մանկական մահացության նվազեցում 15 %-ով, մայրական մահացության (եռամյա) դեպքում՝ 18 %-ով, իսկ մինչև 1 տարեկան երեխաների ընդգրկվածությունը պատվաստումների ծրագրերում կկազմի ավելի քան 95%, Մինչև 2026թ. արդիականացնել 50 առողջապահական հաստատություններ:

3.2. Բյուջետային շրջանակը

Բազմաչափ աղքատության խնդիրներն ընդգրկում են սոցիալական, տարածքային, տնտեսական և ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված բյուջետային ծրագրերը: Նշված ոլորտներում իրականացվում են հանրապետությունում իրականացվող ընդամենը 177²⁷ բյուջետա-

յին ծրագրերից 86-ը, որոնց ուղղվում է ընդամենը պետական ծախսերի 57.8 տոկոսը: Այս ծրագրերին ուղղվող պետական ֆինանսավորման ծավալները վերջին տարիներին արձանագրել են աճի միտում (տես Աղյուսակ 8):

Աղյուսակ 8. Պետական բյուջետային ծրագրերի քանակը և ֆինանսավորման ծավալները 2019-2022թթ.

Պատասխանատու գերատեսչություն	2019		2020		2021		2022*		
	քանակ	մլրդ դրամ	քանակ	մլրդ դրամ	քանակ	մլրդ դրամ	քանակ	մլրդ դրամ	կշիռը, տոկոս
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	16	454.0	17	548.3	17	619.8	16	589.9	26.5
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	26	171.6	22	178.2	22	201.4	24	267.6	12.0
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	23	157.3	20	170.9	21	174.8	21	226.5	10.2
ՀՀ առողջապահության նախարարություն	12	97.6	13	141.8	12	157.9	12	141.4	6.3
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	14	12.5	14	34.0	14	43.4	13	61.5	2.8
Այլ պետական մարմիններ	109	736.4	93	821.5	89	807.0	91	940.5	42.2
Ընդամենը	200	1,629.4	179	1,894.6	175	2,004.3	177	2,227.3	100

*Տարեկան ճշտված պլան՝ ինն ամիսների դրությամբ
 Աղբյուր՝ ՀՀ 2019թ, 2020թ. և 2021թ. պետական բյուջեի կատարման հաշվետվություններ, ՀՀ 2022թ. պետական բյուջեի ինն ամիսների կատարման հաշվետվություն և ՏՀՀԿ հաշվարկներ

26. ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագիր, ՀՀ կառավարության 18.08.2021թ. N1363-Ա որոշում:

27. 2022թ. ինն ամիսների դրությամբ իրականացված բյուջետային ծրագրերի քանակն է:

Ընտրված ոլորտներում իրականացվող ոչ բոլոր ծրագրերն են, որ ուղղակիորեն ազդեցություն ունեն բազմաչափ աղքատության վրա և, հետևաբար, առանձնացնենք այդ իմաստով առանձնակի կարևորություն և ազդեցություն ունեցողները: Այսինքն՝ համապատասխան ոլորտներում ընտրենք այն բյուջետային ծրագրերը, իսկ առանձին դեպքերում՝ բյուջետային միջոցառումները, որոնք բազմաչափ աղքատության առանձին բնութագրերի վրա ազդեցության պոտենցիալ ունեն:

● **Հիմնական կարիքներ**

Բնակչության հիմնական կարիքների բավարարմանը նպաստող բյուջետային ծրագրերը հիմնականում հանդիսանում են ՀՀ ԱՍՀՆ կողմից իրականացվող բյուջետային ծրագրեր: Այս ծրագրային միջոցառումներին 2022 թվականին կուղղվի 118.9 մլրդ դրամ, ինչը կազմում է սոցիալական պաշտպանությանն ուղղված ծրագրերի բյուջեի 20.2 տոկոսը: Նախորդ տարվա համեմատությամբ այս ծրագրերին ուղղվող բյուջետային ռեսուրսները աճել են 8.3 մլրդ դրամով:

Աղյուսակ 9. Բնակչության հիմնական կարիքների բավարարմանն ուղղված բյուջետային ծրագրեր

Դասիչ	Ծրագիր/միջոցառում	2020	2021	2022*
		մլն դրամ		
1011	Անապահով սոցիալական խմբերին աջակցություն	31,606	30,656	28,800
1205-12001**	Ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստներ	23,563	26,308	30,135
1068-11001 1068-12001	Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող վարձու աշխատողին նպաստի տրամադրման ապահովում և տրամադրում	3,740	8,717	11,737
1068-12002	Երեխայի ծննդյան միանվագ նպաստ	16,134	18,360	17,940
1068-12004	Դրամական աջակցություն ընտանիքում 3 և ավելի երեխա ունեցող ընտանիքներին	-	-	2,925
1032	Խնամքի ծառայություններ 18 տարեկանից բարձր տարիքի անձանց	3,240	2,862	3,044
1082	Սոցիալական աջակցություն անաշխատունակության դեպքում	16,568	19,289	18,798
1141	Ընտանիքներին, կանանց և երեխաներին աջակցություն	3,188	2,971	3,303
1160	Հաշմանդամություն ունեցող անձանց աջակցություն	1,137	1,436	2,222
	Ընդամենը	99,176	110,599	118,904

*Տարեկան ճշտված պլան՝ ինն ամիսների դրությամբ, **Ծրագրի և համապատասխան միջոցառման դասիչ Աղբյուր՝ ՀՀ 2020թ. և 2021թ. պետական բյուջեի կատարման հաշվետվություններ, ՀՀ 2022թ. պետական բյուջեի ինն ամիսների կատարման հաշվետվություն և ՏՀՀԿ հաշվարկներ

Նկատենք, որ վերոնշյալ ծրագրերի/միջոցառումների շրջանակներում ընդհանուր առմամբ հանրապետությունում աջակցություն ստացող ընտանիքների և անձանց թվաքանակը կտրուկ կաճի՝ հիմնականում պայմանավորված 3 և ավելի երեխա ունեցող դրամական աջակցություն

ստացող ընտանիքների, մայրության նպաստ ստացող չափսատող անձանց, մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ ստացող քաղաքացիների թվաքանակի աճով: Առանձնացված ծրագրերի շահառուների բաշխումը ներկայացված է ստորև աղյուսակում:

Աղյուսակ 10. Բնակչության հիմնական կարիքների բավարարմանն ուղղված բյուջետային ծրագրերի շահառուներ

Դասիչ	Չափորոշիչ	2021	2022*
1011	Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ ստացող ընտանիքների քանակ	86,943	83,443
	Սոցիալական շտապ օգնության ծառայությունից օգտվող ընտանիքների քանակ	53	536
1205	Ծերության նպաստառուների թիվ	10,583	12,150
	Հաշմանդամության նպաստառուների թիվ	53,694	58,650
	Կերակրողին կորցնելու դեպքում նպաստառուների թիվ	12,350	12,379
1068	Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ ստացող քաղաքացիների թիվ	25,121	34,083
	Երեխայի ծննդյան միանվագ նպաստի շահառու նորածինների թիվ	35,196	37,149
	3 և ավելի երեխա ունեցող ընտանիքներին դրամական աջակցության շահառու ընտանիքների թիվ	-	4,875
1032	Շուրջօրյա խնամքի հաստատություններում խնամվող տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց թիվ	1,115	1,160
	Տնային պայմաններում սպասարկվող տարեցների և հաշմանդամություն ունեցող/ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց թիվ	2,083/56	1,880/50
	Տարեցներին, հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններից՝ սննդի տրամադրման ծառայություններից օգտվողների թիվ	1,334	1,600
	Տարեցների տան կողմից սպասարկվող անձանց (խնամվողների) թիվ	50	55
	Անօթևան մարդկանց համար նախատեսված ժամանակավոր կացարանում խնամվող անձանց թիվ	86	80
	Սոցիալական բնակարանային ֆոնդի կառուցվածքում բնակվող ընտանիքների թիվ	144	144
1082	Մայրության նպաստ ստացող աշխատող անձանց թիվ	15,111	13,145
	Մայրության նպաստ ստացող չաշխատող անձանց թիվ	20,582	24,242
1141	Բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի և հատուկ մասնագիտացված/ ժամանակավոր խնամքի հաստատություններում խնամվող երեխաների թիվ	584/76	585/125
	Երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում խնամվող դպրոցում սովորող և դրամական աջակցություն ստացող երեխաների թիվ	291	250
	Աջակցության կենտրոնում/ սոցիալական հոգաձության ցերեկային կենտրոններում ցերեկային խնամք ստացող երեխաների թիվ	548/3,100	600/1,100
1160	Մտավոր և հոգեկան խնդիրներով հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային սոցիալ-վերականգնողական/ շուրջօրյա խնամքի ծառայություններ ստացող շահառուների թիվ	151/47	330/58

*Տարեկան ճշտված պլան՝ ինն ամիսների դրությամբ
 Աղբյուր՝ ՀՀ 2021թ. պետական բյուջեի կատարման հաշվետվություն, ՀՀ 2022թ. պետական բյուջեի ինն ամիսների կատարման հաշվետվություն և ՏՀՀԿ հաշվարկներ

● Բնակարանային պայմաններ

Բնակչության բնակարանային պայմանների բարելավմանը նպաստող բյուջետային ծրագրերը հանդիսանում են ՀՀ ԱՍՀՆ, ՀՀ ՏԿԵՆ և ՀՀ ԿԳՄՍՆ կողմից իրականացվող բյուջետային ծրագրեր: Դրանք ուղղված են երիտասարդ և երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովման աջակցությանը՝ հիմնականում հիպոթեքային վարկերի տոկոսավճարների

սուբսիդավորմա միջոցով, նաև երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների, զոհված (մահացած) առաջին, երկրորդ և երրորդ խմբի հաշմանդամ զինծառայողների անօթևան ընտանիքների բնակարանային ապահովմանը, ինչպես նաև բնակավայրերի տարբեր ենթակառուցվածքների զարգացմանը: Այս ծրագրերին ուղղվող բյուջետային ռեսուրսները 2022 թվականին կկազմեն 34.6 մլրդ դրամ, ինչը նախորդ

տարվա փաստացի ցուցանիշը գերազանցում է 17.6 տոկոսով, կամ 5.2 մլրդ դրամով: Աճը գերազանցապես պամանավորված է տարածքային զարգացմանը և ենթակառուցվածքների բարելավմանն ուղղված ռեսուրսների աճով:

Վերոնշյալ ծրագրերի արդյունքում հանրապե-

տությունում բնակարանի ապահովման աջակցություն կստանան ավելի քան 16,000 ընտանիքներ, որոնց թվաքանակի կտրուկ աճը հատկապես պայմանավորված է երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովման աջակցության շահառուների թվաքանակի աճով:

Աղյուսակ 11. Բնակչության բնակարանային պայմանների բարելավմանը նպաստող բյուջետային ծրագրերը

Դասիչ	Ծրագիր/միջոցառում	2020	2021	2022*
		մլն դրամ		
1098	Բնակարանային ապահովում	3,958	821	1,055
1068-12003**	Երիտասարդ և երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովման աջակցություն	337	1,267	1,600
1115-12001	Աջակցություն երիտասարդ ընտանիքներին	1,147	1,351	1,738
1232	Էներգաարդյունավետության ծրագիր	-	-	219
1072	Ջրամատակարարման և ջրահեռացման բարելավում	1,765	6,648	11,491
1212-12007	ՀՀ մարզերին սուբվենցիաների տրամադրում՝ ենթակառուցվածքների զարգացման նպատակով	14,051	12,310	13,237
1049 (11005, 11006, 11014, 11003, 21013)	Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավում	4,158	5,359	1,650
1019 (11001, 11003, 12001, 12004)	Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Տարածքային զարգացման հիմնադրամի ծրագիր	2,564	1,670	3,629
	Ընդամենը	27,979	29,426	34,619

*Տարեկան ճշտված պլան՝ ինն ամիսների դրությամբ, **Ծրագրի և համապատասխան միջոցառման դասիչ Աղբյուր՝ ՀՀ 2020թ. և 2021թ. պետական բյուջեի կատարման հաշվետվություններ, ՀՀ 2022թ. պետական բյուջեի ինն ամիսների կատարման հաշվետվություն և ՏՀՀԿ հաշվարկներ

Աղյուսակ 12. Բնակարանային պայմանների բավարարմանն ուղղված բյուջետային ծրագրերի արդյունքային ցուցանիշներ

Դասիչ	Չափորոշիչ	2021	2022*
1098	Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած, զոհված (մահացած) առաջին, երկրորդ և երրորդ խմբի հաշմանդամ զինծառայողների անօթևան ընտանիքներին բնակարանով ապահովում և բնակարանային պայմանների բարելավում, շահառուների թիվ	63	55
1068-12003**	Երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովման աջակցություն, շահառուների թիվ	1,949	9,224
1115-12001	«Երիտասարդ ընտանիքներին մատչելի բնակարաններ» պետական նպատակային ծրագիր, շահառուների թիվ	5,475	6,825
1212-12007	ՀՀ մարզերին սուբվենցիաների տրամադրում՝ ենթակառուցվածքների զարգացման նպատակով, բնակավայրերի թիվ	225	228
1049	Հիմնանորոգվող ճանապարհներ, կմ	55.8	67.8
1072	Նորոգվող ջրագծերի երկարություն, կմ	210.76	306.1
	Նորոգվող կոյուղագծերի երկարություն, կմ	2.67	9.1

*Տարեկան ճշտված պլան՝ ինն ամիսների դրությամբ, **Ծրագրի և համապատասխան միջոցառման դասիչ Աղբյուր՝ ՀՀ 2021թ. պետական բյուջեի կատարման հաշվետվություն, ՀՀ 2022թ. պետական բյուջեի ինն ամիսների կատարման հաշվետվություն և ՏՀՀԿ հաշվարկներ

● **Կրթություն**

Անվճար և որակյալ հանրակրթության ապահովման նպատակ է հետապնդում ՀՀ ԿԳՄՍՆ «Հանրակրթության ծրագիրը», որի բյուջեն նախորդ տարվա համեմատ աճել է 11.1 մլրդ դրամով: Ընդ որում, կրթական օբյեկտների շենքային պայմանների բարելավմանը, գույքով և

տեխնիկայով ապահովմանը, հանրակրթական դպրոցի տարրական դասարանների և նախակրթարանների աշակերտներին սննդով և դպրոցների համալիր անվտանգության ապահովման այլ միջոցառումներին ուղղվող միջոցները կաճեն մոտ 14.8 մլրդ դրամով:

Աղյուսակ 13. Բնակչության կրթական կարիքի բավարարմանն ուղղված բյուջետային ծրագրերը

Դասիչ	Ծրագիր/միջոցառում	2020	2021	2022*
		մլն դրամ		
1146	Հանրակրթության ծրագիր	96,203	99,421	110,539
1183	Ապահով դպրոց	2,733	3,807	16,341
1189	Դպրոցների սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման ծրագիր	5,062	5,646	7,905
	Ընդամենը	103,998	108,875	134,785

*Տարեկան ճշտված պլան՝ ինն ամիսների դրությամբ
 Աղբյուր՝ ՀՀ 2020թ. և 2021թ. պետական բյուջեի կատարման հաշվետվություններ, ՀՀ 2022թ. պետական բյուջեի ինն ամիսների կատարման հաշվետվություն և ՏՀՀԿ հաշվարկներ

Աղյուսակ 14. Կրթական կարիքի բավարարմանն ուղղված բյուջետային ծրագրերի արդյունքային ցուցանիշները

Դասիչ	Չափորոշիչ	2021	2022*
1146	Ընդհանուր կրթության դասարանների սովորողների թիվ	390,347	403,26
	Հատուկ հանրակրթություն, սովորողների միջին տարեկան թիվ	533	611
	Մասնագիտացված հանրակրթություն, սովորողների միջին տարեկան թիվ	3,674	3,926
	Նախադպրոցական կրթություն ստացող երեխաների միջին տարեկան թիվ	7,403	8,563
	Նորարարական մանկավարժական ծրագրերի իրականացում հանրակրթությունում, սովորողների թիվ	6,872	3,200
1183	Հիմնանորոգվող հաստատությունների քանակ	52	3
	Կառուցվող հաստատությունների քանակ	2	2
	Կառուցվող փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցների մոդուլային շենքերի քանակ	21	22
	Ավագ մակարդակի կրթություն իրականացնող հիմնանորոգվող ուսումնական հաստատությունների քանակ	14	3
	Ուսումնական հաստատությունների քանակ, որոնց համար կառուցվում/վերակառուցվում են նոր մարզադահլիճներ	-	30
	Ոչ մոդուլային/հատուկ/մոդուլային դպրոցների թիվը, որոնք ապահովվում են գույքով	-	9/1/16
1189	Կառուցվող և վերակառուցվող (այդ թվում՝ բարձրացված սեյսմակայունությամբ)/կառուցված դպրոցների թիվ	23	24/7

*Տարեկան ճշտված պլան՝ ինն ամիսների դրությամբ
 Աղբյուր՝ ՀՀ 2021թ. պետական բյուջեի կատարման հաշվետվություն, ՀՀ 2022թ. պետական բյուջեի ինն ամիսների կատարման հաշվետվություն և ՏՀՀԿ հաշվարկներ

Արդյունքում նախատեսվում է, որ արդեն տարվա ընթացքում կաճեն դպրոցական կրթության համակարգում ընդգրկվածության, կրթական հաստատությունների (մանկապարտեզ և լրիվ միջնակարգ կրթության դպրոց) ֆիզիկական հասանելիության, ցուցանիշները:

Արդեն 2024 թվականի համար բյուջետային ծրագրերը թիրախավորում են կրթական ծառայու-

թյունների հասանելիության էական աճ՝ 99 տոկոս ընդգրկվածություն պարտադիր կրթության համակարգում, 70 տոկոս ընդգրկվածություն նախադպրոցական հաստատություններում, մարզերի բոլոր դպրոցների կողմից նախակրթարանների և տարրական դասարանների սովորողներին կայուն դպրոցական սննդով ապահովում և այլն (Աղյուսակ 15):

Աղյուսակ 15. Բյուջետային ծրագրերի՝ կրթության որակի և հասանելիության հիմնական արդյունքային ցուցանիշները

Դասիչ	Չափորոշիչ	Ելակետային ցուցանիշը/ 2020	Թիրախային ցուցանիշը/ 2024
1146	Պարտադիր կրթության համակարգում ընդգրկվածությունը, տոկոս	90	99
	3-5 տարեկան երեխաների համախառն ընդգրկվածությունը նախադպրոցական հաստատություններում, տոկոս	61.3	70
	Սովորողների համամասնությունը հիմնական դպրոցն ավարտելիս, ովքեր ձեռք են բերել գիտելիքների առնվազն նվազագույն մակարդակ ընթերցանությունից և մաթեմատիկայից՝ տոկոս	87.7	100
	Վերապատրաստված ուսուցիչների մասնաբաժինը, տոկոս	0	45
1183	ՀՀ մարզերում նախակրթարանների և տարրական դասարանների սովորողներին կայուն դպրոցական սննդով ապահովող դպրոցների տեսակարար կշիռը, տոկոս	38	100
1189	Սեյսմիկ անվտանգության չափանիշներին համապատասխան վերակառուցված դպրոցների թիվը	0	46

Աղբյուր՝ ՀՀ կառավարության 2022թ. բյուջետային ուղերձ

● **Աշխատանք**


Աշխատանքի և զբաղվածության կարիքին է ուղղված ԱՍՀՆ կողմից իրականացվող Զբաղվածության ծրագիրը (1088): Ծրագրի նպատակը բնակչության կայուն և ժամանակավոր զբաղվածության ապահովմանը միտված պայմանների ստեղծումն է: Ծրագիրը թիրախավորում է գործազուրկի կարգավիճակ ստացածների

թվաքանակում՝ ծրագրում ընդգրկված անձանց տեսակարար կշռի աճը մինչև 58 տոկոս 2024 թվականին՝ ելակետային 41.7 տոկոսի դիմաց²⁸:

Ծրագրի բյուջեն 2022 թվականին աճել է 154 մլն դրամով, հիմնականում պայմանավորված զբաղվածության ապահովմանն ուղղված նոր միջոցառումների իրականացմամբ (մանրամասները տես Հավելված 2-ում):


28. ՀՀ կառավարության 2022 թվականի բյուջետային ուղերձ:

Գծապատկեր 1. Զբաղվածության ծրագրի ֆինանսավորման ծավալները 2020-2022թթ., մլն. դրամ



*Տարեկան ճշտված պլան՝ ինն ամիսների դրությամբ
 Աղբյուր՝ ՀՀ 2020թ. և 2021թ. պետական բյուջեի կատարման հաշվետվություններ, ՀՀ 2022թ. պետական բյուջեի ինն ամիսների կատարման հաշվետվություն և ՏՀՀԿ հաշվարկներ

Գծապատկեր 2. Զբաղվածության ծրագրի ֆինանսավորման կառուցվածքը, 2022թ., տոկոս



- Աշխատաշուկայում անմրցունակ անձանց անասնապահությամբ զբաղվելու համար աջակցության տրամադրում
- Երեխայի խնամքի արձակուրդում գտնվող անձանց՝ խնամքն աշխատանքին զուգահեռ կազմակերպելու համար աջակցություն
- Գյուղացիական տնտեսությունների սեզոնային զբաղվածության ապահովում
- 2020թ. 44-օրյա պատերազմի հետևանքով տեղահանված, ՀՀ-ում գտնվող ԱՀ գործազուրկ քաղաքացիների՝ աշխատանքային փորձ ձեռքբերելու համար աջակցություն
- Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող «Աշխատանքի էլեկտրոնային Բորսա» դրամաշնորհային ծրագիր
- Ձեռք բերած մասնագիտությամբ աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկների աջակցություն
- Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցում
- Հասարակական աշխատանքների միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովում
- 2016 և 2020 թվականներին սանձազերծված ռազմական գործողություններին մասնակցած գործազուրկ անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպման և զբաղվածության ապահովում
- Այլ

*Տարեկան ճշտված պլան՝ ինն ամիսների դրությամբ
 Աղբյուր՝ ՀՀ 2022թ. պետական բյուջեի ինն ամիսների կատարման հաշվետվություն և ՏՀՀԿ հաշվարկներ

Ծրագրին ուղղված ռեսուրսների գերակշիռ մասը՝ 24.3 տոկոսն ուղղվում է աշխատաշուկայում անմրցունակ անձանց անասնապահությամբ զբաղվելու համար աջակցության տրամադրմանը, իսկ 21.2 տոկոսը՝ երեխայի խնամքն աշ-

խատանքին զուգահեռ կազմակերպելու համար դայակի ծառայությունների տրամադրմանը²⁹: Նշված միջոցառումների շրջանակում 2022 թվականին աջակցություն կստանան համապատասխանաբար 461 և 526 շահառուներ:

29. 2022 թվականի հունվարի 1-ից նոր շահառուների ընդգրկման գործընթացը դադարեցվել է: Միջոցառմամբ շարունակվում են ֆինանսավորվել 2020-2021 թվականների ընթացքում կնքված պայմանագրերը:

Աղյուսակ 16. Զբաղվածության ծրագրի շահառուները

Շահառուներ	2021	2022*
Մասնագիտական ուսուցում անցած գործազուրկների, աշխատանքից ազատման ռիսկ ունեցող, նաև ազատագրված ձևով պատիժը կրելու ավարտին վեց ամիս մնացած աշխատանք փնտրողների թիվ	487	-
Մասնագիտական դասընթաց անցած հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների թիվ	28	-
Մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար աջակցություն ստացած գործազուրկներ	353	367
2016 և 2020 թվականներին սանձագերծված ռազմական գործողություններին մասնակցած գործազուրկ անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպման և զբաղվածության ապահովում ծրագրի շահառուների թիվ	-	200
Գործատուի մոտ մասնագիտական ուսուցում անցած աշխատաշուկայում անմրցունակ և մասնագիտություն չունեցող մայրերի թիվ	106	-
Աշխատաշուկայում անմրցունակ անձիք, որոնց աշխատանքի տեղավորման համար գործատուին տրամադրվել է փոխհատուցում	359	489
Սեզոնային զբաղվածության խթանման համար աջակցություն ստացած գյուղացիական տնտեսություններ	1,076	716
Երեխայի խնամքն աշխատանքին զուգահեռ կազմակերպելու համար դայակի ծառայություններ ստացած շահառուներ	597	526
Վարձատրվող հասարակական աշխատանքներ կատարող գործազուրկներ	-	480
Մասնապահությամբ զբաղվելու համար աջակցություն ստացած աշխատաշուկայում անմրցունակ անձիք	475	461
Աշխատանքային փորձ ձեռքբերելու համար աջակցություն ստացած պատերազմի հետևանքով տեղահանված և ՀՀ-ում գտնվող ԱՀ գործազուրկ քաղաքացիներ	388	388
Վարձատրվող հասարակական աշխատանքներ կատարող պատերազմի հետևանքով տեղահանված և ՀՀ-ում գտնվող ԱՀ գործազուրկ քաղաքացիներ	85	10

*Տարեկան ճշտված պլան՝ ինն ամիսների դրությամբ
 Աղբյուր՝ ՀՀ 2022թ. պետական բյուջեի ինն ամիսների կատարման հաշվետվություն և ՏՀՀԿ հաշվարկներ

● **Առողջապահություն**

ՀՀ պետական բյուջեում առանձնացվել են թվով 6 բյուջետային ծրագրեր, որոնք, համաձայն բազմաչափ աղքատության բնութագրերի, նպաստում են բնակչության առողջապահական կարիքի նվազեցմանը: Այս ծրագրերին ուղղվող

ռեսուրսները 2022 թվականին աճել են 1.2 մլրդ դրամով: Աճը գերազանցապես պայմանավորված է սոցիալապես անապահով և առանձին խմբերի անձանց բժշկական օգնությանը և մոր ու մանկան առողջության պահպանմանն ուղղվող ռեսուրսների ավելացմամբ:

Աղյուսակ 17. Բնակչության առողջապահական կարիքի բարելավմանն ուղղված բյուջետային ծրագրերը

Դասիչ	Ծրագիր/միջոցառում	2020	2021	2022*
		մլն դրամ		
1207	Սոցիալապես անապահով և առանձին խմբերի անձանց բժշկական օգնություն	25,983	34,066	35,039
1099	Առողջության առաջնային պահպանում	27,033	28,444	28,433
1188	Դեղապահովման ծրագիր	3,314	3,869	3,880
1200	Մոր և մանկան առողջության պահպանում	16,971	19,246	19,602
1201	Շտապ բժշկական օգնություն	5,472	4,935	4,800

1191-11003**	Բժիշկ-մասնագետների ժամանակավոր ուղեգրման միջոցով ՀՀ մարզային առողջապահական կազմակերպություններում բժշկական ծառայությունների մատուցում	50	46	100
	Ընդամենը	78,822	90,605	91,853

*Տարեկան ճշտված պլան՝ ինն ամիսների դրությամբ, **Ծրագրի և համապատասխան միջոցառման դասիչ Աղբյուր՝ ՀՀ 2020թ. և 2021թ. պետական բյուջեի կատարման հաշվետվություններ, ՀՀ 2022թ. պետական բյուջեի ինն ամիսների կատարման հաշվետվություն և ՏՀՀԿ հաշվարկներ

2022 թվականին հիմնականում նկատվել է բժշկական ծառայություններ ստացող շահառուների թվաքանակի կրճատում: Բացառություն են կազմում ամբուլատոր-պոլիկլինիկական, դիսպանսերային և հիվանդանոցային բժշկական հաստատությունների միջոցով անվճար դեղո-

րայք ստացող շահառուները, որոնց թվաքանակն աճել է մոտ 67,500 անձով: Էսպես աճել է նաև հղիների նախաձննդյան և հետձննդյան հսկողության ընթացքում իրականացվող լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների թիվը՝ մոտ 173,000-ով:

Աղյուսակ 18. Առողջապահական կարիքին ուղղված բյուջետային ծրագրերի շահառուները

Դասիչ	Չափորոշիչ	2021	2022*
1207	Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածների բժշկական օգնության ծառայություններից օգտվելու դեպքերի թիվ	259,873	182,707
	Ստոմատոլոգիական բժշկական օգնության գծով դեպքերի թիվ	102,636	100,000
	Զինծառայողներին, ինչպես նաև փրկարար ծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին բժշկական օգնության գծով ծառայություններից օգտվելու դեպքերի թիվ	57,361	62,469
	Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների բժշկական օգնության գծով ծառայություններից օգտվելու դեպքերի թիվ	28,866	12,377
1099	Բնակչության առողջության առաջնային պահպանման կազմակերպություններում գրանցված բնակչության թիվ	3,077,381	2,940,000
	Դպրոցում բժշկական օգնություն և սպասարկում ստացող աշակերտների թիվ	385,183	374,000
	Անվճար և արտոնյալ պայմաններով դեղեր ստանալու իրավունք ունեցող անձանց ընդամենը թիվ	1,036,871	1,036,871
	Հղիների նախաձննդյան և հետձննդյան հսկողության ընթացքում իրականացվող լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների թիվ	701,232	874,000
	Ախտորոշման ճշման նպատակով լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ նեղ մասնագիտացված կենտրոններում, հետազոտությունների թիվ	195,230	105,000
1188	Ամբուլատոր-պոլիկլինիկական, դիսպանսերային և հիվանդանոցային բժշկական հաստատությունների միջոցով անվճար դեղորայք ստացող հիվանդների թիվ	199,679	267,175
1200	Մանկաբարձական բժշկական օգնության ծառայություններից օգտվելու դեպքերի թիվ	51,631	53,400
	Երեխաների բժշկական օգնության գծով ծառայություններից օգտվելու դեպքերի թիվ	89,889	89,700
	Մտավոր, հոգեկան (վարքագծային), լսողական, ֆիզիկական (շարժողական) և զարգացման այլ խանգարումներով երեխաների վերականգնողական բուժման գծով ծառայություններից օգտվելու դեպքերի թիվ	91,782	92,969
1201	Շտապ բժշկական օգնության գծով կանչերի թիվ	571,438	550,000
1191	Մարզեր ուղեգրված բժիշկների թիվ	9	50

*Տարեկան ճշտված պլան՝ ինն ամիսների դրությամբ
 Աղբյուր՝ ՀՀ 2021թ. պետական բյուջեի կատարման հաշվետվություն, ՀՀ 2022թ. պետական բյուջեի ինն ամիսների կատարման հաշվետվություն և ՏՀՀԿ հաշվարկներ

Այսպիսով, բազմաչափ աղքատության վրա ուղղակիորեն ազդեցություն ունեցող բյուջետային

ծրագրերի/միջոցառումների ֆինանսավորմանը 2022 թվականին կուղղվի ՀՀ պետական բյուջեի 17.2 տոկոսը կամ 382.0 մլրդ դրամ: Նկատենք, որ բազմաչափ աղքատության ծախսերի կա-

ռուցվածքում գերակշռող կշիռ ունեն կրթության կարիքին ուղղված ռեսուրսները՝ 35.3 տոկոս, ինչպես նաև բնակչության հիմնական կարիք-ների ուղղված ռեսուրսները՝ 31.1 տոկոս:

Աղյուսակ 19. Բազմաչափ աղքատության վրա ազդեցության պոտենցիալ ունեցող բյուջետային ֆինանսավորման ծավալները, 2020-2022թթ.

Բազմաչափ աղքատության բնութագրեր	2020	2021	2022*	2022
	մլն դրամ			տոկոս
Հիմնական կարիքներ	99,176	110,599	118,904	31.1
Բնակարանային պայմանների բարելավում	27,979	29,426	34,619	9.1
Կրթության կարիք	103,998	108,875	134,785	35.3
Աշխատանքի և զբաղվածության կարիք	1,942	1,702	1,856	0.5
Առողջապահության կարիք	78,822	90,605	91,853	24.0
Ընդամենը, մլն դրամ	311,917	341,207	382,017	100
Ընդամենը, տոկոս պետական բյուջեում	16.5	17.0	17.2	

*Տարեկան ճշտված պլան՝ ինն ամիսների դրությամբ
 Աղբյուր՝ ՀՀ 2020թ. և 2021թ. պետական բյուջեի կատարման հաշվետվություն, ՀՀ 2022թ. պետական բյուջեի ինն ամիսների կատարման հաշվետվություն և ՏՀՀԿ հաշվարկներ

3.3. Համայնքային բյուջեները և աղքատության հաղթահարման պոտենցիալը

Ինչպես ցույց է տալիս համայնքային բյուջետային եկամուտների մակարդակը, դրանց դինամիկան և կառուցվածքը, համայնքներին բնորոշ է եկամուտների գեներացման ցածր տնտեսական պոտենցիալ:

Չնայած ընդհանուր առմամբ հանրապետությունում համայնքների ամփոփ եկամուտների աճը 2022 թվականին նախատեսվում է, որ կհասնի 21.4 տոկոսի և կկազմի մոտ 209.5 մլրդ դրամ, սակայն ծրագրի շահառու մարզերում այն առավել փոքր է՝ Լոռու և Շիրակի մարզերում աճը կկազմի համապատասխանաբար 4.8 և 2.4 տոկոս, իսկ Տավուշում եկամուտները կնվազեն 3.1 տոկոսով (տե՛ս Աղյուսակ 20):

Մեկ շնչի հաշվով համայնքային եկամուտների մակարդակը 2022 թվականին աճել է հանրապետության բոլոր մարզերում, բացի Տավուշից, որտեղ անկումը կազմել է 2.5 տոկոս: Ընդհանուր

առմամբ, Տավուշի և Շիրակի մարզերը հանդիսանում են մեկ շնչի հաշվով ամենացածր եկամուտներ գեներացնող մարզերը՝ Արարատի և Արմավիրի մարզերից հետո: Միջին հանրապետական մակարդակը մեկ շնչի հաշվով համայնքային եկամուտների հանրապետությունում կազմում է 70,728 դրամ, որը նախորդ տարվա մակարդակը գերազանցում է 21.5 տոկոսով: Համեմատության համար նշենք, որ Երևանում մեկ շնչի հաշվով համայնքային եկամուտների մակարդակը կազմում է մոտ 97,500 դրամ:

Համայնքների սեփական եկամուտների բաժինը ընդամենը եկամուտների կառուցվածքում հանրապետությունում կազմում է 31.5 տոկոս, ինչը նախորդ տարվա մակարդակը զիջում է մոտ 2.0 տոկոսային կետով: Շահառու մարզերից Շիրակի դեպքում սեփական եկամուտների կշիռը կազմում է 32.5 տոկոս, իսկ Լոռիում և Տավուշում

համեմատաբար ցածր են՝ համապատասխանաբար 26.4 և 26.7 տոկոս: Նկատենք, որ բոլոր երեք մարզերում սեփական եկամուտների կշիռը նախորդ տարվա համեմատությամբ դրսևորել է աճի վարքագիծ: Այս ցուցանիշով ևս շահառու մարզերն աչքի են ընկնում սեփական եկամուտ-


ների ցածր մակարդակով՝ մասնավորապես Լոռին և Տավուշը: Նկատենք, որ առավել բարձր մակարդակ են ապահովում Արարատի, Արմավիրի և Կոտայքի մարզերը:

Աղյուսակ 20. Համայնքային բյուջեների ամփոփ եկամուտների կառուցվածքը, մլն դրամ


	Լոռի			Տավուշ			Շիրակ			ՀՀ		
	2020	2021	202230	2020	2021	2022	2020	2021	2022	2020	2021	2022
Ընդամենը եկամուտներ	10,252	11,343	11,890	4,980	5,817	5,634	9,741	10,738	10,997	154,028	172,466	209,452
Սեփական եկամուտներ	2,313	2,799	3,136	1,013	1,343	1,506	2,267	2,876	3,578	46,270	57,839	66,012
Պետական բյուջեից տրանսֆերտներ	7,585	8,056	8,023	3,880	4,387	4,122	7,383	7,764	7,390	79,364	83,565	89,496
Դոտացիա	5,829	6,587	6,328	2,991	3,738	3,768	5,732	6,498	6,467	58,427	64,594	64,347
Սուբվենցիա	1,756	1,469	1,695	888	650	353	1,651	1,266	922	20,937	18,971	25,149
Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ	8	11	57	2	7	0	1	6	8	357	370	2,190
Այլ եկամուտներ	346	477	674	85	80	6	90	92	21	28,037	30,692	51,754

2022 թվականը՝ առաջին կիսամյակի դրությամբ տարեկան ճշտված պլան Աղբյուր՝ ՀՀ ՏԿԵՆ և ՏՀՀԿ հաշվարկներ

Գծապատկեր 3. Մեկ շնչի հաշվով համայնքային ամփոփ եկամուտների մակարդակը և աճը



Գծապատկեր 4. Համայնքների սեփական եկամուտների կշիռը համայնքային ամփոփ եկամուտների կառուցվածքում, տոկոս



* 2022 թվականը՝ առաջին կիսամյակի դրությամբ տարեկան ճշտված պլան Աղբյուր՝ ՀՀ ՏԿԵՆ և ՏՀՀԿ հաշվարկներ

Դրամաշնորհների կազմում գերակշիռ մասը՝ ավելի քան 97.6 տոկոսը կազմում են ներքին

30. Լոռու մարզի 2022թ. բյուջետային եկամուտներում Վանաձոր համայնքի եկամուտների մակարդակը վերցվել է 2021թ. փաստացի եկամուտներին հավասար, քանի որ Լոռու մարզի համայնքների բյուջետային եկամուտներում Վանաձոր համայնքի եկամուտների պլանավորումը բացակայում է՝ <https://mtad.am/pages/budgetary-revenues-ra-communities>:


դրամաշնորհները, այսինքն՝ պետական բյուջեից համայնքների բյուջեներին տրամադրվող դոտացիաները և սուբվենցիաները: Արտաքին դրամաշնորհների մակարդակը շատ փոքր է և կազմում է ընդամենը 2.2 մլրդ դրամ, որը 2021 թվականի մակարդակը գերազանցում է ավելի քան 6 անգամ:

Ներքին դրամաշնորհներին բաժին է ընկնում ընդամենը համայնքային եկամուտների 42.7 տոկոսը, Երևանի դեպքում՝ 19.2 տոկոսը, մարզային միջին մակարդակը՝ 67.3 տոկոս է:

Ներքին դրամաշնորհների կառուցվածքում գե-

րակշռում են դոտացիաները, որոնց թե՛ ծավալը և թե՛ կշիռը հանրապետության մակարդակով նվազել է: Սուբվենցիաների ծավալը դրսևորում է հակառակ միտում: 2022 թվականին պետական բյուջեից համայնքներին տրամադրվող սուբվենցիաները կաճեն մոտ 32.6 տոկոսով՝ կազմելով 25.1 մլրդ դրամ: Չնայած հանրապետական միտումներին, Շիրակի և Տավուշի մարզերում սուբվենցիաների ծավալը նվազել է համապատասխանաբար 27.2 և 45.6 տոկոսով: Լոռիում սուբվենցիաների ծավալն աճել է 15.4 տոկոսով:

Գծապատկեր 5. Համայնքային ամփոփ բյուջեների ներքին դրամաշնորհների կառուցվածքը, 2021 և 2022 թվականներ




*2022 թվականը՝ առաջին կիսամյակի դրությամբ տարեկան ճշտված պլան Ադրյուր՝ ՀՀ ՏԿԵՆ և ՏՁՀԿ հաշվարկներ

Ի տարբերություն 2022 թվականին ՀՀ համայնքային բյուջեներով պլանավորված մակարդակների, ՀՀ կառավարության կողմից հաստատված սուբվենցիոն ծրագրերի համաձայն 2022 թվականին սուբվենցիոն ֆինանսավորման ծավալները շահառու մարզերում զիջում են 2019-2021 թվականների միջին տարեկան մակարդակները:

Լոռիում տարվա ընթացքում հաստատվել են 700.6 մլն դրամ ընդամենը արժեքով ծրագրեր, Շիրակում՝ 490.7 մլն դրամ, իսկ Տավուշում՝ 551.4 մլն դրամ: Նկատենք, որ սուբվենցիոն ծրագրերի ֆինանսավորման ամենամեծ ծավալներն արձանագրվել են 2020 թվականին (Տե՛ս Գծապատկեր 6):

Գծապատկեր 6. Պետական սուբվենցիաների (կապիտալ) ծավալների համեմատական՝ 2019-2022թթ., մլն. դրամ



*2022 թվականը 15.10.2022թ. դրությամբ Աղբյուր՝ ՀՀ կառավարության որոշումներ և ՏՀՀԿ հաշվարկներ

Իրականացվող սուբվենցիոն ծրագրերն իրենց բնույթով գերազանցապես բազմաչափ աղքատության կրճատման պոտենցիալ ունեն: Լոռիում և Շիրակում 2022 թվականին իրականացվող ծրագրերի ֆինանսավորման ավելի քան 90 տոկոսը կարելի է համարել բազմաչափ աղքատության վրա ազդեցություն ունեցող ծրագրեր: Տավուշի դեպքում ֆինանսավորված բոլոր

ծրագրերն այդպիսին են: Նկատենք, որ բոլոր երեք մարզերում այս ծրագրերի կառուցվածքում մեծ է համայնքային ճանապարհների կառուցմանը և վերանորոգմանը միտված ծրագրերի կշիռը: Հետևում են փողոցային լուսավորության համակարգերի, խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցման և նորոգման ծրագրերը (տես Աղյուսակ 21):

Աղյուսակ 21. Շահառու մարզերում իրականացվող սուբվենցիոն ծրագրերը, 2021 և 2022 թվականներ, մլն դրամ

Ծրագրերի ուղղվածությունը	Լոռի		Տավուշ		Շիրակ	
	2021	2022*	2021	2022*	2021	2022*
Փողոցային լուսավորության համակարգի կառուցում/նորոգում	135.6	102.1	5.1	172.6	41.5	39.6
Ճանապարհների կառուցում/նորոգում	354.8	194.5	388.3	328.5	529.7	376.1
Խմելու ջրամատակարարման, ջրահեռացման համակարգի կառուցում/նորոգում	87.3	168.4	-	25.8	84.9	16.7
Շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգում և էներգաարդյունավետության բարձրացում	246.0	50.4	109.9	24.6	12.8	-
Բնակավայրերի գազաֆիկացում	151.1	43.0	-	-	-	13.0
Միկրոավտոբուսների ձեռքբերում	-	-	-	-	441.0	-
Մանկապարտեզների կառուցում/նորոգում	-	78.3	-	-	93.0	-
Այլ	384.5	63.8	44.6	-	153.6	45.3
Ընդամենը	1,359.3	700.6	548.0	551.4	1,356.4	490.7

*2022 թվականը 15.10.2022թ. դրությամբ Աղբյուր՝ ՀՀ կառավարության որոշումներ և ՏՀՀԿ հաշվարկներ

Շահառու մարզերում համայնքային ծախսերի ամենամեծ գործառնական ուղղությունը «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններն» են, որին ուղղվում է ծախսերի 25.5 տոկոսը, համապատասխան հանրապետական մակարդակն ավելի ցածր է և կազմում է 17.9 տոկոս: Սա նշանակում է համայնքային ծախսերի մեծ մասն ուղղվում է համանքապետարանի պահպանմանը և համայնքային ծառայողների աշխատավարձերին: Պետք է նկատել, որ այս կշիռը վերջին տարիներին հիմնականում նվազման վարքագիծ է դրսևորում:

Հաջորդում են «Կրթություն», «Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ» և «Տնտեսական հարաբերություններ» գործառնական ոլորտները: Գրեթե բոլոր մարզերում տնտեսական ոլորտում կատարվող ծախսերը

գերազանցապես ուղղվում են տրանսպորտ խմբին: Կրթության ծախսերի դեպքում ծախսերի գերակշիռ մասն ուղղվում է նախադպրոցական կրթությանը:

Շահառու մարզերի համայնքներում սոցիալական ծրագրեր իրականացմանն ուղղվող բյուջետային ռեսուրսները կազմում են մոտ 1 տոկոս, առողջապահական ծրագրեր համայնքների կողմից գրեթե չեն իրականացվում: Տավուշի մարզում մեծ է կրթական ծրագրերին ուղղվող բյուջետային ծախսերի մասնաբաժինը՝ 30.5 տոկոս, միևնույն ժամանակ փոքր է տնտեսական ծրագրերի մասնաբաժինը: Շիրակում և Լոռիում կառուցվածքը տարբերվում է Տավուշից: Այս մարզերում համեմատաբար մեծ է տնտեսական ծրագրերին ուղղվող ռեսուրսների մասնաբաժինը:

Աղյուսակ 22. Համայնքային բյուջեների ամփոփ ծախսերի կառուցվածքը, տոկոս

	Լոռի			Տավուշ			Շիրակ			ՀՀ		
	2020	2021	2022	2020	2021	2022	2020	2021	2022	2020	2021	2022
Ընդամենը ծախսեր	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100
Սոցիալական պաշտպանություն	2.0	1.1	0.9	1.7	1.4	1.0	2.5	1.5	1.1	2.2	1.7	1.3
Կրթություն	25.3	23.2	18.2	29.8	29.4	30.5	16.8	16.6	17.5	36.0	31.6	26.6
Նախադպրոցական կրթություն	52.5	58.1	71.9	69.1	70.2	62.6	71.3	75.1	76.6	39.2	45.6	46.9
Առողջապահություն	0.0	0.0	0.1	0.0					0.0	0.3	0.3	0.4
Հանգիստ, մշակույթ և կրոն	9.8	9.6	11.4	6.6	6.6	7.8	16.1	15.9	14.0	6.4	6.6	6.2
Բնակ. շինարարություն և կոմունալ ծառայություններ	13.6	15.3	16.9	6.9	11.0	15.7	8.3	11.2	10.9	9.7	9.4	10.5
Տնտեսական հարաբերություններ	9.6	14.0	19.4	12.0	8.0	5.4	16.6	22.1	19.4	7.8	14.0	20.9
Գյուղատնտեսություն	11.9	26.1	10.7	2.2	15.4	16.1	9.4	7.2	5.0	18.2	10.7	7.0
Վառելիք և էներգետիկա	16.1	12.1	6.4	0.0	0.0	0.0	4.7	5.7	1.1	9.0	12.2	8.6
Տրանսպորտ	129.1	120.8	108.5	176.4	228.6	247.7	113.7	122.4	101.2	247.3	198.6	113.4
Շրջակա միջավայրի պաշտպանություն	8.3	9.7	5.6	13.7	13.8	10.0	8.2	7.2	7.6	12.2	10.9	9.9
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	31.2	27.1	25.5	29.0	29.5	24.2	31.0	25.2	26.7	22.2	21.0	17.9
Այլ	0.1	0.0	2.2	0.3	0.2	5.4	0.4	0.2	2.8	3.2	4.5	6.3
Ընդամենը ծախսեր, մլն դրամ	9,118.1	11,641.5	10,142.2	4,819.4	5,523.3	6,858.4	8,503.3	11,151.0	13,255.0	132,479.4	173,106.0	247,652.0

* 2022 թվականը՝ առաջին կիսամյակի դրությամբ տարեկան ճշտված պլան Աղբյուր՝ ՀՀ ՏԿԵՆ և ՏՁՀԿ հաշվարկներ



ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ
ՍՈՑԻԱԼ-
ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ
ԲՆՈՒԹԱԳԻՐԸ




4.1. Ժողովրդագրություն



Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերում կենտրոնացած է ՀՀ բնակչության 19 տոկոսը կամ մարզային բնակչության 30 տոկոսը: Լոռու բնակչությունը կազմում է հանրապետության բնակչության 7.2 տոկոսը, Շիրակինը՝ 7.8 տոկոսը, իսկ Տավուշինը՝ 4.1 տոկոսը:

Հոյությունը կազմում է հանրապետության բնակչության 7.2 տոկոսը, Շիրակինը՝ 7.8 տոկոսը, իսկ Տավուշինը՝ 4.1 տոկոսը:

Գծապատկեր 7. ՀՀ բնակչության բաշխումն ըստ ՀՀ մարզերի և քաղաք Երևանի, 2021 թվականի տարեսկզբի դրությամբ, 1000 մարդ




Աղբյուր՝ ՀՀ ՎԿ, ժողովրդագրական տվյալների բազա

Շահառու մարզերում բնակչության գենդերային և տարիքային բաշխումներն էապես տարբեր չեն: Ընդ որում, հետազոտության արդյունքները գրեթե համընկնում են ՀՀ ՎԿ կողմից հրատարակվող պաշտոնական վիճակագրության տվյալների հետ:

ընդ որում, հետազոտության արդյունքները գրեթե համընկնում են ՀՀ ՎԿ կողմից հրատարակվող պաշտոնական վիճակագրության տվյալների հետ:

Գծապատկեր 8. Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերի բնակչության բաշխումն ըստ սեռի




Աղբյուր՝ SՁՀԿ F3 հետազոտություն, ՀՀ ՎԿ ժողովրդագրական տվյալների բազա

Երեք մարզերի բնակչության կառուցվածքում գերակշռում են մինչև 18 տարեկանները, ինչպես նաև՝ 31-45 տարեկանները: Գենդերային բաշ-

խումը գրեթե հավասարաչափ է՝ կանայք փոքր-ինչ ավելի շատ են, քան տղամարդիկ:

Գծապատկեր 9. Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերի բնակչության բաշխումն ըստ տարիքի և սեռի, տոկոս



Աղբյուր՝ ՏՀԿ Բ3 հետազոտություն, « 44՝ ժողովրդագրական տվյալների բազա

Համաձայն հետազոտության արդյունքների՝ միջին ՏՏ-ն կազմված է 4.2 անդամից, մասնավորապես՝ Լոռիում 3.9 անդամից, Շիրակում 4.0 անդամից և Տավուշում 4.6 անդամից: Երեխա ունեցող ՏՏ-ները կազմում են ընդամենը ՏՏ-ների

53.5 տոկոսը, որոնցում հաշվվում է միջինում 1.9 երեխա: Երկու և ավելի երեխա ունեցող ՏՏ-ները կազմում են ՏՏ-ների ընդամենը 34.8 տոկոսը: Ընդ որում, նման ՏՏ-ները գերակշռում են Տավուշի մարզում՝ 40.4 տոկոս:

Աղյուսակ 23. Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերի ՏՏ-ների կառուցվածքը, տոկոս

	Լոռի	Շիրակ	Տավուշ	Ընդամենը
ՏՏ անդամների քանակ				
ՏՏ անդամների միջին թիվ	3.9	4.0	4.6	4.2
ՏՏ-ում երեխաների միջին թիվ	1.9	1.9	1.9	1.9
Երեխաների առկայություն				
Երեխա ունեցող ՏՏ-ներ	49.1	48.4	63.1	53.5
1 երեխա ունեցող ՏՏ-ներ	17.2	16.3	22.7	18.7
2 և ավելի երեխա ունեցող ՏՏ-ներ	31.9	32.1	40.4	34.8
Ծերերի առկայություն				
Ծեր ունեցող ՏՏ-ներ	52.5	52.5	51.5	52.2
1 ծեր ունեցող ՏՏ-ներ	38.5	35.3	33.0	35.6
2 և ավելի ծեր ունեցող ՏՏ-ներ	14.1	17.2	18.5	16.6
Միայն ծերերից բաղկացած ՏՏ-ներ	14.9	12.6	7.5	11.7
Հաշմանդամություն ունեցող անձանց (ՀԱ) առկայություն				
ՀԱ ունեցող ՏՏ-ներ	21.6	24.0	30.7	25.4
1 ՀԱ ունեցող ՏՏ-ներ	17.8	21.1	26.6	21.8
2 և ավելի ՀԱ ունեցող ՏՏ-ներ	3.8	2.9	4.1	3.6
Ընդամենը գործազուրկներ	100.0	100.0	100.0	100.0

*երեխա՝ մինչև 16 տարեկան, ծեր՝ 63 տարեկան և բարձր Աղբյուր՝ ՏՀԿ, Բ3 հետազոտություն

Միայն տարեցներից բաղկացած SS-ները կազմում են շահառու մարզերի SS-ների 11.7 տոկոսը: Ընդ որում, այս SS-ների կշիռը փոքր է Տավուշի մարզում՝ 7.5 տոկոս և գրեթե կրկնակի մեծ՝ Լո-

ռու մարզում՝ 14.9 տոկոս: Հաշմանդամություն ունեցող անձիք ունեցող SS-ները կազմում են 25.4 տոկոս:


4.2. Կրթամակարդակ

Բնակչության կրթամակարդակը համեմատաբար բարձր է Շիրակի մարզում՝ բարձրագույն կրթություն ունի 6 տարեկանից բարձր բնակչության 18.0 տոկոսը: Լոռու և Տավուշի դեպքում բարձրագույն կրթություն ունեցողները կազմում են բնակչության համապատասխանաբար 14.1 և 14.7 տոկոսը: Միջին մասնագիտական կրթություն ունեցողները գերակշռում են Տավուշի մար-

զում՝ 21.5 տոկոս, իսկ Շիրակում և Լոռիում կազմում են համապատասխանաբար 17.6 և 17.2 տոկոս:

Բոլոր երեք մարզերում կանանց կրթամակարդակն ավելի բարձր է. կանանց շրջանում միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն ունեցողների կշիռը գերազանցում է տղամարդկանց միևնույն ցուցանիշը:

Գծապատկեր 10. Բնակչության կրթամակարդակն ըստ մարզերի և ըստ սեռի (6 տարեկանից բարձր բնակչություն)



Աղբյուր՝ ՏՀՀԿ, Բ3 հետազոտություն

4.3. Գործազրկություն և զբաղվածություն

Գործազրկության մակարդակը համեմատաբար ցածր է Շիրակի մարզում՝ 24.7 տոկոս, Լոռիում և Տավուշում արձանագրվել է միևնույն մակարդակը՝ 27.1 տոկոս:


Գործազուրկների³¹ 19.4 տոկոսն ունի բարձրագույն կրթություն, 24.1 տոկոսը միջին մասնագիտական, իսկ մնացած 56.4 տոկոսը՝ միջնակարգ կրթություն: Նկատենք, որ չնայած գործազրկու-

31. Գործազուրկ են համարվել «աշխատուժ» տնտեսական կատեգորիային պատկանող այն անձիք, ովքեր իրենց համարել են գործազուրկ՝ անկախ վերջին ամսվա ընթացքում աշխատանք փնտրելու հանգամանքից:

յան մակարդակը համեմատաբար ցածր է բարձրագույն կրթություն ունեցողների մոտ, այնուամենայնիվ, նրանց 22.6 տոկոսը գործազուրկ են: Միջին մասնագիտական կրթություն ունեցողներ

րի գործազրկության մակարդակը 25.8 տոկոս է, իսկ միջնակարգ կրթություն ունեցողների դեպքում համեմատաբար ավելի բարձր է՝ 28.7 տոկոս (տե՛ս Աղյուսակ 24):

Գծապատկեր 11. Գործազրկության մակարդակն ըստ շահառու մարզերի, տոկոս



Աղյուսակ 24. Գործազուրկների դեմոգրաֆիական և կրթական կառուցվածքը, տոկոս

	Լոռի	Շիրակ	Տավուշ	Ընդամենը
Կրթամակարդակ				
Բարձրագույն	17.9	20.6	19.8	19.4
Միջին մասնագիտական	21.8	23.6	26.4	24.1
Միջնակարգ	60.3	55.9	53.8	56.4
Գենդերային կառուցվածք				
Տղամարդ	25.7	20.6	25.7	24.1
Կին	74.3	79.4	74.3	75.9
Տարիքային կառուցվածք				
17-30	32.0	30.1	33.6	32.0
31-45	37.8	38.1	41.3	39.3
46-55	14.8	14.5	12.5	13.8
56-62	14.3	16.5	11.3	13.8
63+	1.2	0.8	1.3	1.1
Ընդամենը գործազուրկներ	100.0	100.0	100.0	100.0

Աղբյուր՝ ՏՀՀԿ Բ3 հետազոտություն

Գործազուրկների թվաքանակում գերակշռում է մինչև 45 տարեկան բնակչությունը: Մասնավորապես, գործազուրկների 32 տոկոսը 17-30 տարիքային խմբի բնակչությունն է, իսկ 39.3 տոկոսը՝ 31-45 տարիքային խմբի բնակչությունը:

Գործազուրկների գերակշիռ մասը՝ 75.9 տոկոսը կին է, իսկ 24.1 տոկոսը՝ տղամարդ: Կանանց և տղամարդկանց գործազրկության մակարդակը համապատասխանաբար կազմում է 35.7 և 14.4 տոկոս:

Գործազրկության մակարդակն ամենացածրը Շիրակի գյուղական բնակավայրերում է՝ 16.7 տոկոս, իսկ ամենաբարձրը՝ Լոռու քաղաքային բնակավայրերում՝ 37.7 տոկոս:

Կանանց գործազրկության ամենաբարձր մակարդակը արձանագրվել է Տավուշում, իսկ տղամարդկանց գործազրկության ամենացածր մակարդակը՝ Շիրակում:


Շահառու մարզերում զբաղվածության միջին մակարդակը կազմում է 53 տոկոս:

Աղյուսակ 25. Գործազրկության մակարդակն ըստ բնակչության առանձին խմբերի, տոկոս (փակագծերում՝ ստանդարտ սխալի մակարդակներն են)

	Լոռի	Շիրակ	Տավուշ	Ընդամենը
Գյուղ	19.1 (± 2.41)	16.7 (± 2.30)	25.3 (± 2.18)	20.7 (± 1.32)
Քաղաք	37.7 (± 2.58)	35.7 (± 2.58)	29.4 (± 2.38)	33.8 (± 1.45)
Տղամարդ	16.7 (± 2.57)	12.0 (± 2.48)	14.7 (± 2.32)	14.4 (± 1.42)
Կին	34.5 (± 2.42)	34.0 (± 2.39)	38.3 (± 2.23)	35.7 (± 1.35)
Բարձրագույն	23.9 (± 4.89)	19.6 (± 4.23)	24.6 (± 4.40)	22.6 (± 2.59)
Միջին մասնագիտական	26.8 (± 4.42)	25.1 (± 4.29)	25.6 (± 3.64)	25.8 (± 2.35)
Միջնակարգ	28.6 (± 2.71)	27.7 (± 2.74)	29.7 (± 2.68)	28.7 (± 1.57)

Աղբյուր՝ ՏՀՀԿ Բ3 հետազոտություն

Գծապատկեր 12. Չբաղվածության մակարդակն ըստ շահառու մարզերի, տոկոս



Աղբյուր՝ ՏՀՀԿ Բ3 հետազոտություն

Մեծ է սեփական գյուղացիական տնտեսություններում և պետական/համայնքային հիմնարկներում զբաղվածների կշիռը՝ համապատասխանաբար 35.2 և 30.5 տոկոս: Ընդ որում, սեփական գյուղացիական տնտեսությունում զբաղվածությունը բարձր է մասնավորապես Լոռու մարզում

(41.0 տոկոս), ինքնազբաղվածությունը համեմատաբար բարձր է Շիրակում (14.1 տոկոս), իսկ պետական/համայնքային հիմնարկներում և այլ մասնավոր հատվածում զբաղվածությունը՝ Տավուշում (33.8 տոկոս և 21.2 տոկոս):

Աղյուսակ 26. Զբաղվածների բաշխումը, տոկոս


	Լոռի	Շիրակ	Տավուշ	Ընդամենը
Զբաղվածություն				
Ինքնազբաղված	5.8	14.1	13.4	11.4
Ձեռներեց/գործատու	4.0	2.3	3.7	3.3
Սեփական գյուղ. տնտ. զբաղված	41.0	38.5	27.7	35.2
Ոչ սեփական գյուղ. տնտ. զբաղված	3.0	0.7	0.4	1.2
Այլ մասնավոր հատված	17.2	16.3	21.2	18.4
Պետական/համայնքային հիմնարկ	29.0	28.1	33.8	30.5
Գենդերային կառուցվածք				
Տղամարդ	47.7	49.5	55.4	51.2
Կին	52.3	50.5	44.6	48.8
Տարիքային կառուցվածք				
15-30	15.6	17.9	18.0	17.3
31-45	35.5	34.8	34.8	35.0
46-55	17.9	17.4	18.6	18.0
56-62	15.1	14.7	13.9	14.5
63+	15.8	15.1	14.8	15.2
Ընդամենը զբաղվածներ	100.0	100.0	100.0	100.0

Աղբյուր՝ ՏՀՀԿ Բ3 հետազոտություն

Զբաղվածների թվաքանակում գերակշռում է 31-45 տարիքային խմբի բնակչությունը՝ 35 տոկոս, որին հաջորդում են 46-55 տարիքային խումբը՝ 18 տոկոս, և 15-30 տարիքային խումբը՝ 17.3 տոկոս:

Ընդհանուր առմամբ, զբաղվածների թվում գերակշռում են տղամարդիկ՝ կազմելով 51.2 տոկոս: Լոռիում և Շիրակում զբաղվածների կառուցվածքում կանայք գերակշռում են, իսկ Տավուշում հակառակ դրսևորումն է՝ տղամարդիկ կազմում են զբաղվածների 55.4 տոկոսը:

Գծապատկեր 13. Կանանց զբաղվածությունն ըստ ոլորտների, տոկոս ընդամենը զբաղված կանանց նկատմամբ



Աղբյուր՝ ՏՀՀԿ Բ3 հետազոտություն

32. 2020 թվականից ի վեր ՀՀ ՎԿ կողմից ՀՀ աշխատուժի հետազոտությունում որպես «աշխատանքային տարիքի բնակչություն» է դիտարկվում 15 և բարձր տարիքի բնակչությունը՝ առանց վերին շեմի:

4.4. Միգրացիա




Ուսումնասիրված SS-ների 21.2 տոկոսում կան միգրանտներ: Ընդ որում, SS-ներից 4.5 տոկոսում միգրանտ են հանդիսանում SS երկու և

ավելի անդամ:

Ընդհանուր առմամբ, միգրանտ են հանդիսացել շահառու մարզերի բնակչության 6.6 տոկոսը:

Գծապատկեր 14. Միգրացիան ըստ շահառու մարզերի



Միգրանտների 90 տոկոսը հանդիսանում են արտաքին միգրանտներ: Դեպի արտերկիր միգրացիայի բարձր ցուցանիշով առանձնանում է Շիրակի մարզը՝ 8.3 տոկոս, Լոռիում և Տավուշում նույն ցուցանիշը համապատասխանաբար կազմում է 6.7 և 3.1 տոկոս:

Կանայք կազմում են միգրանտների 13.1 տոկոսը: Մասնավորապես, ներքին միգրացիայի դեպքում միգրանտների 23.1 տոկոսն են կանայք,

իսկ արտաքինի դեպքում՝ 12.0 տոկոսը:

Միգրանտների մեծ մասը՝ 64.9 տոկոսը 18-45 տարիքային խմբում են (28.4 տոկոսը 18-30 տարիքային խմբում, 36.5 տոկոսը 31-45 տարիքային խմբում): Ընդ որում, եթե ներքին միգրացիայի դեպքում գերակշռում են 18-30 տարեկանները՝ 47.7 տոկոսը, ապա արտաքին միգրացիայի դեպքում՝ 31-45 տարեկանները՝ 37.8 տոկոս:

Աղյուսակ 27. Միգրանտների սեռատարիքային բաշխումը, տոկոս

		Լոռի	Շիրակ	Տավուշ	Ընդամենը
Միգրացիայի ուղղությունը (տոկոս բնակչության նկատմամբ)					
Միգրացիա		7.3	9.2	3.6	6.6
Ներքին		0.6	0.9	0.5	0.7
Արտաքին		6.7	8.3	3.1	5.9
Գենդերային կառուցվածք (տոկոս միգրանտների նկատմամբ)					
Ներքին	Տղամարդ	55.6	85.7	84.2	76.9
	Կին	44.4	14.3	15.8	23.1
Արտաքին	Տղամարդ	86.8	90.6	83.8	88.0
	Կին	13.2	9.4	16.2	12.0

Տարիքային կառուցվածք (տոկոս միգրանտների նկատմամբ)					
Ներքին	18-30	44.4	50.0	47.4	47.7
	31-45	27.8	25.0	21.1	24.6
	46-55	11.1	14.3	10.5	12.3
	56-62	11.1	3.6	21.1	10.8
	63+	5.6	7.1	0.0	4.6
Արտաքին	Մինչև 18	3.4	1.5	4.5	2.7
	18-30	27.0	28.1	20.7	26.3
	31-45	37.7	35.2	44.1	37.8
	46-55	21.6	20.6	16.2	20.1
	56-62	5.9	11.6	5.4	8.4
	63+	4.4	3.0	9.0	4.6


Աղբյուր՝ ՏՀՀԿ Բ3 հետազոտություն

4.5. Եկամուտներ և բարեկեցություն

Պաշտոնական տվյալներով 2021 թվականին աղքատության մակարդակը հանրապետությունում նվազել է 0.5 տոկոսայի կետով և 27.0 տոկոսից դարձել է 26.5 տոկոս: Շահառու մարզերում աղքատության մակարդակի տատանումները բավականաչափ մեծ են: Լոռիում, Շիրակում և Տավուշում աղքատության մակարդակը համապատասխանաբար կազմել է 21.8, 46.9 և 38.2 տոկոս, ընդ որում բոլոր երեք մարզերում աղքատությունը խորացել է:

Պաշտոնական տվյալներով 2021 թվականին աղքատության մակարդակը հանրապետությունում նվազել է 0.5 տոկոսայի կետով և 27.0 տոկոսից դարձել է 26.5 տոկոս: Շահառու մարզերում աղքատության մակարդակի տատանումները բավականաչափ մեծ են: Լոռիում, Շիրակում և Տավուշում աղքատության մակարդակը համապատասխանաբար կազմել է 21.8, 46.9 և 38.2 տոկոս, ընդ որում բոլոր երեք մարզերում աղքատությունը խորացել է:

Գծապատկեր 15. Աղքատության մակարդակն ըստ ՀՀ մարզերի և Երևանի, 2019-2021թթ., տոկոս




Աղբյուր՝ ՀՀ ՎԿ, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը 2021

Ընդհանուր առմամբ, հանրապետության մարզերում աղքատության մակարդակի ստանդարտ

շեղումը³³ 2019-2021 թվականներին նախորդ տարիների համեմատությամբ կտրուկ աճել է:

Գծապատկեր 16. Աղքատության մակարդակի ստանդարտ շեղումը 2015-2021 թվականներին, տոկոսային կետ



Հարցվածների սուբյեկտիվ գնահատականների համաձայն, աղքատության մակարդակը Շիրակում և Տավուշում ավելի ցածր է: 2020 թվականին իրենց աղքատ են համարել Լոռու տնային տնտեսությունների 20.2 տոկոսը, Շիրակի՝ 14.2 տոկոսը, և Տավուշի՝ 22.2 տոկոսը:


Նույն ցուցանիշը Շիրակում և Տավուշում համապատասխանաբար կազմում է 49.8 և 47.8 տոկոս:

Մեկ շնչի հաշվով եկամուտները գերազանցում են 90,000 դրամը Լոռու ՏՏ-ների միայն 6.7 տոկոսի, իսկ բնակչության 4.4 տոկոսի դեպքում: Շիրակում նույն ցուցանիշները կազմում են 10.6 և 8.2 տոկոս, իսկ Տավուշում՝ 11.1 և 7.5 տոկոս:


Համաձայն մեկ շնչի հաշվով ՏՏ-ների եկամուտների բաշխման կորերի, Լոռու մարզում գերակշռում է համեմատաբար ցածր եկամտային խմբում գտնվող բնակչությունը: Լոռու ՏՏ-ների 56.5, իսկ բնակչության՝ 69.7 տոկոսի դեպքում եկամուտները չեն գերազանցում 45,000 դրամը:

Կորերը նաև վկայում են Լոռիում անհավասարության համեմատաբար ցածր մակարդակի մասին:

Գծապատկեր 17. Մեկ շնչի հաշվով եկամուտների բաշխման կորերը



33. Երևան և մարզեր:




Աղբյուր՝ ՏՀՀԿ, Բ3 հետազոտություն

Հարկ է նկատել, որ տնային տնտեսությունների գնահատականներով, աղքատությունը 2021 թվականին բոլոր երեք մարզերում խորացել է: Իրենց աղքատ կամ ծայրահեղ աղքատ գնահատած ՏՏ-ների կշիռը Լոռիում աճել է 5.8, Շիրակում՝

կում՝ 1.0, իսկ Տավուշում՝ 4.5 տոկոսային կետով: Զուգահեռ նվազել են իրենց «ապահովված» համարող ՏՏ-ները՝ Լոռիում՝ 1.3, Շիրակում՝ 0.6, իսկ Տավուշում՝ 2.5 տոկոսային կետով:

Գծապատկեր 18. Տնային տնտեսությունների կենսամակարդակի սուբյեկտիվ ինքնագնահատականներ, տոկոս




Աղբյուր՝ ՏՀՀԿ, Բ3 հետազոտություն

ՏՏ-ների կենսամակարդակի վատթարացումն ուղեկցվել է ն եկամուտների մեծության կրճատմամբ, ն պարտքային պարտավորությունների աճով: Լոռիում ՏՏ-ների 34.2 տոկոսի դեպքում եկամուտները կրճատվել են, 31.9 տոկոսի դեպքում՝ ավելացել են պարտքային պարտավորությունները: Միևնույն ժամանակ, ՏՏ-ների 6.7 տոկոսը նշել է եկամուտների աճի, իսկ 15.7 տոկոսը՝

պարտքային պարտավորությունների կրճատման մասին:

Եկամուտների աճ և պարտքային պարտավորությունների կրճատում արձանագրած ՏՏ-ների կշիռը համեմատաբար մեծ է Շիրակի և Տավուշի մարզերում: Ընդ որում, Տավուշում դրական միտումներն ավելի էական են:


Գծապատկեր 19. Տնային տնտեսությունների եկամուտների և պարտքի մեծության փոփոխության գնահատականները, տոկոս



Ընդհանուր առմամբ, ԼճԻ, Տավուշի և Շիրակի բնակչությունը ծանրաբեռնված է պարտքային պարտավորություններով: Տնային տնտեսությունների 65.6 տոկոսն ունեն վարկային կամ պարտքային տարբեր պարտավորություններ: Ընդ որում, մեկ ՏՏ հաշվով պարտքային պար-

տավորությունների միջին մեծությունը կազմում է մոտ 1.85 միլիոն դրամ: Թեև պարտքեր ունեցող ՏՏ-ներն առավել շատ են Տավուշում՝ 75.0 տոկոս, սակայն պարտքի միջին մեծությունը ավելի բարձր է Շիրակում՝ մոտ 2.2 մլն դրամ:


Գծապատկեր 20. Պարտքային պարտավորություններ ունեցող տնային տնտեսությունների կշիռը և պարտքի միջին մեծությունը



Պարտքերի և վարկային պարտավորությունների առաջացման պատճառները բազմազան են: Առավել հաճախ հանդիպող պատճառներն են առողջապահական ծախսերը, բնակատեղի կառուցման/ձեռքբերման/վերանորոգման ծախսերը, կենցաղային տեխնիկայի ձեռքբերումը, գյուղատնտեսական և կրթական ծախսերը, հաճախ նաև՝ ընթացիկ ծախսերը:

Առկա պարտքի սպասարկման բեռը ավելի ծանր են գնահատում Լոռու մարզում՝ SS-ների 44.9 տոկոսը: Շիրակի և Տավուշի մարզերում SS-ների համապատասխանաբար 29.8 և 26 տոկոսն է նշել, որ պարտքի բեռը ծանր է և չի կարողանում սպասարկել:

Գծապատկեր 21. Պարտքի սպասարկման կարողության սուբյեկտիվ գնահատականներ, տոկոս




Աղբյուր՝ S2<4 P3 հետազոտություն

Հետազոտության արդյունքները վկայում են, որ շահառու մարզերի SS-ների մոտ 29 տոկոսը թերսնվում է, նրանք «ընդհանրապես» կամ «գրեթե» չեն կարողանում ապահովել իրենց SS սննդի ծախսերը: Իրավիճակը համեմատաբար

ավելի սուր է Լոռու մարզում, որի գյուղական համայնքներում սննդի ծախսերը «ընդհանրապես» կամ «գրեթե» չեն կարողանում բավարարել SS-ների 37.6 տոկոսը, իսկ քաղաքային բնակավայրերում՝ 35.9 տոկոսը:

Գծապատկեր 22. Սննդի ծախսերի ապահովման սուբյեկտիվ գնահատականներ, տոկոս




Աղբյուր՝ S2<4 P3 հետազոտություն

SS-ների մոտ 55 տոկոսը «ընդհանրապես» կամ «գրեթե» չի հոգում ընտանեկան միջոցառումների մասնակցության, իսկ 51 տոկոսը՝ SS անդամների առողջապահական ծախսերը: Հագուստի և

ոչ պարենային ապրանքների և ծառայությունների ծախսերի դեպքում նույն ցուցանիշը կազմում է ավելի քան 46 տոկոս, իսկ կրթական ծախսերի դեպքում՝ ավելի քան 35 տոկոս:

Գծապատկեր 23. Ծախսերի ապահովման կարողության սուբյեկտիվ գնահատականներ, տոկոս



Հետազոտության արդյունքներով անապահով գնահատված³⁴ (մինչև 45,000 դրամ եկամուտ ունեցող) SS-ները հանդիսանում են համեմատաբար մեծ SS-ներ: Լողիում անապահով SS-ները միջինում կազմված են 4.8 անդամից, Շիրակում 5.0 անդամից, իսկ Տավուշում 5.4 անդամից:

SS-ների մեծ մասում՝ 72.9 տոկոսում, առկա են մինչև 16 տարեկան երեխաներ, ընդ որում 18.7 տոկոսը բազմազավակ SS-ներ են:


Անապահով SS-ների 50.2 տոկոսում առկա են ծերեր, իսկ 28.1 տոկոսում հաշմանդամություն ունեցող անձինք:

Աղյուսակ 28. Անապահով SS-ների կառուցվածքը, տոկոս

	Լոռի	Շիրակ	Տավուշ	Ընդամենը
SS անդամների քանակ				
SS անդամների միջին թիվ	4.8	5.0	5.4	5.1
SS-ում երեխաների միջին թիվ	2.0	2.0	2.1	2.0
Երեխաների առկայություն				
Երեխա ունեցող SS-ներ	67.5	72.6	79.7	72.9
1 երեխա ունեցող SS-ներ	22.2	22.3	23.8	22.7
2 երեխա ունեցող SS-ներ	29.6	33.8	31.3	31.5
3 և ավելի երեխա ունեցող SS-ներ	15.7	16.5	24.6	18.7
Ծերերի առկայություն				
Ծեր ունեցող SS-ներ	48.4	49.5	52.9	50.2
1 ծեր ունեցող SS-ներ	33.0	32.7	34.2	33.3
2 և ավելի ծեր ունեցող SS-ներ	15.5	16.8	18.7	16.9
Միայն ծերերից բաղկացած SS-ներ	4.7	2.0	1.6	2.9
Հաշմանդամություն ունեցող անձանց (ՀԱ) առկայություն				
ՀԱ ունեցող SS-ներ	23.8	25.9	35.6	28.1
1 ՀԱ ունեցող SS-ներ	20.6	22.6	29.9	24.1
2 և ավելի ՀԱ ունեցող SS-ներ	3.1	3.3	5.6	4.0
Ընդամենը գործազուրկներ	100.0	100.0	100.0	100.0

*Երեխա՝ մինչև 16 տարեկան, ծեր՝ 63 տարեկան և բարձր Աղբյուր՝ S2ՀԿ P3 հետազոտություն

34. SS 1 շնչի հաշվով մինչև 45,000 դրամ ամսական եկամուտ ունեցող SS-ներ:



ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ,
ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ԿԱՐԻՔ

5



5.1. Հանրային ծառայությունների օգտագործումը



- **Խնամք և սոցիալական աջակցություն**

Երեխա ունեցող SS-ները կազմում են SS-ների 53.5 տոկոսը: Այս SS-ների 45.5 տոկոսում կան 2-6 տարեկան երեխաներ: 2-6 տարեկան երեխաների միայն 43.5 տոկոսն է օգտվում մանկապարտեզի ծառայություններից, իսկ 18.8 տոկոսը (6 տարեկաններ) հաճախում են դպրոց: Նախադպրոցական և դպրոցական կրթության որևէ ծառայություններից չի օգտվում 2-6 տարեկան երեխաների 37.7 տոկոսը, կամ շահառու մարզերի համապատասխան տարիքային խմբի երե-

խաներ ունեցող SS-ների՝ 43.6 տոկոսը:

Երեխաներին առավել հասանելի հաջորդ ծառայություններն են արտադպրոցական սպորտային, կրթական և երաժշտական դպրոցների ծառայությունները: Սպորտային պարապմունքների շահառուներ են SS-ների 17.0 տոկոսը, կրթական ծառայությունների շահառուներ են SS-ների 10.4 տոկոսը և երաժշտական պարապմունքների շահառուներ են SS-ների 10.0 տոկոսը:

Նկատենք, որ SS-ների 53.4 տոկոսը երեխաների խնամքի որևէ ծառայությունից չի օգտվում:

Աղյուսակ 29. Երեխաների խնամքի և զբաղվածության ծառայությունների բաշխումը, տոկոս, բազմակի պատասխան


	Լոռի	Շիրակ	Տավուշ	Ընդամենը
Մանկապարտեզ	21.9	24.0	23.7	23.2
Երեխաների խնամքի ցերեկային կենտրոններ	1.3	0.8	0.2	0.7
Երեխաների զարգացման կենտրոններ	3.1	3.7	2.2	2.9
Երաժշտական դպրոց/խմբակ	10.6	7.6	11.3	10.0
Սպորտային պարապմունքներ	21.9	17.0	13.2	17.0
Այլ արտադպրոցական կրթական ծառայություններ	11.3	7.3	11.9	10.4
Դայակի ծառայություն կամ SS-ում չբնակվող հարազատի կողմից երեխայի խնամք	1.8	0.8	0.2	0.9
Ոչ մի ծառայությունից չեն օգտվում	54.9	54.6	51.4	53.4
Ընդամենը երեխա ունեցող SS-ներ	49.1	48.4	63.1	53.5
Մինչև 6 տարեկան երեխա ունեցող SS-ներ	25.1	28.3	33.8	29.1

Աղբյուր՝ S2<4 P3 հետազոտություն

Հետազոտությունում ընդգրկված բնակավայրերից 72.2 տոկոսում, համաձայն հարցվողների գնահատականների, առկա է դպրոց չհաճախող հաշմանդամություն ունեցող առնվազն մեկ երե-

խա, իսկ 48.1 տոկոսում, առնվազն մեկ դպրոցական տարիքի ոչ հաշմանդամություն ունեցող երեխա, որը դպրոց չի հաճախում:

Գծապատկեր 24. Դպրոց չհաճախող երեխա ունեցող բնակավայրեր, տոկոս բնակավայրերի մեջ



Աղբյուր՝ SՁՀԿ Բ3 հետազոտություն

Երեխաների խնամքի և երկրում ժողովրդագրական իրավիճակի բարելավմանն ուղղված իրականացվող քաղաքականությունների մասին շահառուների տեղեկացվածության մակարդակը բավականին բարձր է: Առավել հայտնի է «երեխայի ծննդյան միանվագ նպաստի տրամադրման» քաղաքականությունը՝ տեղեկացված է ՏՏ-ների մոտ 85 տոկոսը: Հաջորդում է «երրորդ և ավելի երեխայի համար մինչև 6 տարե-

կան լրանալը ամսական 50,000 դրամ նպաստի տրամադրման քաղաքականությունը», որը չնայած նոր է՝ 2022 թվականի հունվար, սակայն հասարակությունը կրկին լավ տեղեկացված է՝ 75.5 տոկոս: Համեմատաբար ցածր է տեղեկացվածությունը «չաշխատող մայրերին տրամադրվող մայրության նպաստների» և «երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովման հիպոթեքային աջակցության» ծրագրերից:

Աղյուսակ 30. Սոցիալական ընտրված քաղաքականություններից տեղեկացվածության մակարդակը, տոկոս

	Լոռի	Շիրակ	Տավուշ	Ընդամենը
Երեխայի ծննդյան միանվագ նպաստի տրամադրում	78.6	86.3	89.9	84.9
Սկսած 2022թ. հունվարից երրորդ և ավելի երեխայի համար մինչև 6տ. լրանալը ամսական 50,000 դրամ նպաստի տրամադրում	71.4	75.6	79.6	75.5
Մայրության նպաստի տրամադրում բոլոր մայրերին, ներառյալ՝ չաշխատող	66.7	64.7	63.0	64.8
Երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովման հիպոթեքային աջակցություն	50.4	54.9	47.3	50.8
Ընդամենը	100	100	100	100

Աղբյուր՝ SՁՀԿ Բ3 հետազոտություն

իրականացվող քաղաքականությունների ազդեցությունը SS-ներում երեխա ունենալու վերաբերյալ որոշում կայացնելու վրա ցածր է: Համեմատության համար նշենք, որ քաղաքականությունների ազդեցությունները համեմատաբար բարձր են Տավուշի մարզում, իսկ համեմատաբար ազդեցիկ է «երեխայի ծննդյան միանվագ նպաստի» ծրագիրը:

յունների ազդեցությունները համեմատաբար բարձր են Տավուշի մարզում, իսկ համեմատաբար ազդեցիկ է «երեխայի ծննդյան միանվագ նպաստի» ծրագիրը:

Աղյուսակ 31. Նշված սոցիալական քաղաքականությունների ազդեցությունը SS-ում երեխա ունենալու որոշման վրա, տոկոս

	Լոռի	Շիրակ	Տավուշ	Ընդամենը
Երեխայի ծննդյան միանվագ նպաստի տրամադրում	4.3	3.0	14.0	7.1
Սկսած 2022թ. հունվարից երրորդ և ավելի երեխայի համար մինչև 6տ. լրալանը ամսական 50,000 դրամ նպաստի տրամադրում	3.7	3.2	11.5	6.1
Մայրության նպաստի տրամադրում բոլոր մայրերին, ներառյալ՝ չաշխատող	3.5	3.5	9.6	5.5
Երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովման հիպոթեքային աջակցություն	2.5	2.7	8.3	4.5
Ընդամենը	100	100	100	100

Աղբյուր՝ ՏՀԿ Բ3 հետազոտություն

Հետազոտության մասնակից 54 բնակավայրերից 45-ում միայնակ տարեցներին մատուցվում են խնամքի և սոցիալական սպասարկման որևէ ծառայություն, հիմնականում հումանիտար օգնության ձևաչափով: Նկատենք, որ հետազոտությունում ընդգրկած բոլոր 9 բնակավայրերը, որտեղ նման ծառայություններ չեն մատուցվում, Շիրակի մարզում են:

● **Բնակարանային ապահովություն**

Հետազոտության արդյունքներով շահառու մարզերի SS-ների 90.1 տոկոսը բնակվում է սեփական բնակարանում/տանը: Նրանց միայն 0.8 տոկոսն է իրենց բնակարանը/տունը ձեռք բերել բնակարանների ձեռքբերման աջակցության պետական ծրագրերով:

Աղյուսակ 32. Բնակարան ունեցողների տոկոսը, ովքեր օգտվել են բնակարանների ձեռքբերման պետական ծրագրերից

	Լոռի	Շիրակ	Տավուշ	Ընդամենը
Բնակարան ունեցողներ	88.35	92.16	89.66	90.06
Ձեռք են բերել բնակարան	0.86	0.82	0.71	0.80
Ընդամենը SSներ	100.0	100.0	100.0	100.0

Աղբյուր՝ ՏՀԿ Բ3 հետազոտություն

● **Զբաղվածության ծառայություններ**

Ցածր է ԱՍՀՆ կողմից իրականացվող զբաղվածության տարբեր ծրագրերի մասին բնակչության թե՛ տեղեկացվածության և թե՛ դրանցից օգտվելու մակարդակը:

Բնակչությունը համեմատաբար լավ է տեղեկացված «գործազուրկների մասնագիտական ուսուցման» և «երեխայի խնամքի արձակուրդում

գտնվող անձանց՝ երեխայի խնամքը կազմակերպելու համար դայակի ծախսերի տրամադրման» ծառայություններից: Պետք է նկատել, որ զբաղվածության ծառայություններից հասարակության տեղեկացվածության մակարդակը համեմատաբար բարձր է Տավուշի մարզում: Այստեղ համեմատաբար մեծ է նաև ծառայություններից օգտվածների կշիռը:

Աղյուսակ 33. ԱՍՀՆ կողմից մատուցվող զբաղվածության հետևյալ ծառայություններից SS-ների տեղեկացվածությունը և օգտագործումը, տոկոս


	Տեղեկացվածությունը			SS որևէ անդամ երբևիցե օգտվել է		
	Լոռի	Շիրակ	Տավուշ	Լոռի	Շիրակ	Տավուշ
Գործազուրկների մասնագիտական ուսուցում	34.1	37.9	49.8	1.5	1.4	7.4
Վարձատրվող հասարակական աշխատանքներ	30.4	26.3	32.4	1.5	0.5	2.6
Փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցություն	23.5	12.0	28.6	0.6	0.6	1.7
Գործատուին միանվագ փոխհատուցում՝ անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում	21.3	7.0	19.3	0.4	0.5	1.7
Երեխայի խնամքը կազմակերպելու համար դայակի ծախսերի տրամադրում	29.7	21.9	44.4	0.6	0.4	1.3
Գյուղացիական տնտեսությանն աջակցություն՝ սեզոնային զբաղվածություն	28.6	21.9	26.2	0.5	0.5	1.3
Հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների համար դասընթացներ	25.2	8.1	27.7	0.3	0.0	0.6
Ընդամենը	100	100	100	100	100	100

Աղբյուր՝ ՏՀՀԿ Բ3 հետազոտություն

ԱՍՀՆ կողմից հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող աշխատանքի տեղավորման ծառայություններից օգտվել են շահառու մարզերում հաշմանդամություն ունեցող անձանց 3.5

տոկոսը: Ընդ որում, այս կշիռը համեմատաբար բարձր է Լուռու մարզում (8.2 տոկոս) և ցածր՝ Շիրակի մարզում (1.1 տոկոս):

Գծապատկեր 25. Հաշմանդամություն ունեցող անձիք, որոնց ԱՍՀՆ զբաղվածության ծառայության կողմից երբևիցե մատուցվել է աշխատանքի տեղավորման ծառայություններ, տոկոս հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ




Աղբյուր՝ ՏՀՀԿ Բ3 հետազոտություն

• **Առողջապահական ծառայություններ**

Հետազոտությանը նախորդած 12 ամիսների ընթացքում շահառու մարզերի բոլոր SS-ների 10 տոկոսում և նպաստառու SS-ների 29.7 տոկոսում SS անդամներից առնվազն մեկը ունեցել է

բժշկական միջամտության և բժշկական ծառայությունների ստացման կարիք, սակայն չի դիմել բժշկի: Ընդ որում, բժշկի չդիմածների կշիռը համեմատաբար մեծ է Տավուշի մարզում և փոքր՝ Լոռու մարզում:

Գծապատկեր 26. Բժշկական միջամտության անհրաժեշտություն ունեցող SS-ները, որոնք չեն դիմել բժշկի, տոկոս



Աղբյուր՝ ՏՀԿ Բ3 հետազոտություն

Բժշկական միջամտության անհրաժեշտության դեպքում բժշկի չդիմելու գլխավոր պատճառը ֆինանսական է՝ թե՛ բոլոր SS-ների և թե՛ նպաստառու SS-ների 70 տոկոս դեպքերում: SS-ների մոտ 20 տոկոսը գտել է, որ հիվանդությունները լուրջ չեն և այդ պատճառով չեն դիմել բժշկական

հաստատություն, իսկ մոտ 8 տոկոսը պարզապես չի վստահում բժիկներին և բժշկական հաստատություններին: Նկատենք, որ բժշկի չդիմելու պատճառների մեջ՝ մոտ 4 տոկոս դեպքերում, բժշկական հաստատությունը բնակավայրից հեռու գտնվելու փաստն է:

Աղյուսակ 34. Բժշկի չդիմելու պատճառները, բազմակի պատասխան

	Բոլոր SS-ներ	Նպաստառու SS-ներ
Լուրջ հիվանդություններ չեն եղել	20.5	19.0
Տնային պայմաններում բուժումը բավարար է	7.4	6.6
Ֆինանսական պատճառներ	70.0	70.1
Չենք վստահում	7.9	8.8
Միևնույն է օգուտ չէր տա	0.5	0.7
Հիվանդանոցը հեռու է	3.7	4.4
Ժամանակ չկա	1.1	1.5

Աղբյուր՝ ՏՀԿ Բ3 հետազոտություն

Ընդհանուր առմամբ բժշկական միջամտության և բժշկական ծառայությունների ստացման կարիք ունեցող SS-ները հաշվում են 80.7 տոկոս, որոնցից բժշկի կամ բժշկական հաստատություն է դիմել 91.0 տոկոսը: Բժշկական ծառայություններից օգտվելու նման բարձր մակարդակը պայմանավորված է եղել COVID-19 համաճարակային իրավիճակով:

Բժշկի դիմած քաղաքացիները գերազանցապես օգտվել են ընդհանուր խորհրդատվական և լաբորատոր/գործիքային հետազոտությունների ծառայություններից՝ համապատասխանաբար բժշկական ծառայություններ ստացածների 62.3

և 57.8 տոկոս դեպքերում: Վիրահատական միջամտության կարիք են ունեցել դիմողների 19.5, իսկ հիվանդանոցային բուժման՝ 27 տոկոսը: Շատ են նաև մանկական բժշկի ծառայություններից և ատամնաբուժական ծառայություններից օգտված քաղաքացիները: Նկատենք, որ արտահիվանդանոցային բժշկական ծառայություններից անվճար դեղորայք են ստացել բժշկի դիմած քաղաքացիների 7.1 տոկոսը: Շիրակում դեղորայք ստացած քաղաքացիների կշիռը համեմատաբար մեծ է՝ 8.4 տոկոս (տես Աղյուսակ 35):

Աղյուսակ 35. Բժշկական միջամտության կամ ստացած բուժօգնության տեսակը, տոկոս, բազմակի պատասխան

	Լոռի	Շիրակ	Տավուշ	Ընդամենը
Ընդհանուր խորհրդատվություն	70.0	79.5	40.7	62.3
Լաբորատոր և գործիքային հետազոտություն	43.9	74.9	57.0	57.8
Ատամնաբուժական ծառայություններ	19.4	12.9	22.2	18.5
Գինեկոլոգիական ծառայություններ	8.9	5.1	13.3	9.3
Մանկական բժշկի ծառայություններ	17.3	15.4	23.3	18.9
Դեղորայքի ստացում ամբուլատորիայից	6.9	8.4	6.4	7.1
Նախաձննդյան բժշկական խորհրդատվություն և խնամք	2.3	3.3	3.2	2.9
Մինչև 1տ. երեխայի բժշկական խնամք	1.5	5.1	3.2	3.2
Հիվանդանոցային բուժում	27.6	26.3	26.8	27.0
Վիրահատություն	18.1	26.5	15.2	19.5
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0


Աղբյուր՝ S2<4 Բ3 հետազոտություն

Հաշմանդամություն ունեցող անձանց կողմից բժշկական օգնության և վերականգնման պետական ծրագրերից օգտվելու մակարդակը բարձր չէ: Երբևիցե պետական բյուջետային ծրագրերից օգտվել են շահառու մարզերի հաշմանդամություն ունեցող բնակչության ընդամենը 32.1

տոկոսը: Ընդ որում, Լոռիում այս ցուցանիշը համեմատաբար բարձր է՝ 42.1 տոկոս: Դեղորայքի կարիք ունեցող հաշմանդամություն ունեցող անձանց 47.8 տոկոսը օգտվել է անվճար և արտոնյալ պայմաններով դեղերից: Կրկին ցուցանիշը բարձր է Լոռու մարզում:


Գծապատկեր 27. Հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը առողջապահական ծրագրերին, տոկոս

Բժշկական օգնության և վերականգնման պետական ծրագրեր*



* հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ

անվճար և արտոնյալ պայմաններով դեղերի տրամադրում**



** կարիք ունեցող հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ


Աղբյուր՝ ՏՀՀԿ Բ3 հետազոտություն

Պետության կողմից պետական պատվերի շրջանակներում տրամադրվող բժշկական ծառայությունների մասին շահառու բնակչության տեղեկացվածության մակարդակը բարձր չէ: Բժշկի դիմելիս ՏՏ անդամի պետպատվերի իրավունքի մասին տեղյակ չէ ՏՏ-ների 60.9 տոկոսը և նպաստառու ՏՏ-ների 42.9 տոկոսը:

Սոցիալապես անապահովներին և հատուկ խմբերում ընդգրկվածներին տրամադրվող հիվանդանոցային ծառայությունների անվճար լիներու մասին տեղեկատվությանը տիրապետում է ՏՏ-ների 68.2, իսկ նպաստառու ՏՏ-ների 75.9 տոկոսը:


Գծապատկեր 28. ՏՏ կարծիքը իրենց անդամների բժշկի դիմելիս պետպատվերի իրավունք ունենալու մասին, տոկոս

Բոլոր ՏՏ-ներ



■ Այո ունեն ■ Ոչ չունեն ■ ԴՊ

Նպաստառու ՏՏ-ներ



■ Այո ունեն ■ Ոչ չունեն ■ ԴՊ

Աղբյուր՝ ՏՀՀԿ Բ3 հետազոտություն

Գծապատկեր 29. SS տեղեկացվածությունը սոցիալապես անապահովներին և հատուկ խմբերում ընդգրկվածների տրամադրվող հիվանդանոցային ծառայությունների անվճար լինելու մասին, տոկոս




Աղբյուր՝ S2ՀԿ Բ3 հետազոտություն

Ցածր է որևէ կարգի առողջապահական ապահովագրություն ունեցող SS անդամ ունեցող SS-ների քանակը: Տավուշում այդպիսի SS-ները

կազմում են 22.5 տոկոս: Շիրակում և Լոռիում դրանց կշիռը ավելի ցածր է և կազմում է համապատասխանաբար 14.4 և 13.4 տոկոս:

Գծապատկեր 30. Որևէ կարգի առողջապահական ապահովագրություն ունեցող SS-ներ, տոկոս



Աղբյուր՝ S2ՀԿ Բ3 հետազոտություն

• Համայնքային ծառայություններ

Հետազոտված բոլոր համայնքներում բնակչությունը համայնքում առկա ամենակարևոր խնդիր համարել է աշխատատեղերի բացակայությունը: Հաջորդող կարևոր խնդիրը, որը մատնանշվել է բոլոր երեք մարզերի թե՛ գյուղական և թե՛ քաղաքային համայնքներում՝ ներհամայնքային ճանապարհների վատ վիճակն է: Ուշագրավ է, որ խնդիրը հատկապես կարևորվել է Լոռու և Շի-

րակի մարզերի քաղաքային բնակավայրերի SS-ների կողմից՝ համապատասխանաբար 64.4 և 62.2 տոկոս:

Ընդհանուր առմամբ, համայնքային խնդիրների շարքում երրորդ դիրքում է առողջապահական ծառայությունների ոչ բավարար մակարդակը:

Եթե Շիրակի գյուղական բնակավայրերում կարևոր խնդիրների եռյակում դիտարկում են

կոյուղու բացակայությունը, իսկ քաղաքային բնակավայրերում՝ փողոցային լուսավորությունը, ապա Տավուշի դեպքում՝ խմելու որակյալ ջրի մատչելիությունն է նույն դիրքում:

Լոռու և Տավուշի քաղաքային համայնքներում

առանձնացնում են նաև երիտասարդ ընտանիքներին աջակցության, մասնավորապես բնակարաններով ապահովմանն ուղղված աջակցությունը, մշակութային և սպորտային հաստատությունների պայմանների անբավարար վիճակը:

Աղյուսակ 36. ՏՏ-ների կարծիքով իրենց համայնքի համար ամենակարևոր 5 հիմնական խնդիրները, տոկոս, բազմակի պատասխան

	Լոռի		Շիրակ		Տավուշ	
	գյուղ	քաղաք	գյուղ	քաղաք	գյուղ	քաղաք
Աշխատատեղերի բացակայություն	65.7	81.1	54.1	69.0	68.1	85.4
Ներհամայնքային ճանապարհների վատ վիճակ	41.1	64.4	49.6	62.2	44.2	41.2
Առողջապահական ծառայությունների ոչ բավարար մակարդակ	33.8	36.4		38.5	31.9	56.9
Անբավարար տրանսպորտային հաղորդակցություն	30.7		19.2	34.9		
Ոռոգման ցանցի անմխիթար վիճակ	35.0		21.4		30.7	
Մշակութային-սպորտային անբավարար պայմաններ		23.0				20.7
Երիտասարդ ընտանիքներին բնակարաններով ապահովման և այլ սոցիալական աջակցություն		27.0				51.6
Կոյուղու բացակայություն			39.3			
Փողոցային լուսավորության բացակայություն				38.8		
խմելու որակյալ ջրի անմատչելիություն, անբարեկարգ ներքին ցանց					49.9	

Աղբյուր՝ S2<4 P3 հետազոտություն

Լոռու բնակչության միջինում 54.4, Շիրակի բնակչության 34.6 և Տավուշի բնակչության 30.5 տոկոսը գտնում են, որ իրենց համայնքում առկա խնդիրները կարող են լուծվել կառավարության մակարդակում:

Այնուամենայնիվ, բնակչության բավականին մեծ հատված կարևորում է համայնքի ղեկավարի և բնակիչների դերը և գտնում, որ համայնքային

խնդիրների հիմնական պատճառը համայնքի ղեկավարի և/կամ համայնքի բնակիչների պասիվությունն է:

Համայնքի բյուջեի սահմանափակությունը մատնանշել են փոքրաթիվ քաղաքացիներ: Համայնքի բյուջեն սահմանափակ են գնահատել ընդամենը շահառու մարզերի բնակչության մոտ 3.2 տոկոսը:

Աղյուսակ 37. Համայնքում առկա խնդիրների չլուծման պատճառը բնակիչների կարծիքով, տոկոս, բազմակի պատասխան


	Լոռի		Շիրակ		Տավուշ	
	գյուղ	քաղաք	գյուղ	քաղաք	գյուղ	քաղաք
Կազմակերպող չկա	14.7	16.7	33.7	30.2	25.6	17.3
Համայնքի ղեկավարը պասիվ է	12.4	15.2	17.9	26.6	16.2	17.3
Համայնքի բնակիչները պասիվ են	10.2	17.7	14.7	10.7	17.7	23.1
Հույսը դրել են միայն համայնքի ղեկավարի վրա	3.6	8.1	2.7	4.7	8.1	11.2
Հույսը դրել են միայն արտաքին օժանդակության վրա	15.5	11.9	8.4	12.8	10.3	6.1
Չեն հավատում, որ հնարավոր է ներքին ուժերով լուծել	3.3	3.3	17.9	6.0	4.2	9.3
Համայնքի լուծելու խնդիրը չէ, այլ՝ կառավարության	59.4	49.5	37.6	31.5	32.2	28.7
Համայնքի բյուջեն սահմանափակ է	4.3	1.5	4.2	2.6	4.4	1.9
Բնակիչները չեն համաձայնվում գումար վճարել	2.0	4.3	0.5	3.6	3.2	1.6
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0

Աղբյուր՝ ՏՀՀԿ Բ3 հետազոտություն

Համայնքներում իրականացվելիք ծրագրերի մասին տեղեկացվածության մակարդակը ցածր է՝ միջինում կազմում է 4.1 տոկոս: Այն համեմա-

տաբար ավելի բարձր է Տավուշում և ցածր՝ Շիրակում:

Գծապատկեր 31. Բնակչության տեղեկացվածությունը հաջորդ տարվա ընթացքում համայնքում իրականացվելիք ծրագրերի մասին, տոկոս



Աղբյուր՝ ՏՀՀԿ Բ3 հետազոտություն

Համայնքային բյուջետային ծրագրերի մասին իրենց տեղյակ համարող բնակչության տեղեկացվածության հիմնական աղբյուր է հանդիսանում «բերնից բերան» տարբերակը: Այդ տարբերակը հիմնական աղբյուր են համարել շահառու

մարզերի քաղաքային տեղեկացված բնակչության 42.9, իսկ գյուղական բնակչության 52.1 տոկոսը: Ընդ որում, այս աղբյուրին են առավելապես դիմում Շիրակի մարզի բնակչությունը՝ մոտ 68 տոկոս:

Աղյուսակ 38. Համայնքային բյուջեի մասին տեղեկատվության փոխանակման աղբյուրները, տոկոս


	Լոռի		Շիրակ		Տավուշ		Ընդամենը	
	գյուղ	քաղաք	գյուղ	քաղաք	գյուղ	քաղաք	գյուղ	քաղաք
Ծրագրերի հանրային քննարկումներ	8.3	11.1	15.4	0.0	4.3	0.0	8.3	4.1
Պաշտոնական հայտարարություններ՝ համայնքապետարանի պատ	8.3	11.1	0.0	0.0	0.0	0.0	2.1	4.1
Համայնքապետարանի ուղարկած հաղորդագրություններ	0.0	11.1	0.0	8.3	8.7	0.0	4.2	6.1
Համայնքի ինտերնետային կայք	25.0	38.9	7.7	8.3	8.7	0.0	12.5	16.3
Ավագանու անդամներից՝ ոչ պաշտոնական	8.3	11.1	15.4	25.0	8.7	15.8	10.4	16.3
Ավագանու անդամներից՝ պաշտոնական	16.7	11.1	7.7	8.3	13.0	5.3	12.5	8.2
Բերնից բերան	33.3	22.2	69.2	66.7	52.2	47.4	52.1	42.9
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0

Աղբյուր՝ ՏՀԿ Բ3 հետազոտություն

Համայնքապետարանի կողմից համայնքային ծրագրերի քննարկումների կազմակերպման մասին դժվարացել են պատասանել բնակչության մոտ 47.2 տոկոսը, իսկ 25.3 տոկոսը նշում

են, որ նման միջոցառումներ չեն կազմակերպվում: Նրանց միայն 27.5 տոկոսն է նշում, որ տարին մեկ կամ ավել անգամներ կազմակերպվում են բյուջետային քննարկումներ:

Գծապատկեր 32. Համայնքի ավագանու կամ համայնքապետի կողմից կազմակերպվում են արդյոք համայնքային ծրագրերի քննարկումներ, տոկոս




Աղբյուր՝ ՏՀԿ Բ3 հետազոտություն

Բյուջետային ծախսերի մասին որոշումներ կայացնելիս բնակիչների կարծիքը և ցանկությունները «հաշվի չեն առնվում» գտնում են բնակիչ-

ների 41.1 տոկոսը, իսկ «լիովին հաշվի են առնվում» պատասխանել է 10.0 տոկոսը:

Գծապատկեր 33. Որքանով է համայնքի բնակչության կարծիքը և ցանկությունները հաշվի առնվում համայնքապետարանի կողմից բյուջետային ծախսերի մասին որոշումներ կայացնելիս, համայնքի բնակիչների գնահատական, տոկոս



Աղբյուր՝ ՏՀԿ Բ3 հետազոտություն

Բնակավայրերի մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար մնում է բավականաչափ ցածր: Հաշմանդամություն ունեցող անդամ ունեցող ՏՏ-ների միայն 29 տոկոսն

է գտնում, որ իրենց դպրոցը մատչելի է հաշմանդամություն ունեցող երեխաների համար, իսկ բնակավայրերի օբյեկտները մատչելի են գնահատել նրանց ընդամենը 19 տոկոսը:

Աղյուսակ 39. Հաշմանդամություն ունեցող անձանց համար բնակավայրերի մատչելիությունը, տոկոս ՏՏ-ների նկատմամբ, որոնցում առկա են հաշմանդամություն ունեցող անձիք

	Դպրոցի մատչելիությունը				Բնակավայրի օբյեկտների մատչելիությունը			
	Լոռի	Շիրակ	Տավուշ	Ընդամենը	Լոռի	Շիրակ	Տավուշ	Ընդամենը
Ոչ մատչելի է	30.0	20.0	7.7	17.9	15.2	17.9	10.8	14.3
Մասամբ մատչելի է	10.0	20.0	23.1	17.9	11.7	28.4	11.7	17
Մատչելի է	20.0	20.0	38.5	28.6	25.7	9.5	21.7	19
Զի վերաբերվում	40.0	40.0	30.8	35.7	47.4	44.2	55.8	49.8

Աղբյուր՝ ՏՀԿ Բ3 հետազոտություն

5.2. Հանրային ծառայությունների կարևորության, հասանելիության և կարիքի գնահատում



Հետազոտությունը հնարավորություն է տվել գնահատել բազմաչափ աղքատությունը պայմանավորող մի շարք ծառայությունների կարևորությունը, հասանելիությունը և կարիքը շահառու մարզերի SS-ների համար: Այդ նպատակով գնահատվել են պետական և համայնքային բյուջեների միջոցներով մատուցվող մի շարք սոցիալական և համայնքային ծառայություններ, ինչպես նաև համայնքային միջավայրը բնութագրող ծառայություններ: Վերջին խմբում բացի համայնքի և պետական բյուջեի կողմից մատուցվող ծառայություններից ներառվել են նաև ծառայություններ, որոնք չնայած մատուցվում են ոչ պետական ոլորտի կողմից, սակայն համայնքում դրանց հասանելիությունը և որակը, ընդհանուր առմամբ, բնութագրում է տարածքային զարգացման մակարդակը և կարևոր են բազմաչափ աղքատության բնութագրման տեսանկյունից: Այդպիսի ծառայություններ են, օրինակ, որակյալ սննդի խանութների, բանկերի և բանկոմատների, սրճարանների, ռեստորանների և ակումբների, գեղեցկության սրահների և այլն առկայությունը համայնքում:

Բոլոր այն դեպքերում, երբ կոնկրետ ծառայությունը, պայմանավորված SS-ի կառուցվածքով և SS անդամների տարիքային և սոցիալական տարբեր խմբերին պատկանելությամբ, չի վերաբերվում կոնկրետ SS-ին, ապա այդ SS կողմից այս ծառայությունների գնահատականները հետազոտության արդյունքներում չեն կարևորվել:

Միայն այն դեպքերում, երբ SS կողմից որևէ ծառայություն գնահատվել է միջին և բարձր կարեւորության, իրականացվել է նաև SS համար այդ ծառայության հասանելիության գնահատում: Հասանելիության գնահատականը հանդիսա-

նում է ծառայության որակին ներկայացվող պահանջների, ծառայության ֆիզիկական հասանելիության և ֆինանսական մատչելիության ամփոփ գնահատական: Այսինքն՝ հասանելիության գնահատականը բնութագրում է SS կողմից կոնկրետ որակի ծառայության ֆիզիկապես հասանելիության և մատչելիության կոնկրետ մակարդակ:

Կարիքի գնահատման հիմքում SS-ների կողմից կոնկրետ ծառայության կարևորության և հասանելիության գնահատականներն են: Ընդունվել է, որ SS-ն որևէ ծառայության նկատմամբ ունի ձևավորված կարիք այն դեպքում, երբ կոնկրետ ծառայությունը SS համար գնահատվում է շատ կարևոր, սակայն ծառայությունը SS-ին ընդհանրապես հասանելի չէ:

• Սոցիալական ծառայություններ

Առանձնացված սոցիալական ծառայություններից (տես Աղյուսակ 40) երեք մարզերի բնակչությունն առավելապես կարևորել է բժշկական ծառայությունների և դեղերի մատչելիությունը, հաջորդում է՝ համայնքում երիտասարդների զբաղվածության հնարավորությունների ապահովումը:

Քննարկվող ծառայությունների մեջ երեք մարզերում էլ ամենից ցածր կարևորության գնահատականներ են ստացել ընտանեկան բռնությունից տուժածներին աջակցության ծառայությունները:

Ստորև աղյուսակում ներկայացված են սոցիալական ծառայությունների փոխադարձ համեմատական կարևորության գնահատականները՝ 5 բալային սանդղակում:

Աղյուսակ 40. Սոցիալական ծառայությունների կարևորության գնահատականներ, 1-5 բալային համակարգ*

Ծառայություն	Ընդամենը			Գյուղ			Քաղաք		
	Լոռի	Շիրակ	Տավուշ	Լոռի	Շիրակ	Տավուշ	Լոռի	Շիրակ	Տավուշ
Բժշկական ծառայությունների մատչելիություն	4.8	4.6	4.8	4.8	4.6	4.9	4.8	4.7	4.8
Դեղերի մատչելիություն	4.7	4.5	4.8	4.7	4.4	4.8	4.7	4.6	4.7
Մանկապարտեզների և այլ ցերեկային խնամքի կենտրոնների առկայություն երեխաների համար	2.4	2.3	2.4	2.5	2.6	2.3	2.3	2.0	2.4
Դպրոցում դասավանդման որակ	3.1	3.0	3.1	3.2	3.1	3.1	3.1	2.8	3.1
Արտադպրոցական երիտասարդական գործունեության առկայություն (կրթական, մշակութային, ժամանցային)	3.1	2.8	3.0	3.2	2.9	3.0	3.1	2.6	2.9
Երիտասարդների զբաղվածության հնարավորությունների առկայություն	3.4	3.3	3.6	3.5	3.6	3.7	3.3	3.0	3.5
Տարեցների համար զբաղվածության հնարավորությունների առկայություն	3.3	2.7	2.6	3.6	3.0	2.5	3.0	2.4	2.7
Տարեցներին սովիալական ծառայությունների մատուցում	3.2	2.7	2.4	3.6	3.0	2.4	2.8	2.4	2.5
Ընտանեկան բռնությունից տուժածներին աջակցություն	1.8	1.4	1.7	1.7	1.7	1.7	1.9	1.1	1.7

Աղբյուր՝ S2ՀԿ Բ3 հետազոտություն

* 5-ը բնութագրում է ծառայությունների շատ կարևորությունը, իսկ 1-ը՝ ոչ կարևորությունը:
 Կապույտով - բարձր կանոնություն՝ 4 և բարձր գնահատական
 Դեղինով - միջին կանոնություն՝ 2-4 գնահատական
 Մոխրագույնով - ցածր կարևորություն՝ մինչև 2 գնահատական

Քննարկվող գրեթե բոլոր դեպքերում ծառայությունների հասանելիությունը համեմատաբար բարձր է Շիրակում, իսկ կարիքը՝ Լոռիում: Ընտրված ծառայությունների շրջանակում շահառու մարզերի SS-ների կարիքը բարձր է հատկապես բժշկական ծառայությունների և մատչելի դեղերի, երիտասարդների և տարեցների զբաղվածության, ինչպես նաև տարեցներին մատուցվող սոցիալական ծառայությունների մասով:

Լոռու մարզում տնային տնտեսությունները հատկապես տարեցներին մատուցվող, ինչպես նաև՝ մատչելի առողջապահական ծառայությունների կարիք ունեն: Մասնավորապես, տարեցներին սոցիալական ծառայությունների մատուցման կարիք ունեն SS-ների 34.8 տոկոսը, իսկ տարեցների համար զբաղվածության հնարավորությունների՝ SS-ների 34.6 տոկոսը: Մատչելի դեղերի և բժշկական ծառայությունների կարիք ունեն համապատասխանաբար SS-ների 31.4 և 22.0 տոկոսը: Երիտասարդների զբաղվածության հնարավորությունների առկայության կարիքը ևս Լոռու մարզում բավականին բարձր է՝ 25.7 տոկոս:

Ընտանեկան բռնությունից տուժածներին աջակցության կարիքը նույնպես համեմատաբար բարձր է գնահատվում Լոռու մարզում՝ 9.5 տոկոս, մինչդեռ Տավուշի մարզում այս ծառայության կարիքն ունեն SS-ների 4.9 տոկոսը, իսկ Շիրակում՝ 0.1 տոկոսը: Նկատենք, որ ընտանեկան բռնությունից տուժածներին աջակցության ծառայությունները համեմատաբար ավելի հասանելի են Տավուշի տնային տնտեսություններին:

Լոռիում համեմատաբար բարձր է նաև երեխաներին և երիտասարդներին մատուցվող ծառայությունների կարիքը:

Մանկապարտեզների և երեխաների ցերեկային խնամքի ծառայությունների կարիքը շահառու մարզերում բարձր չէ՝ ընդամենը մոտ 5 տոկոս: Դպրոցում դասավանդման որակը գոհացուցիչ է և բարելավման կարիք գրեթե չունի:

Չնայած կարիքի գնահատականների տարբերությանը, բերված բոլոր սոցիալական ծառայությունները գրեթե հավասարապես հասանելի են Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերում: Թերևս միայն տարեցներին մատուցվող ծառայությունների դեպքում Տավուշի մարզն առանձնանում է ցածր հասանելիությամբ՝ 4.7 տոկոս:

Աղյուսակ 41. Սոցիալական ծառայությունների հասանելիության և կարիքի գնահատականներ, տոկոս SS-ների նկատմամբ

Ծառայություն	Հասանելիություն						Կարիք		
	Լոռի		Շիրակ		Տավուշ		Լոռի	Շիրակ	Տավուշ
	Մասնաբ հասանելի	Լիովին հասանելի	Մասնաբ հասանելի	Լիովին հասանելի	Մասնաբ հասանելի	Լիովին հասանելի			
Բժշկական ծառայությունների մատչելիություն	54.1	23.2	78.8	10.0	57.5	23.9	22.0	11.1	18.4
Դեղերի մատչելիություն	52.0	15.9	78.3	8.0	53.4	20.4	31.4	13.5	24.6
Մանկապարտեզների և այլ ցերեկային խնամքի կենտրոնների առկայություն երեխաների համար	13.4	20.5	19.5	10.7	6.6	24.9	5.3	5.1	4.9
Դպրոցում դասավանդման որակ	13.4	41.1	24.9	26.8	11.5	41.5	2.4	0.5	1.4
Արտադպրոցական երիտասարդական գործունեության առկայություն (կրթական, մշակութային, ժամանցային)	28.5	16.2	35.8	11.5	22.3	15.7	15.4	4.7	14.4
Երիտասարդների զբաղվածության հնարավորությունների առկայություն	36.1	7.0	46.5	6.1	26.9	10.0	25.7	14.7	29.5
Տարեցների համար զբաղվածության հնարավորությունների առկայություն	25.7	4.1	32.6	4.7	10.9	2.7	34.6	14.9	28.2
Տարեցներին սոցիալական ծառայությունների մատուցում	23.0	3.3	24.1	5.1	4.1	0.6	34.8	20.7	32.3
Ընտանեկան բռնությունից տուժածներին աջակցություն	8.4	3.0	10.2	1.0	10.1	4.1	9.5	0.1	4.9

Աղբյուր՝ ՏՀՀԿ Բ3 հետազոտություն
Դեղինով - կոնկրետ ծառայության ամենաբարձր հասանելիությունը՝
շահառու մյուս մարզերի համեմատությամբ
Կապույտով - կոնկրետ ծառայության նկատմամբ արձանագրված կարիքի ոչ պակաս 20 տոկոս մակարդակ

● **Համայնքային ծառայություններ**

Համայնքային ծառայություններից բոլոր երեք մարզերում համեմատաբար ավելի մեծ կարևորություն ունեն փողոցային լուսավորության, աղ-

բի ժամանակին հավաքման ծառայությունները, նաև՝ ներհամայնքային ճանապարհների վիճակը: Միջին կարևորություն ունի համայնքապետարանի կողմից բնակչությանը տրամադրվող տեղեկատվությունը, նաև՝ աջակցությունը:

Աղյուսակ 42. Համայնքային ծառայությունների կարևորության գնահատականներ, 1-5 բալային համակարգ*

Ծառայություն	Ընդամենը			Գյուղ			Քաղաք		
	Լոռի	Շիրակ	Տավուշ	Լոռի	Շիրակ	Տավուշ	Լոռի	Շիրակ	Տավուշ
Փողոցային լուսավորություն	4.7	4.5	4.7	4.7	4.6	4.9	4.7	4.5	4.6
Աղբի ժամանակին հավաքում	4.5	4.5	4.8	4.5	4.5	4.8	4.6	4.5	4.7
Ներհամայնքային ճանապարհների վիճակ	4.4	4.5	4.3	4.2	4.4	4.3	4.6	4.6	4.3
Համայնքապետարանի մասնակցությունը տարբեր սանիտարական իրավիճակներին (վնասատուներ, կրծողներ...)	3.1	2.5	3.3	3.1	3.1	3.2	3.1	1.9	3.3
Բնակավայրի/համայնքի մասին համայնքապետարանից բնակիչներին տրվող տեղեկատվություն	3.6	3.5	3.9	3.8	3.7	4.1	3.4	3.3	3.7
Համայնքապետարանի կողմից բնակչությանը տրամադրվող աջակցություն	3.7	3.7	3.8	3.9	3.9	3.9	3.4	3.5	3.6

Աղբյուր՝ ՏՀՀԿ Բ3 հետազոտություն

* 5-ը բնութագրում է ծառայությունների շատ կարևորությունը, իսկ 1-ը՝ ոչ կարևորությունը:

Կապույտով - բարձր կանոնություն՝ 4 և բարձր գնահատական

Դեղինով - միջին կանոնություն՝ 2-4 գնահատական

Մոխրագույնով - ցածր կարևորություն՝ մինչև 2 գնահատական

Համայնքային ծառայությունները կրկին համեմատաբար բարձր հասանելի են Շիրակի մարզի ՏՏ-ներին և ավելի քիչ հասանելի՝ Տավուշի մարզում: Ընդ որում, փողոցային լուսավորության և աղբի ժամանակին հավաքման ծառայությունների հասանելիությունը բոլոր երեք մարզերում բավականաչափ բարձր է գնահատվել:

Համայնքային մյուս ծառայությունների նկատմամբ կարիքն էապես բարձր է հատկապես Տավուշի մարզում: Համայնքապետարանի կողմից

բնակչությանը տրամադրվող աջակցության կարիքն ունեն Տավուշի մարզի ՏՏ-ների 39.7 տոկոսը, իսկ տարբեր սանիտարական իրավիճակներին համայնքապետարանի մասնակցության կարիքը կարևորել են ՏՏ-ների 29.8 տոկոսը: Հատկանշական է, որ Տավուշի մարզում համայնքի մասին համայնքապետարաններից բնակիչներին տրվող տեղեկատվության կարիքը ևս նշանակալի է՝ 29.0 տոկոս:

Աղյուսակ 43. Համայնքային ծառայությունների հասանելիության և կարիքի գնահատականներ, տոկոս SS-ների նկատմամբ

Ծառայություն	Հասանելիություն						Կարիք		
	Լոռի		Շիրակ		Տավուշ		Լոռի	Շիրակ	Տավուշ
	Մասամբ հասանելի	Լիովին հասանելի	Մասամբ հասանելի	Լիովին հասանելի	Մասամբ հասանելի	Լիովին հասանելի			
Փողոցային լուսավորություն	19.4	73.4	51.6	42.9	20.7	72.0	4.9	3.7	6.1
Աղբի ժամանակին հավաքում	23.3	68.2	45.9	49.4	20.4	61.9	5.7	1.9	15.3
Ներհամայնքային ճանապարհների վիճակ	34.1	23.3	34.2	22.1	36.6	24.6	18.9	19.3	18.7
Համայնքապետարանի մասնակցությունը տարբեր սանիտարական իրավիճակներին (վնասատուներ, կրծողներ և այլն)	29.4	10.3	36.8	7.2	21.2	8.8	21.1	4.3	29.8
Բնակավայրի/համայնքի մասին համայնքապետարանից բնակիչներին տրվող տեղեկատվություն	33.5	27.1	61.4	10.1	28.4	20.9	14.9	9.0	29.0
Համայնքապետարանի կողմից բնակչությանը տրամադրվող աջակցություն	29.1	23.4	50.1	3.5	22.1	9.3	21.6	27.2	39.7

Աղբյուր՝ S2<4 Բ3 հետազոտություն
 Դեղինով - կոնկրետ ծառայության ամենաբարձր հասանելիությունը՝
 շահառու մյուս մարզերի համեմատությամբ
 Կապույտով - կոնկրետ ծառայության նկատմամբ արձանագրված կարիքի ոչ պակաս 20 տոկոս մակարդակ

• Համայնքային միջավայրը բնութագրող ծառայություններ

Համայնքային միջավայրը բնութագրող ծառայություններից առավելապես կարևորվել է որակյալ սննդամթերքի խանութների առկայությունը: Հաջորդիվ գյուղական բնակչության համար կարևորվել է հանրային տրանսպորտի առկա-

յությունը, իսկ քաղաքային բնակչության համար՝ այգիների և հանգստի վայրերի առկայությունը: Տավուշի մարզի բնակչությունը բարձր կարևորության գնահատական է տվել նաև գեղեցկության սրահների (4.2 միավոր) և բանկերի/բանկոմատների առկայությանը (4.1 միավոր):

Աղյուսակ 44. Համայնքային միջավայրը բնութագրող ծառայությունների կարևորության գնահատականներ, 1-5 բալային համակարգ

Ծառայություն	Ընդամենը			Գյուղ			Քաղաք		
	Լոռի	Շիրակ	Տավուշ	Լոռի	Շիրակ	Տավուշ	Լոռի	Շիրակ	Տավուշ
Որակյալ սննդամթերքի խանութների առկայություն	4.9	4.6	4.7	4.9	4.6	4.8	4.8	4.7	4.7
Հանրային տրանսպորտ	4.3	3.8	3.9	4.3	4.0	4.1	4.3	3.6	3.7
Արագաչափերի օգտագործում համայնքում	2.4	2.2	3.0	2.2	2.2	2.6	2.5	2.3	3.4
Այգիների և հանգստի վայրերի առկայություն	4.0	4.1	3.8	3.6	4.1	3.5	4.3	4.2	4.1
Ոստիկանության արձագանքման արագություն	2.3	2.3	2.5	2.1	2.6	2.6	2.6	2.0	2.5
Բանկ/ բանկոմատ	3.5	3.7	3.8	3.0	3.7	4.1	3.9	3.6	3.5
Սրճարան/բար/ռեստորան/ակումբ	2.5	3.3	2.6	2.3	3.5	2.5	2.7	3.1	2.6
Վարսավիրանոց/գեղեցկության սրահ	3.5	3.7	3.9	3.3	3.8	4.2	3.6	3.5	3.6
Համայնքում փոքր բիզնես բացելու հնարավորություններ	2.4	2.6	3.3	2.4	2.8	3.2	2.4	2.4	3.4

Աղբյուր՝ S2ՀԿ Բ3 հետազոտություն
 *_5-ը բնութագրում է ծառայությունների շատ կարևորությունը, իսկ 1-ը՝ ոչ կարևորությունը:
 Կապույտով - բարձր կանոնություն՝ 4 և բարձր գնահատական
 Դեղինով - միջին կանոնություն՝ 2-4 գնահատական

Ծառայությունների այս խմբի հասանելիությունը ևս համեմատաբար բարձր է Շիրակի մարզում: Բոլոր մարզերում հավասարապես բարձր հասանելի են համարվել որակյալ սննդամթերքի խանութների առկայությունը:

Առանձնացված համայնքային միջավայրը բնութագրող ծառայություններից Տավուշի մարզում համեմատաբար բարձր է բանկերի/բանկոմատների առկայության կարիքը՝ 26.3 տոկոս, համայնքում փոքր բիզնես բացելու հնարավորությունների կարիքը՝ 23.4 տոկոս, և համայնքներում արագաչափերի օգտագործման կարիքը՝ 23.2 տոկոս:

Շիրակի մարզում՝ մեծամասամբ գյուղական բնակավայրերում, ՏՏ-ները հատկապես ժամանցային վայրերի (սրճարան/բար/ռեստորան/ակումբ) առկայության կարիք ունեն՝ 20.5 տոկոս:

Լոռու մարզի ՏՏ-ների կարիքը համեմատաբար բարձր է համայնքներում բանկերի/բանկոմատների պահանջի և հանրային տրանսպորտի բարելաման մասով, համապատասխանաբար 22.2 և 19.1 տոկոս:

Այգիների և հանգստի վայրերի առկայության կարիքը բարձր է բոլոր երեք մարզերում՝ Տավուշի մարզում 24.4 տոկոս, Լոռու մարզում 24.3 տոկոս և Շիրակի մարզում 17.4 տոկոս:

Աղյուսակ 45. Համայնքային միջավայրը բնութագրող ծառայությունների հասանելիության և կարիքի գնահատականներ, տոկոս SS-ների նկատմամբ

Ծառայություն	Հասանելիություն						Կարիք		
	Լոռի		Շիրակ		Տավուշ		Լոռի	Շիրակ	Տավուշ
	Մասամբ հասանելի	Լիովին հասանելի	Մասամբ հասանելի	Լիովին հասանելի	Մասամբ հասանելի	Լիովին հասանելի			
Որակյալ սննդամթերքի խանութների առկայություն	32.0	58.5	58.9	36.8	42.5	50.3	8.2	3.9	6.9
Հանրային տրանսպորտ	27.5	43.7	52.3	23.3	27.7	35.9	19.1	11.8	16.5
Արագաչափերի օգտագործում համայնքում	18.7	13.3	34.6	5.2	14.3	14.8	9.6	3.3	23.2
Այգիների և հանգստի վայրերի առկայություն	36.3	22.8	56.6	17.6	27.8	23.2	24.3	17.4	24.4
Ոստիկանության արձագանքման արագություն	19.0	18.9	41.7	7.0	19.3	19.9	4.4	1.0	4.9
Բանկ/ բանկոմատ	21.1	25.8	42.0	27.3	17.4	30.4	22.2	13.1	26.3
Սրճարան/բար/ռեստորան/ակումբ	22.5	10.5	39.7	12.3	19.0	14.9	11.8	20.5	12.9
Վարսավիրանոց/գեղեցկության սրահ	32.3	31.8	44.4	28.4	24.6	45.5	13.2	13.1	10.7
Համայնքում փոքր բիզնես բացելու հնարավորություններ	22.0	9.5	41.1	4.2	28.5	9.8	10.5	6.2	23.4

Աղբյուր՝ ՏՀՀԿ Բ3 հետազոտություն
 Դեղինով - կոնկրետ ծառայության ամենաբարձր հասանելիությունը՝
 շահառու մյուս մարզերի համեմատությամբ
 Կապույտով - կոնկրետ ծառայության նկատմամբ արձանագրված կարիքի ոչ պակաս 20 տոկոս մակարդակ

5.3. Ծառայությունների բարելավման ուղղություններ


Ստորև ներկայացնում ենք շահառու մարզերում առկա մի շարք խնդիրների լուծման իրենց իսկ կողմից առաջարկվող ուղղությունները և հնարավորությունները:

Մատուցվող առողջապահական ծառայությունների բարելավման տեսանկյունից SS-ները մի կողմից կարևորում են բժշկական ծառայությունների մատչելիության բարելավումը, մյուս կողմից՝ ավելի որակյալ բժշկական սպասարկող անձնակազմի առկայությունը մարզերում: Շահառու մարզերի բնակչության ավելի քան 20 տոկոսը շեշտադրում է առողջապահության ապա-

հովագրության ծրագրերի դերը և, մասնավորապես, կարևորում է մատչելի դեղապահովումը:

Ընդհանուր առմամբ, Լոռիում առողջապահական ծառայությունների բարելավման տեսանկյունից ավելի շատ կարևորվում են մատչելի դեղապահովման ծրագրերը, իսկ Տավուշում և Շիրակում՝ ավելի որակյալ բժշկական սպասարկող անձնակազմի առկայությունը: Նկատենք նաև, որ Տավուշի բնակչության համար մատչելի ատամնաբուժական ծառայությունները համեմատաբար մեծ կարևորություն ունեն:


Գծապատկեր 34. Համայնքի բնակիչների առողջապահական ծառայությունների բարելավման հնարավորությունները (բազմակի պատասխան), տոկոս



Զբաղվածության բարելավման հնարավորությունները բնակչությունը գերազանցապես կապում է լրացուցիչ աշխատատեղերի ստեղծման հետ՝ մոտ 86 տոկոս: Ուշագրավ է, որ բնակչության ավելի քան 20 տոկոսը իրենց համայնքի բնակչության զբաղվածության բարելավման հնարավորությունները տեսնում է աշխատատեղերի պահանջներին համապատասխան պրակտիկ հմտությունների ձևավորմամբ՝ 22.5 տոկոս, և լրացուցիչ վերապատրաստման դասընթաց-

ների մասնակցությամբ՝ 21.8 տոկոս: Տավուշի և Լոռու մարզերի քաղաքային բնակչությունը զբաղվածության մեծացման համար կարևորում է աշխատող ծնողների երեխաների խնամքի լրացուցիչ ծառայությունների ստեղծումը, մինչդեռ գյուղական բնակչության համար՝ հատկապես Տավուշի և Շիրակի, էական է լրացուցիչ փոխադրման/տրանսպորտային ծառայությունների առկայությունը դեպի աշխատանքի վայրեր:


Գծապատկեր 35. Զբաղվածության բարելավման հնարավորությունները (բազմակի պատասխան), տոկոս



Ինչպես արձանագրված էր նախորդ բաժնում, դպրոցում դասվանդման որակը, արտադպրոցական գործունեությունը, մանկապարտեզների և երեխաների այլ ցերեկային խնամքի կենտրոնների ծառայությունները կարևորության բարձր գնահատական են ստացել համապատասխան տարիքային խմբի երեխաներ ունեցող տնային տնտեսությունների կողմից: Սակայն պետք է

նկատենք, որ, ընդհանուր առմամբ, համայնքի երեխաներին աջակցության և դաստիարակության բարելավման տեսանկյունից բոլոր երեք մարզերում առավելապես կարևորվում են այգիների, պուրակների և խաղահրապարակների առկայությունը, ինչպես նաև՝ ամառային հանգրստի ծրագրերը և ճամբարները:

Գծապատկեր 36. Համայնքի երեխաներին աջակցության և դաստիարակության բարելավման հնարավորությունները (բազմակի պատասխան), տոկոս




Աղբյուր՝ S2<4 Բ3 հետազոտություն

Տարեցների համար զբաղվածության հնարավորությունները և տարեցներին սոցիալական ծառայությունների մատուցումը հատկապես կարևորվել է Լոռու գյուղական բնակավայրերի ՏՏ-ների կողմից: Ընդ որում, տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց աջակցության բարելավման տեսանկյունից բոլոր երեք մարզե-

րում էական են համարվել տնային պայմաններում առողջապահական, ինչպես նաև տնային օգնության/խնամքի ծառայությունների մատուցումը: Հատկապես Լոռիում և Տավուշում կարելի էր վերվել են նաև սննդի առաքման ծառայությունները:

Գծապատկեր 37. Համայնքի տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց աջակցության բարելավման հնարավորությունները (բազմակի պատասխան), տոկոս



Աղբյուր՝ ՏՀՀԿ Բ3 հետազոտություն

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ



Աղյուսակ 1. Հետազոտության ընտրանքի պլանը	18
Աղյուսակ 2. Հետազոտության ընտրանքը և ընտրանքի սխալի գնահատականները	18
Աղյուսակ 3. Բնակչության հիմնական կարիքներին ուղղված քաղաքականությունների շրջանակը	21
Աղյուսակ 4. Բնակչության բնակարանային պայմանների բարելավմանն ուղղված քաղաքականությունների շրջանակը	23
Աղյուսակ 5. Կրթության մատչելիության և որակի բարելավմանն ուղղված քաղաքականությունների շրջանակը	24
Աղյուսակ 6. Աշխատանքի և աշխատանքային հարաբերությունների կարգավորմանն ուղղված քաղաքականությունների շրջանակը	26
Աղյուսակ 7. Առողջապահական կարիքի բավարարմանն ուղղված քաղաքականությունների շրջանակը	28
Աղյուսակ 8. Պետական բյուջետային ծրագրերի քանակը և ֆինանսավորման ծավալները 2019-2022թթ.	28
Աղյուսակ 9. Բնակչության հիմնական կարիքների բավարարմանն ուղղված բյուջետային ծրագրեր	29
Աղյուսակ 10. Բնակչության հիմնական կարիքների բավարարմանն ուղղված բյուջետային ծրագրերի շահառուներ	30
Աղյուսակ 11. Բնակչության բնակարանային պայմանների բարելավմանը նպաստող բյուջետային ծրագրերը	31
Աղյուսակ 12. Բնակարանային պայմանների բավարարմանն ուղղված բյուջետային ծրագրերի արդյունքային ցուցանիշներ	31
Աղյուսակ 13. Բնակչության կրթական կարիքի բավարարմանն ուղղված բյուջետային ծրագրերը	32
Աղյուսակ 14. Կրթական կարիքի բավարարմանն ուղղված բյուջետային ծրագրերի արդյունքային ցուցանիշները	32
Աղյուսակ 15. Բյուջետային ծրագրերի՝ կրթության որակի և հասանելիության հիմնական արդյունքային ցուցանիշները	33
Աղյուսակ 16. Զբաղվածության ծրագրի շահառուները	35
Աղյուսակ 17. Բնակչության առողջապահական կարիքի բարելավմանն ուղղված բյուջետային ծրագրերը	35
Աղյուսակ 18. Առողջապահական կարիքին ուղղված բյուջետային ծրագրերի շահառուները	36
Աղյուսակ 19. Բազմաչափ աղքատության վրա ազդեցության պոտենցիալ ունեցող բյուջետային ֆինանսավորման ծավալները, 2020-2022թթ.	37
Աղյուսակ 20. Համայնքային բյուջեների ամփոփ եկամուտների կառուցվածքը, մլն դրամ	38
Աղյուսակ 21. Շահառու մարզերում իրականացվող սուբվենցիոն ծրագրերը, 2021 և 2022 թվականներ, մլն դրամ	40
Աղյուսակ 22. Համայնքային բյուջեների ամփոփ ծախսերի կառուցվածքը, տոկոս	41
Աղյուսակ 23. Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերի ՏՏ-ների կառուցվածքը, տոկոս	44
Աղյուսակ 24. Գործազուրկների դեմոգրաֆիական և կրթական կառուցվածքը, տոկոս	46
Աղյուսակ 25. Գործազուրկության մակարդակն ըստ բնակչության առանձին խմբերի, տոկոս (փակագծերում՝ ստանդարտ սխալի մակարդակներն են)	47
Աղյուսակ 26. Զբաղվածների բաշխումը, տոկոս	48
Աղյուսակ 27. Միգրանտների սեռատարիքային բաշխումը, տոկոս	49
Աղյուսակ 28. Անապահով ՏՏ-ների կառուցվածքը, տոկոս	55
Աղյուսակ 29. Երեխաների խնամքի և զբաղվածության ծառայությունների բաշխումը, տոկոս, բազմակի պատասխան	57
Աղյուսակ 30. Սոցիալական ընտրված քաղաքականություններից	58
տեղեկացվածության մակարդակը, տոկոս	58
Աղյուսակ 31. Նշված սոցիալական քաղաքականությունների ազդեցությունը ՏՏ-ում երեխա ունենալու որոշման վրա, տոկոս	59
Աղյուսակ 32. Բնակարան ունեցողների տոկոսը, ովքեր օգտվել են բնակարանների ձեռքբերման պետական ծրագրերից	59
Աղյուսակ 33. ԱՍՀ կողմից մատուցվող զբաղվածության հետևյալ ծառայություններից ՏՏ-ների տեղեկացվածությունը և օգտագործումը, տոկոս	60
Աղյուսակ 34. Բժշկի չդիմելու պատճառները, բազմակի պատասխան	61
Աղյուսակ 35. Բժշկական միջամտության կամ ստացած բուժօգնության տեսակը, տոկոս, բազմակի պատասխան	62
Աղյուսակ 36. ՏՏ-ների կարծիքով իրենց համայնքի համար ամենակարևոր 5 հիմնական խնդիրները, տոկոս, բազմակի պատասխան	65

Աղյուսակ 37. Համայնքում առկա խնդիրների չլուծման պատճառը բնակիչների կարծիքով, տոկոս, բազմակի պատասխան	66
Աղյուսակ 38. Համայնքային բյուջեի մասին տեղեկատվության փոխանակման աղբյուրները, տոկոս.....	67
Աղյուսակ 39. Հաշմանդամություն ունեցող անձանց համար բնակավայրերի մատչելիությունը, տոկոս SS-ների նկատմամբ, որոնցում առկա են հաշմանդամություն ունեցող անձիք	68
Աղյուսակ 40. Սոցիալական ծառայությունների կարևորության գնահատականներ, 1-5 բալային համակարգ*.....	70
Աղյուսակ 41. Սոցիալական ծառայությունների հասանելիության և կարիքի գնահատականներ, տոկոս SS-ների նկատմամբ	71
Աղյուսակ 42. Համայնքային ծառայությունների կարևորության գնահատականներ, 1-5 բալային համակարգ*.....	72
Աղյուսակ 43. Համայնքային ծառայությունների հասանելիության և կարիքի գնահատականներ, տոկոս SS-ների նկատմամբ	73
Աղյուսակ 44. Համայնքային միջավայրը բնութագրող ծառայությունների կարևորության գնահատականներ, 1-5 բալային համակարգ	74
Աղյուսակ 45. Համայնքային միջավայրը բնութագրող ծառայությունների հասանելիության և կարիքի գնահատականներ, տոկոս SS-ների նկատմամբ	75



Գծապատկեր 1. Զբաղվածության ծրագրի ֆինանսավորման ծավալները 2020-2022թթ., մլն. դրամ	34
Գծապատկեր 2. Զբաղվածության ծրագրի ֆինանսավորման կառուցվածքը, 2022թ., տոկոս	34
Գծապատկեր 3. Մեկ շնչի հաշվով համայնքային ամփոփ եկամուտների մակարդակը և աճը	38
Գծապատկեր 4. Համայնքների սեփական եկամուտների կշիռը համայնքային ամփոփ եկամուտների կառուցվածքում, տոկոս	38
Գծապատկեր 5. Համայնքային ամփոփ բյուջեների ներքին դրամաշնորհների կառուցվածքը, 2021 և 2022 թվականներ	39
Գծապատկեր 6. Պետական սուբվենցիաների (կապիտալ) ծավալների համեմատական՝ 2019-2022թթ., մլն. դրամ	40
Գծապատկեր 7. ՀՀ բնակչության բաշխումն ըստ ՀՀ մարզերի և քաղաք Երևանի, 2021 թվականի տարեսկզբի դրությամբ, 1000 մարդ	43
Գծապատկեր 8. Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերի բնակչության բաշխումն ըստ սեռի	43
Գծապատկեր 9. Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերի բնակչության բաշխումն ըստ տարիքի և սեռի, տոկոս	44
Գծապատկեր 10. Բնակչության կրթամակարդակն ըստ մարզերի և ըստ սեռի (6 տարեկանից բարձր բնակչություն) ...	45
Գծապատկեր 11. Գործազրկության մակարդակն ըստ շահառու մարզերի, տոկոս	46
Գծապատկեր 12. Զբաղվածության մակարդակն ըստ շահառու մարզերի, տոկոս	47
Գծապատկեր 13. Կանանց զբաղվածությունն ըստ ոլորտների, տոկոս ընդամենը զբաղված կանանց նկատմամբ	48
Գծապատկեր 14. Միգրացիան ըստ շահառու մարզերի	49
Գծապատկեր 15. Աղքատության մակարդակն ըստ ՀՀ մարզերի և Երևանի, 2019-2021թթ., տոկոս	50
Գծապատկեր 16. Աղքատության մակարդակի ստանդարտ շեղումը 2015-2021 թվականներին, տոկոսային կետ	51
Գծապատկեր 17. Մեկ շնչի հաշվով եկամուտների բաշխման կորերը	51
Գծապատկեր 18. Տնային տնտեսությունների կենսամակարդակի սուբյեկտիվ ինքնագնահատականներ, տոկոս	52
Գծապատկեր 19. Տնային տնտեսությունների եկամուտների և պարտքի մեծության փոփոխության գնահատականները, տոկոս	53
Գծապատկեր 20. Պարտքային պարտավորություններ ունեցող տնային տնտեսությունների կշիռը և պարտքի միջին մեծությունը	53
Գծապատկեր 21. Պարտքի սպասարկման կարողության սուբյեկտիվ գնահատականներ, տոկոս	54
Գծապատկեր 22. Սննդի ծախսերի ապահովման սուբյեկտիվ գնահատականներ, տոկոս	54
Գծապատկեր 23. Ծախսերի ապահովման կարողության սուբյեկտիվ գնահատականներ, տոկոս	55
Գծապատկեր 24. Դպրոց չհաճախող երեխա ունեցող բնակավայրեր, տոկոս բնակավայրերի մեջ	58
Գծապատկեր 25. Հաշմանդամություն ունեցող անձիք, որոնց ԱՍՀՆ զբաղվածության ծառայության կողմից երբևիցե մատուցվել է աշխատանքի տեղավորման ծառայություններ, տոկոս հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ ...	60
Գծապատկեր 26. Բժշկական միջամտության անհրաժեշտություն ունեցող ՏՏ-ները, որոնք չեն դիմել բժշկի, տոկոս	61
Գծապատկեր 27. Հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը առողջապահական ծրագրերին, տոկոս	63
Գծապատկեր 28. ՏՏ կարծիքը իրենց անդամների բժշկի դիմելիս պետպատվերի իրավունք ունենալու մասին, տոկոս	63
Գծապատկեր 29. ՏՏ տեղեկացվածությունը սոցիալապես անապահովներին և հատուկ խմբերում ընդգրկվածների տրամադրվող հիվանդանոցային ծառայությունների անվճար լինելու մասին, տոկոս	64
Գծապատկեր 30. Որևէ կարգի առողջապահական ապահովագրություն ունեցող ՏՏ-ներ, տոկոս	64
Գծապատկեր 31. Բնակչության տեղեկացվածությունը հաջորդ տարվա ընթացքում համայնքում իրականացվելիք ծրագրերի մասին, տոկոս	66
Գծապատկեր 32. Համայնքի ավագանու կամ համայնքապետի կողմից կազմակերպվում են արդյոք համայնքային ծրագրերի քննարկումներ, տոկոս	67
Գծապատկեր 33. Որքանով է համայնքի բնակչության կարծիքը և ցանկությունները հաշվի առնվում համայնքապետարանի կողմից բյուջետային ծախսերի մասին որոշումներ կայացնելիս, համայնքի բնակիչների գնահատական, տոկոս	68
Գծապատկեր 34. Համայնքի բնակիչների առողջապահական ծառայությունների բարելավման հնարավորությունները (բազմակի պատասխան), տոկոս	76
Գծապատկեր 35. Զբաղվածության բարելավման հնարավորությունները (բազմակի պատասխան), տոկոս	76
Գծապատկեր 36. Համայնքի երեխաներին աջակցության և դաստիարակության բարելավման հնարավորությունները (բազմակի պատասխան), տոկոս	77
Գծապատկեր 37. Համայնքի տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց աջակցության բարելավման հնարավորությունները (բազմակի պատասխան), տոկոս	78

ՀԱՎԵԼՎԱԾ 1.

Հետազոտության ընտրանքն ըստ քաղաքային և գյուղական բնակավայրերի

	Լոռի	Շիրակ	Տավուշ
Քաղաք	<ol style="list-style-type: none"> 1. Ալավերդի 2. Թումանյան 3. Սպիտակ 4. Վանաձոր 	<ol style="list-style-type: none"> 1. Արթիկ 2. Գյումրի 3. Մարալիկ 	<ol style="list-style-type: none"> 1. Բերդ 2. Դիլիջան 3. Իջևան
Գյուղ	<ol style="list-style-type: none"> 1. Ամրակից 2. Բազում 3. Գարգառ 4. Գեղասար 5. Գյուլագարակ 6. Գուգարք 7. Դարպաս 8. Դսեղ 9. Լեռնանցք 10. Լոռի Բերդ 11. Մեծ Պարնի 12. Քարինջ 13. Օձուն 	<ol style="list-style-type: none"> 1. Ազատան 2. Ամասիա 3. Աշոցք 4. Արևիկ 5. Բանդիվան 6. Բենիամին 7. Գետափ 8. Զույգաղբյուր 9. Իսահակյան 10. Կապս 11. Ղարիբջանյան 12. Մայիսյան 13. Մարմաշեն 14. Սառնաղբյուր 15. Սպանդարյան 16. Վարդաղբյուր 17. Վարդաքար 18. Փանիկ 	<ol style="list-style-type: none"> 1. Ազատամուտ 2. Աչաջուր 3. Գանձաքար 4. Գետահովիտ 5. Գոշ 6. Թեղուտ 7. Լուսաձոր 8. Խաշթառակ 9. Հաղարծին 10. Սևքար 11. Վազաշեն 12. Վարագավան 13. Տավուշ

ՀԱՎԵԼՎԱԾ 2.



Ռազմավարական քաղաքականություններն ամփոփող հիմնական ռազմավարական փաստաթղթերը


1. ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագիր, ՀՀ կառավարության 18.08.2021թ. N 1363-Ա որոշում:
2. ՀՀ աշխատանքի և սոցիալական պաշտպանության 2022-2026թթ. ռազմավարություն, նախագիծ, առ՝ 01.09.2022թ.:
3. «ՀՀ կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին ՀՀ օրենք, 17.12.2022թ.:
4. Երեխայի իրավունքների պաշտպանության 2022թ. տարեկան ծրագիր և միջոցառումների ցանկ, ՀՀ կառավարության 30.09.2021թ. N 1622-Լ որոշում:
5. Երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության պետական աջակցության 2020-2023թթ. ծրագրեր, ՀՀ կառավարության 14.05.2020թ. N 968-Լ որոշում:
6. Երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացմանն ու ներդաշնակ զարգացմանն ուղղված 2020-2023թթ. համալիր ծրագիր և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույց, ՀՀ կառավարության 02.04.2020թ. N 432-Լ որոշում:
7. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2022թ. տարեկան ծրագիր և միջոցառումների ցանկ, ՀՀ կառավարության 30.09.2021թ. N 1621-Լ որոշում:
8. Տարեցներին մատուցվող խնամքի ծառայությունների բարելավման և համայնքապետական ծառայությունների ներդրմանն ու զարգացման ծրագիր և դրա իրականացումն ապահովող 2021-2023թթ. պլան-ժամանակացույց, ՀՀ կառավարության 08.04.2021թ. N 498-Լ որոշում:
9. Ծերացման հետևանքների հաղթահարման և տարեցների սոցիալական պաշտպանության ռազմավարություն, ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 20 արձանագրային որոշում:
10. Զբաղվածության կարգավորման 2022թ. պետական ծրագիր և միջոցառումների ցանկ, ՀՀ կառավարության 30.09.2021թ. N 1589-Լ որոշում:
11. «Աշխատիր, Հայաստան» ռազմավարություն, դրա գործողությունների շրջանակ, ՀՀ կառավարության 05.12.2019թ. N 1753-Լ որոշում:
12. ՀՀ-ում գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023թթ. ռազմավարություն և միջոցառումների ծրագիր, ՀՀ կառավարության 19.09.2019թ. N 1334-Լ որոշում:
13. ՀՀ գյուղատնտեսական ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030թթ. ռազմավարություն և ռազմավարության կատարմանն ուղղված 2020-2022թթ. միջոցառումների ծրագիր, ՀՀ կառավարություն 19.12.2019թ. N1886-Լ որոշում:
14. Բնակարանների և անհատական բնակելի տների էներգաարդյունավետ վերանորոգման աշխատանքների պետական աջակցության ծրագիր, ՀՀ կառավարության 15.04.2022թ. N 520-Լ որոշում:

ՀԱՎԵԼՎԱԾ 3.

ՀՀ ԱՍՀՆ Զբաղվածության ծրագրի կառուցվածքը և ֆինանսավորման ծավալները 2020-2022թթ.

Դասիչ	Ծրագիր/միջոցառում	2020	2021	2022*
		մլն դրամ		
1088	Զբաղվածության ծրագիր	1,942	1,702	1,856
11001	Գործազուրկների, աշխատանքից ազատման ռիսկ ունեցող, ինչպես նաև ազատագրված ձևով պատիժը կրելու ավարտին վեց ամիս մնացած աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում	40.3	40.5	-
11004	Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության տրամադրում ծրագրի ուսուցման կազմակերպման և խորհրդատվական ծառայություններ	5.9	1.7	-
11006	Վարձատրվող հասարակական աշխատանքների իրականացման ապահովում	0.1	-	0.1
11007	Հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների համար դասընթացների կազմակերպում	2.2	2.6	-
11008	Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող «Աշխատանքի էլեկտրոնային Բորսա» դրամաշնորհային ծրագիր	-	-	69.9
12001	Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության տրամադրում	33.8	3.4	0.1
12002	Աշխատաշուկայում անմրցունակ ազատագրվող վայրերից վերադարձած, հաշմ. ունեցող, ինչպես նաև «հաշմ. ունեցող երեխա» կարգ. ունեցող անձանց աշխատ. տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի փոխ. և հաշմ. ունեցող անձին ուղեկցողի համար դրամական օգնության տրամադրում	14.0	13.6	14.5
12003	Գործազուրկին այլ վայրում աշխատանքի տեղավորման աջակցության տրամադրում	22.0	9.0	0.9
12004	Ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրում	148.1	139.0	148.1
12005	Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրում	102.4	69.9	102.0
12006	Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրում	459.6	175.0	180.7
12008	Գործազուրկների, աշխատանքից ազատման ռիսկ ունեցող, ինչպես նաև ազատագրված ձևով պատիժը կրելու ավարտին վեց ամիս մնացած աշխատանք փնտրող անձանց կրթաթոշակի տրամադրում	44.3	39.2	-
12009	Մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող անձանց, երեխայի մինչև երկու տարին լրանալը աշխատանքի վերադառնալու դեպքում, երեխայի խնամքն աշխատանքին զուգահեռ կազմակերպելու համար աջակցության տրամադրում	393.3	475.2	393.3
12010	Աշխատաշուկայում անմրցունակ և մասնագիտություն չունեցող մայրերի համար գործատուի մոտ մասնագիտական ուսուցման կազմակերպում	75.2	35.4	-
12011	Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովում	83.6	-	83.6
12013	Աշխատաշուկայում անմրցունակ անձանց անասնապահությամբ զբաղվելու համար աջակցության տրամադրում	517.0	413.0	451.0
12014	Ռազմական դրությամբ պայմանավորված վարձատրվող հասարակական աշխ. կազմակերպ. միջոցով Ադրբեջանի կողմից 2020 թ. սեպտ. 27-ին սանձագերծված պատերազմի հետևանքով տեղահանված և փաստ. ՀՀ գտնվող Արցախի Հանր. գործազուրկ քաղաքացիների ժամանակավոր զբաղվածություն. ապահովում	-	27.9	3.6
12015	Ռազմական դրությամբ պայմանավորված՝ Ադրբեջանի կողմից 2020 թ. սեպտ. 27-ին սանձագերծված պատերազմի հետևանքով տեղահանված և փաստ. ՀՀ գտնվող Արցախի Հանրապետության գործազուրկ քաղաքացիների աշխատանքային փորձ ձեռքբերելու համար աջակցության տրամադրում	-	181.5	178.0
12016	Ռազմական գործողությունների հետևանքով վնասվածք (վիրավորում) ստացած և հաշմանդամություն ունեցող անձ ճանաչված նախկին զինծառայողների (նրանց հավասարեցված անձանց) աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին պետական աջակցության տրամադրում	-	0.1	0.3
12017	Աջակցություն կանանց ձեռներեցության խթանման և աշխատունակության բարձրացման նպատակով	-	75.0	-
12018	Ադրբեջանի կողմից 2016 և 2020 թվականներին սանձագերծված ռազմական գործողություններին մասնակցած գործազուրկ անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպման և զբաղվածության ապահովում	-	-	65.5
32001	Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող «Աշխատանքի էլեկտրոնային Բորսա» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում տեխնիկական հագեցվածություն	-	-	164.8

*Տարեկան ճշտված պլան՝ ինն ամիսների դրությամբ Ադրբայ՝ ՀՀ 2020թ. և 2021թ. պետական բյուջեի կատարման հաշվետվություններ, ՀՀ 2022թ. պետական բյուջեի ինն ամիսների կատարման հաշվետվություն



Տնտեսական զարգացման և
հետազոտությունների կենտրոն (EDRC)
+374(0) 55 540 289
info@edrc.am
www.edrc.am